

**Ապօրինի ֆինանսական հոսքերը և
ակտիվների վերականգնումը Արևելյան
գործընկերության տարածաշրջանում
կարիքների և առաջարկությունների քարտեզագրում**

**Ապօրինի ֆինանսական
հոսքերը և ակտիվների
վերականգնումը Արևելյան
գործընկերության
տարածաշրջանում**

կարիքների և առաջարկությունների
քարտեզագրում

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ

Այստեղ արտահայտված կարծիքները, բացահայտումները, եզրակացությունները և առաջարկությունները միշտ չէ, որ արտացոլում են ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտի (UNICRI), Եվրոպական Միության կամ որևէ այլ ազգային, տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպության տեսակետները: Սույն հրապարակումը չի հանդիսանում UNICRI-ի կամ ԵՄ-ի կողմից նման կարծիքների կամ եզրակացությունների հաստատում: Սույն հրապարակման մեջ օգտագործված անվանումները և նյութի ներկայացումը չեն ենթադրում ՄԱԿ-ի Քարտուղարության կողմից ցանկացած երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի, կամ դրա իշխանությունների իրավական կարգավիճակի կամ դրա սահմանների վերաբերյալ որևէ տեսակետի արտահայտում: Սույն հրապարակման բովանդակությունը կարող է մեջբերվել կամ վերարտադրվել՝ պայմանով, որ տեղեկատվության աղբյուրը նշվի:

Դպրևոր ծանոթություն: Թեև սույն զեկույցի համար հետազոտական աշխատանքի մեծ մասը կատարվել է նախքան 2021 թվականի ավարտը, ու թեպետ 2022 թվականի սկզբին տեղի ունեցել մի շարք քաղաքական փոփոխություններ, այդուհանդերձ, սույն զեկույցից բխող առաջարկությունները կարող են օգտակար լինել ԱյԳ երկրների պաշտոնատար անձանց և միջազգային շահագրգիռ կողմերի համար:

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

Սույն զեկույցը պատրաստվել է Եվրոպական Միության կողմից՝ Հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր տնօրինության միջոցով տրամադրված ֆինանսավորմամբ: 2020 թ. Եվրոպական Հանձնաժողովը և ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտը (UNICRI) համատեղ մեկնարկ տվեցին «Աջակցություն ԵՄ Արևելյան գործընկերության երկրներին ակտիվների վերականգնման գործընթացի ընդլայնման համար» նախաձեռնությանը՝ դժվարին մի ծրագիր, որի շրջանակում նախատեսվում է աշխատանք Արևելյան գործընկերության վեց երկրների ազգային իշխանությունների հետ: Ծրագրի հիմնական նպատակն է՝ կատարելագործել շահառու երկրների՝ կազմակերպված հանցավոր գործունեության հետ կապված ակտիվների արդյունավետ հետախուզման, առգրավման և բռնագրավման կարողությունները և տրամադրել փորձագիտական խորհրդատվություն հանցագործներին իրենց հանցավոր արարքներից ստացած եկամուտներից գրկելու բարոյական պարտքը կատարելու ուղղությամբ: UNICRI-ն իր երախտագիտությունն է հայտնում Եվրոպական Միության պատվիրակություններին, ինչպես նաև Արևելյան գործընկերության երկրների ազգային իշխանություններին՝ աջակցության և խորհրդատվության համար:

Առաջարկ

ԵՄ Արևելյան գործընկերության (ԱԳ) տարածաշրջանում ապօրինի ֆինանսական հոսքերը (ԱՖՀ-եր) կարող են գնահատվել տարեկան մոտավորապես 29 միլիարդ եվրո: Կապիտալի չփաստաթղթավորված փոխադրումները ԱԳ տարածաշրջանից (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա) ներս, տարածաշրջանից դուրս և տարածաշրջանի ներսում, լուրջ հետևանքներ են ունենում պետական եկամուտների և զարգացման հնարավորությունների վրա: ԱՖՀ-երը, մասնավորապես այնպիսիք, որոնք կապված են հանցագործությունների հետ, միջոցներ են խլում տնտեսությունից և կարող են կառավարություններին հարկադրել ավելի շատ ռեսուրսներ ուղղել հանցավոր գործողությունները կանխարգելելուն և դրանց արձագանքելուն: ԱՖՀ-երի հետևանքով առաջացող ռեսուրսների սպառումը և հարկային եկամուտների կորուստը լուրջ ազդեցություն են ունենում հիմնական հանրային ծառայությունների մատուցման վրա և խարխուլ են երկրների զարգացման հնարավորությունները: Չարգացող երկրներում 2005-2014 թվականների ընթացքում ԱՖՀ-երի ընդհանուր ծավալն ավելացել է տարեկան միջինը 7,2-ից 8,1 %-ով՝ 2014 թվականին հասնելով մոտավորապես 570 միլիարդ եվրոյից 895 միլիարդ եվրոյի:¹

ԵՄ-ի երկարաժամկետ քաղաքականության նպատակները, որոնք ուրվագծված են «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխումներ. ԱԳ գերակայությունները 2020 թ.-ից հետո՝ հոգուս բոլորի» նորացված օրակարգում, ընդգծում են տարածաշրջանային նոր նախաձեռնությունների և քաղաքականության կարևորությունը ԱՖՀ-երը նվազեցնելու, կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի հետ կապված ակտիվները վերականգնելու, ինչպես նաև ապօրինաբար ձեռքբերված ակտիվների հետախուզումը, սառեցումը, առգրավումը, բռնագրավումը և վերականգնումը պարզեցնելու և առավել արդյունավետ դարձնելու գործում: Մա պետք է ուղեկցվի այդ ակտիվների թափանցիկ կառավարման և լիկվիդացման մեխանիզմներով և լավագույն գործելակերպերի կիրառմամբ: Այս կարևոր քաղաքականությունները և մեխանիզմները ԱԳ երկրներին թույլ կտան վերականգնել ապօրինաբար ձեռքբերված միլիարդների ակտիվներ և դրանք անմիջականորեն ուղղել, օրինակ, ավելի շատ դպրոցներ, հիվանդանոցներ, համայնքային կյանիկաներ հիմնելուն, երիտասարդների զբաղվածության նախաձեռնություններին կամ հանրության համար այլ ենթակառուցվածքների կարիքներին:

Եվրոպական Միությունը (ԵՄ) և ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտը (UNICRI) ներկայացնում են «Ապօրինի ֆինանսական հոսքերը և ակտիվների վերականգնումը Արևելյան գործընկերության տարածաշրջանում. կարիքների և առաջարկությունների քարտեզագրում» ուսումնասիրությունը, որը լույս է սփռում չվերահսկվող ԱՖՀ-երի հետևանքով ԱԳ տարածաշրջանին պատճառված վնասների վրա: Ուսումնասիրությունը նաև ընդգծում է տարածաշրջանում միջսահմանային հարաբերությունների ամրապնդման կարևորությունը՝ ապօրինաբար ձեռքբերված ակտիվների վերականգնումն առավելագույնի հասցնելու նպատակով:

Սույն ուսումնասիրությունը պատրաստվել է 2021 թվականին հավաքված տվյալների և տեղեկությունների հիման վրա: Թեև այդ ժամանակից ի վեր տեղի են ունեցել քաղաքական և անվտանգային միջավայրի փոփոխություններ, սակայն ներկայացված առաջարկությունները արդիական են ԱԳ երկրների քաղաքականություն մշակողների և կիրառողների, ինչպես նաև միջազգային շահագրգիռ կողմերի համար:

ԵՄ-ի և UNICRI-ի հանձնառությունն է՝ պետություններին տրամադրել էական աջակցություն և փորձագիտական գիտելիքներ, որոնց կարիքը նրանք ունեն՝ ԱՖՀ-երին ավելի արդյունավետ կերպով արձագանքելու համար: Մշակելով և իրականացնելով արձագանքման առավել արդյունավետ մեխանիզմներ, որոնցից շատերը նշված են սույն ուսումնասիրության առաջարկությունների բաժնում, ԱԳ երկրները կկարողանան թույլացնել կազմակերպված հանցավորության ազդեցությունը, ինչպես նաև ներարկել անհրաժեշտ միջոցներ՝ զարգացման առաջնահերթ կարիքների բավարարման ուղղությամբ՝ իրենց քաղաքացիներին ավելի լավ ծառայելու համար:


Lawrence Meredith

Հարևանության և ընդլայնման
բանակցությունների գլխավոր տնօրինություն


Antonia Marie De Meo

UNICRI-ի
Տնօրեն

Բովանդակություն

Առաջարան	iii
Համառոտ ամփոփում	vi
Հիմնական եզրակացություններ և առաջարկություններ	vi

1

Ներածություն	xii
1.1 Ձեկույցի նպատակը և մեթոդաբանությունը	1
1.2 Ո՞րն է կազմակերպված հանցավոր գործունեության հետաքննության վերջնափուլը:	2
1.2.1 Հանցավոր ցանցերի կազմաքանդում	2
1.2.2 Ակտիվների հաջող վերականգնում	5
1.2.3 Ակտիվների վերականգնման շրջափուլը	9
1.2.4 1-ին փուլ: ակտիվների հետազոծում եվ բացահայտում	10
1.2.5 2-րդ փուլ: ակտիվների սառեցում եվ առգրավում	12
1.2.6 3-րդ փուլ: ակտիվների բռնագրավում	14
1.2.7 4-րդ փուլ: ակտիվների հայրենադարձում եվ վերականգնում	18
1.2.8 5-րդ փուլ: սոցիալական վերօգտագործում	19

2

ԱԼԳ տարածաշրջանում Եկամտաստեղծ լուրջ հանցագործությունների և ակտիվների վերականգնման ակնարկ	24
2.1 Արևելյան գործընկերություն	25
2.2 Եկամտաստեղծ լուրջ հանցագործությունները ԱԼԳ տարածաշրջանում և նման հանցագործությունների սահմանափակմանն ուղղված տարածաշրջանային առանցքային նախաձեռնությունները	27
Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն	30
Փողերի լվացում	32
Կաշառակերություն և կոռուպցիա	33
Կազմակերպված գույքային հանցագործություններ	33
Ապրանքների մաքսանենգություն	34

Հապավումներ և համառոտագրություններ	ix
Related Publications	56
AUNICRI-ի ՄԱՄԻՆ	62
Անչվող հրատարակություններ	61

3

Մոցիալական վերօգտագործման քաղաքականությունների և գործելակերպերի անհրաժեշտությունը ԱԼԳ տարածաշրջանում	42
Կրթության ոլորտ	44
Առողջապահության ոլորտ	45
Աջակցություն քրեական արդարադատության հետաքննություններին աջակցող անձնակազմին	46
Աջակցություն ԱԼԳ տարածաշրջանի դատական համակարգին և ոստիկանությանը	48
Կարևորագույն նախագծերի ֆինանսավորում	49
Նվազագույն աշխատավարձը ԱԼԳ ողջ տարածաշրջանում	51

4

Առաջարկություններ	52
--------------------------	-----------

Համառոտ ամփոփում

ԱԳ տարածաշրջանում ապօրինի ֆինանսական հոսքերը կարող են գնահատվել տարեկան մոտավորապես 29 միլիարդ եվրո:² Այս ապօրինի կերպով ձեռքբերված ակտիվներն առգրավելու համապարփակ քաղաքականության և մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում է զարգացմանը և ստեղծում միջավայր, որտեղ կազմակերպված հանցավորությունը կարող է ծաղկել: Հաշվի առնելով, որ կազմակերպված հանցավոր խմբերը հաճախ զբաղվում են ապօրինի գործունեության մի քանի ձևերով (օրինակ, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն և փողերի լվացում, կամ թերևս ծխախոտի մաքսանենգություն և կոռուպցիա), Պետությունների արձագանքներն այս գործողություններին պետք է կրեն ամբողջական բնույթ և հաճախ կարիք ունեն առավել արդյունավետ միջսահմանային գործակցության: ԱԳ տարածաշրջանը կարող է օգուտ քաղել համապարփակ և ժամանակակից քաղաքականությունների որդեգրումից, որոնք խրախուսում են միջկառույցային գործակցությունը, մասնավորապես ապօրինաբար ձեռքբերված ակտիվների հետախուզման, առգրավման և բռնագրավման, տեղեկատվության փոխանակման և միջսահմանային

հարաբերությունների ամրապնդման գործում: Մեխանիզմների և կազմակերպությունների ավելի լայն կիրառումը, ինչպիսիք են Եվրոպոլը, ԻՆՏԵՐՊՈԼ-ը, ինչպես նաև Ոստիկանության եվրոպական քոլեջի (CEPOL) միջոցով ուսուցումը նույնպես կնպաստեն ապօրինի ֆինանսական հոսքերը զսպելու գործում ավելի մեծ հաջողությունների հասնելուն, ինչպես նաև կթուլացնեն կազմակերպված հանցավոր գործունեության կոռուպցիոն ազդեցությունը:

Թեպետ ԱԳ երկրները կարևոր արդյունքների են հասել ապօրինաբար ձեռքբերված ակտիվները վերականգնելու ուղղությամբ (օրինակ, Ուկրաինայի՝ քաղաքացիական վարույթով բռնագրավման առաջին դեպքը 2021 թվականին), ընդհանուր տարածաշրջանային ռազմավարության իրականացումը և գործառնական արձագանքը, ինչպես նաև տարածաշրջանային կամ ազգային օրենսդրության՝ ԵՄ-ի հետ հնարավորինս ներդաշնակեցումը շահեկան կլինի ապօրինաբար ձեռքբերված ակտիվների հաջողությամբ հետագծման, սառեցման, առգրավման, բռնագրավման և վերադարձի համար:

Հիմնական եզրակացություններ և առաջարկություններ

➤ Տարածաշրջանում ապօրինի ֆինանսական հոսքերի պատճառով կորսված մոտ 29 միլիարդ եվրոյի միայն 10 %-ի առգրավումը և բռնագրավումը կծածկեր ավելի քան 6000 ուսուցչի աշխատավարձի ծախսերը ԱԳ ողջ տարածաշրջանում տասը տարվա ընթացքում՝ ազգային միջին աշխատավարձից 20 %-ով ավելի բարձր աշխատավարձի չափով: Հավելումն, դա կֆինանսավորեր ավելի

քան 20 000 համակարգիչների գնումը աշակերտների և ուսուցիչների համար ողջ տարածաշրջանում, ինչպես նաև կծածկեր հազարավոր աշակերտների դպրոցական սննդի ծախսերը (որոնք հաճախ վճարվում են պետական միջոցների հաշվին):

➤ Նույն կերպ, այս գումարը կարող էր օգտագործվել ԱԳ ողջ տարածաշրջանում ավելի քան 6000 ոստիկանի և 3000 դատավորի

աշխատավարձերը վճարելու համար՝ 20%-ով ավելի բարձր աշխատավարձի չափով՝ համապատասխանաբար 20 և 15 տարի: Սա ավելի մեծ թվով շահադրդված (մոտիվացված և բարձր որակավորում ունեցող երիտասարդների համար գրավիչ կդարձնեն որոտում աշխատելը:

- Եթե ուղղվեն քրեական և ֆինանսական հետաքննությունների որակի բարելավմանը, սպա վերականգնված ակտիվները կարող են ծածկել 1600 հոգեբանի (գոհերի աջակցության խորհրդատուների), թարգմանիչների և ֆինանսական վերլուծաբանների միջին աշխատավարձը ԱԳ տարածաշրջանում՝ 10 տարվա ընթացքում: Ֆինանսական վերլուծության խթանումը և զուգահեռ ֆինանսական հետաքննությունների ընդունումը որպես ստանդարտ գործելակերպ բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են լուրջ եկամուտներ ստեղծող

հանցագործություններին, հավանաբար լուրջ հարված կհասցնեն կազմակերպված հանցավոր գործունեությանը տարածաշրջանում:

- Անհրաժեշտ է դիտարկել ողջ տարածաշրջանում ակտիվների բռնագրավման քաղաքացիական վարույթի և առանց պատժամիջոցի առգրավման այլ մեխանիզմների ստեղծումը և լայնորեն կիրառումը: Սա պետք է ներառի այնպիսի քաղաքականությունների ընդունում, որոնք թույլ կտան քաղաքացիական բռնագրավման վարույթ՝ անկախ որևէ առկա քրեական գործից:
- ԱԳ երկրները պետք է դիտարկեն միջսահմանային երկխոսության ամրապնդումը և տեղեկությունների կանոնավոր փոխանակումը՝ հատկապես այն ակտիվների հետախուզման, առգրավման և բռնագրավման

Տարածաշրջանում ապօրինի ֆինանսական հոսքերի պատճառով կորսված մոտավորապես 29 միլիարդ եվրոյի ընդամենը 10 %-ի հաջողությամբ վերականգնումը

կծածկել ավելի քան

6000 ուսուցչի

աշխատավարձի ծախսերը


տասը տարի շարունակ ԱԳ ողջ տարածաշրջանում

կարող էր օգտագործվել ավելի քան

6000 ոստիկանի և 3000 դատավորի

աշխատավարձերը վճարելու համար ԱԳ ողջ տարածաշրջանում՝ 20%-ով ավելի բարձր

աշխատավարձի չափով՝ համապատասխանաբար 20 և 15 տարի



առնչությամբ, որոնք կարող են կապված լինել լուրջ եկամուտներ ստեղծող հանցագործությունների հետ: Սա ներառում է ԵՄ Անդամ Պետությունների, գործակալությունների և կառույցների կիրառած գործելակերպերից օգտվելը, ինչպիսիք են Եվրոպոլը, Եվրոպական հանրային դատախազությունը (EPPO) և ԵՄ քրեական արդարադատության ոլորտում համագործակցության «Եվրոջասթ» (Eurojust) գործակալությունը: Ապացուցված է, որ տարածաշրջանային ուսուցման, ուսումնական այցերի և կարողությունների զարգացման միջոցառումների կիրառման ավելացումը, որոնք նպաստում են գործընկերների հետ աշխատանքային հարաբերությունների ամրապնդմանը, օրինակ, ոստիկանության, դատախազների, դատավորների և ֆինանսական հետախուզության մարմինների պաշտոնատար անձանց և հարևան երկրներում համապատասխան կառույցների և պաշտոնատարների միջև, շոշափելի արդյունքներ է տալիս կազմակերպված հանցավորության ազդեցության թուլացման և ապօրինաբար ձեռքբերված ակտիվների վերադարձման գործում:

➤ Այժմ երկրները պետք է ուշադրություն դարձնեն մասնագիտացված դատախազությունների ստեղծմանը և մասնագիտացած դատավորների պատրաստմանը՝ դյուրացնելու կազմակերպված հանցավոր գործունեության (կամ եկամտաստեղծ այլ լուրջ հանցագործությունների, օրինակ, կոռուպցիայի) հետ կապված գործերով վճռի կայացումը՝ առավել արդյունավետ կերպով նման հանցագործությունների հետ կապված ակտիվների առգրավման և բռնագրավման օրդերներ տրամադրելու լիազորություններով: Նման լիազորությունները պետք է ներառեն ակտիվների բռնագրավման օրդեր տրամադրելու հնարավորությունը, եթե ապացուցվի, որ դրանք կապված են ընդհանրապես հանցավորության հետ, և պարտադիր չէ, որ կապված լինեն կոնկրետ օրը կատարված կոնկրետ հանցագործության հետ: Պետք է բացառություններ արվեն երրորդ կողմի բարեխիղճ շահառուների համար, ովքեր ստացել կամ գնել են գույք՝ առանց ողջամիտ իմացության, որ այդ ակտիվները հանցավոր գործունեության արդյունք են:

Հապավումներ և համառոտագրություններ

ՀՀԳ	ՀՀ դրամ
ՓԼԳՊ	փողերի լվացման դեմ պայքար
ՀԳԿ	Հակակոռուպցիոն գործողությունների կենտրոն (AntAC)
ARIN	Ակտիվների վերականգնման միջգերատեսչական ցանց
ԱԿՎԳ	Ակտիվների վերականգնման և կառավարման ազգային գործակալություն
ԱՎԳ	Ակտիվների վերականգնման գրասենյակ (ARO)
ԱՄ	ադրբեջանական մանաթ
ԲՌ	բելառուսական ռուբլի
ՔԱՎԳ	Հանցավոր ծագում ունեցող ակտիվների վերականգնման գործակալություն (CARA)
ՄԻՊՈԼ	Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալություն
ՔՀԿ	քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ԵԱԽ	Եվրասիական խումբ
ԱԼԳ	Արևելյան գործընկերություն
EaP-RAN	Արևելյան գործընկերության ռիսկերի վերլուծության ցանց
ԹԹՄԵԿ	Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի եվրոպական կենտրոն
EMPACT	Քրեածին սպառնալիքների դեմ պայքարի եվրոպական բազմադիսցիպլինար հարթակ
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
EPPO	Եվրոպական հանրային դատախազություն
ԵՄ	Եվրոպական Միություն
EU4MD	«ԵՄ-ն թմրամիջոցների մոնիտորինգի համար»
EUBAM	Մոլդովայում և Ուկրաինայում Եվրամիության սահմանային աջակցության առաքելություն
EUR	Euro
Եվրոջասթ	Եվրոպական Միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալություն
Եվրոպոլ	Եվրոպական Միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալություն
ՖԱԹՖ	Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ
ՖՀՄ	Ֆինանսական հետախուզության մարմին
ՖՐՈՆՏԵՔՍ	Սահմանապահ ծառայության և առափնյա պահպանության եվրոպական գործակալություն

ՄԲՖ	ֆունտ ստեռլինգ
ՎԼ	վրացական լարի
GFAR	Ակտիվների վերականգնման գլոբալ հարթակ
ՍՀԿ	սահմանների համալիր կառավարում
ԱՖՀ-եր	սպորինի ֆինանսական հոսքեր
ԻՆՏԵՐՊՈՒԼ	Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպություն
JAD	Համատեղ գործողությունների օր
ԻՄ	իրավապահ մարմին
ՌԼ	ռումինական լեյ
ՓԼ	փողերի լվացում
ՓԻՕ	փոխադարձ իրավական օգնություն
ՄԼ	մոլդովական լեյ
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ԱԺ պատգամավոր	Ազգային ժողովի պատգամավոր
ՈւԱՀԲ	Ուկրաինայի Ազգային հակակոռուպցիոն բյուրո
ԿԿԱԳ	Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության (NAPC)
ԱԲԿ-ներ	Ազգային բյուրոների կենտրոններ (NBC)
ԱՄԳ	առանց մեղադրական դատավճռի
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ԱՀՄ	ազգային հղման մեխանիզմ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՕԼԱՖ	Իտալիայի դեմ պայքարի եվրոպական գրասենյակ
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՄՀԳ	Մասնագիտացված հակակոռուպցիոն դատախազության կողմից (SAPO)
ԿԶՆ-ներ	Կայուն զարգացման նպատակներ
ՓՄԶ	Փոքր և միջին ձեռնարկություններ
SOCTA	Լուրջ և կազմակերպված հանցավորության սպառնալիքների գնահատում
StAR	Գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնություն
ՄԹ	մարդկանց թրաֆիքինգ
ԱԹ	անձանց թրաֆիքինգ
TOPCOP	Ուսուցում և գործառնական գործընկերություն ընդդեմ կազմակերպված հանցավորության
ԹԶՊԱ	Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության ակտ

ՈւԳ	ուկրաինական գրիվնյա
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն
ՄԱԿ-ի ԿԳԿ	ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա
UNICRI	ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտ
ԱՄՆԳ	ԱՄՆ դոլար
ՄԱԿ-ի ԱԿՀԿ	«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա
ԶՈՒՕ	չբացատրվող ունեցվածքի օրդեր
ԱԱՀ	ավելացված արժեքի հարկ
ՀՄԿ	Համաշխարհային մաքսային կազմակերպություն
ՎՑ	վերահսկվող ցուցակ



01.

Ներածություն

1.1 Չեկույցի նպատակը և մեթոդաբանությունը

Մույն զեկույցում ուշադրությունը սևեռված է Եվրոպական Միության Արևելյան գործընկերության (ԱԳ) տարածաշրջանում եկամտաստեղծ լուրջ հանցագործություններին՝ նպատակ ունենալով մշակել համապատասխանեցված առաջարկություններ, որոնք կարող են օգտակար լինել տարածաշրջանի բոլոր երկրների համար և կնպաստեն նման հանցագործությունների հետ կապված ակտիվների ազդարարման և բռնագրավման արդյունքների բարելավմանը: Չեկույցը նպատակ ունի նաև շարադրելու հիմնական առաջարկություններ, որոնք կխրախուսեն ողջ տարածաշրջանում քաղաքականությունների ընդունումը՝ վերականգնված ակտիվներն ուղղելու զարգացման բարձր առաջնահերթություն ունեցող կարիքներին, ինչպիսիք են առողջապահության կամ կրթության ոլորտների կարիքները:

Հանցավոր ցանցերի կազմաքանդումը և ակտիվների վերականգնման բարելավումը ֆինանսական հանցագործությունների հետաքննության վերջնափուլերն են: Հաշվի առնելով կազմակերպված հանցավոր գործունեության լայն ընդգրկումը, ներառյալ միջսահմանային տարրը, սույն ուսումնասիրությունը (քարտեզագրումը) հետամուտ է ձևակերպելու առաջարկություններ, որոնք կարող են օգնել պետություններին՝ առավել ամբողջական կերպով արձագանքելու բազմաշերտ մի երևույթի: Արևելյան գործընկերության տարածաշրջանի վրա նման հանցավոր գործունեության տնտեսական և սոցիալական ազդեցության համառոտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետությունների արձագանքները չեն կարող իրականացվել միմյանցից մեկուսացված կերպով (օրինակ, ենթադրենք, սոսկ թմրամիջոցների ապօրինի շրջանառության

դեմ կամ մարդկանց թրաֆիքինգի դեմ քաղաքականության միջոցով)։ այս և կազմակերպված հանցավորության այլ ձևերի (ինչպես նաև կոռուպցիայի) վրա հարկ է գրոհել մեկից ավելի ճակատներով: Օրինակ, մարդկանց թրաֆիքինգը, ինչպես կազմակերպված հանցավոր գործունեության այլ ձևերի մեծ մասը, ծնունդ է և՛ փողերի լվացում, և՛ կոռուպցիա, ինչպես նաև սնուցում է հանցագործության այլ ձևեր: Համապատասխանաբար, մարդկանց թրաֆիքինգի՝ որպես առանձին խնդրի անդրադառնալը կարող է լինել անհեռատես մոտեցում, և ցանկացած արձագանք այդ սահմաններում հակված է ունենալու սահմանափակ ազդեցություն:

Մույն զեկույցում օգտագործված իմաստով «լուրջ» և (կամ) «կազմակերպված» հանցագործություն եզրույթն օգտագործված է նույն իմաստով, ինչ՝ «եկամտաստեղծ լուրջ հանցագործություն» եզրույթը, որը կարող է ներառել կոռուպցիոն գործողություններ: Մույն զեկույցն ընդգծում է, որ նորմը այլևս չպետք է լինի այն, որ կազմակերպված հանցագործության ցանկացած հետաքննություն չուղեկցվի զուգահեռ ֆինանսական հետաքննությամբ, քանի որ կազմակերպված հանցավոր գործունեության մեծ մասի շարժառիթը ֆինանսական եկամուտներն են: Ապօրինի բիզնեսներին պետք է վերաբերվել որպես այդպիսիների, և «փողի հետևից գնալը» պետք է լինի ստանդարտ իրավապահ և դատախազական գործելակերպ՝ եկամտաստեղծ հանցագործությունների հետ կապված գրեթե բոլոր դեպքերում: Փողը, շահույթները և ակտիվները կազմակերպված հանցավոր գործունեության (ինչպես նաև կոռուպցիայի բազմաթիվ ձևերի) կենսական արյունն են. առանց դրանց՝ նման հանցավոր գործունեությունը զգալիորեն թուլանում է:

Եվ այնուամենայնիվ, նման ակտիվների վերադարձը դեռ բավարար չէ. նույնքան կարևոր է այն, թե Պետությունն ինչպես է վարվում այդ վերականգնված ակտիվների հետ: Հետևաբար, սույն զեկույցում նաև ընդգծվում է, որ Պետությունները պետք է դիտարկեն այն քաղաքականությունների առաջնահերթություն տալը, որոնք վերականգնված ակտիվները ներարկում են զարգացման առաջնահերթ կարիքների բավարարման ուղղությամբ, և բերվում են օրինակներ, թե ինչպես կարելի է ներդնել վերականգնված ակտիվները: Վերականգնված ակտիվների բաշխման թափանցիկությունը արժանահավատություն է ստեղծում քաղաքացիների շրջանում, վստահություն է ներշնչում հաստատությունների արդյունավետ աշխատանքի նկատմամբ, ինչպես նաև մեծացնում է

քաղաքացիների պատրաստակամությունը՝ համագործակցելու իշխանություններին այնպիսի տեղեկություններ տրամադրելու հարցում, որոնք օգնում են բացահայտել ապօրինաբար ձեռքբերված ակտիվները:

Սույն ուսումնասիրության տվյալները հավաքվել են բաց աղբյուրների լայն շրջանակից՝ 2021 թվականի մայիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: Այս լույսի ներքո ընթերցողը պետք է նկատի ունենա, որ այդ ժամանակվանից ի վեր կարող են տեղի ունեցած լինել որոշ փոփոխություններ քաղաքականություններում և գործողություններում: Հավելումն, իրենց ներդրումն են ունեցել բազմաթիվ շահագրգիռ կողմեր, այդ թվում՝ ազգային պաշտոնատար անձինք, ինչպես նաև ԱլԳ տարածաշրջանում աշխատող միջազգային շահագրգիռ կողմերը:

1.2 Ո՞րն է կազմակերպված հանցավոր գործունեության հետաքննության վերջնափուլը:

1.2.1 Հանցավոր ցանցերի կազմաքանդում

Միջազգային իրավունքը իրավացիորեն ընդգծում է հանցավոր ցանցերի բացահայտման և վերացման անհրաժեշտությունը, այդ թվում, օրինակ, ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի³, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի, թմրամիջոցներին առնչվող ՄԱԿ-ի կոնվենցիաների գործիքների և մեխանիզմների, ինչպես նաև բազմաթիվ այլ դրույթներ և ուղեցույցների միջոցով⁴:

Այս գործիքներից շատերին ներհատուկ է փողերի լվացմանը, կամ, ավելի ճիշտ, կազմակերպված հանցավոր գործունեության ֆինանսական կողմին անդրադառնալու

անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, 1980-ականներից ի վեր մեծ ուշադրություն է դարձվել կասկածյալների ավանդական հետաքննություններին՝ նպատակ ունենալով նրանց մեղադրել և դատապարտել կոնկրետ հանցագործությունների համար՝ առանց ֆինանսական հանցագործությունների արդյունքամետ հետաքննության համարժեք շեշտադրման, թեև կազմակերպված հանցավոր գործունեության (և կոռուպցիայի) ձևերից շատերի, եթե ոչ մեծ մասի, շարժառիթը ֆինանսական եկամուտներն են: Թեև ավանդական քրեական հետաքննությունը անհատների դեմ շարունակում է կարևոր մնալ, մասնավորապես՝ զոհերի կանխարգելման համատեքստում, կարելի է ծանրակշիռ փաստարկներ բերել, որ առնվազն զուգահեռ ֆինանսական հետաքննությունները

(«փողի հետևից գնալը») պետք է ուղեկցեն կոնկրետ անձանց դեմ իրականացվող հետաքննություններին, ովքեր կասկածվում են որևէ եկամտաստեղծ լուրջ հանցագործության մեջ:

Իրավապահ մարմինների, այդ թվում՝ ոստիկանության, դատախազությունների և դատական մարմինների, ինչպես նաև այլ կառույցների, ինչպիսիք են ֆինանսական հետախուզության և հակակոռուպցիոն մարմինները, քաղաքականությունները և գործառնական գործելակերպերը պետք է առաջնորդվեն այն ենթադրությամբ, որ հանցավոր գործունեությունը սովորաբար միտված է շահույթին:

Կազմակերպված հանցավոր գործունեության հետ կապված ակտիվների ժամանակին հետագծումը, սառեցումը, առգրավումը և բռնագրավումը կարող է զգալիորեն խայթարել հանցավոր խմբավորումների գործունեությունը, որոնցից շատերը հարաճուն հաճախականությամբ գործունեություն են ծավալում տվյալ երկրի սահմաններից դուրս:⁵ Եկամտաստեղծ լուրջ հանցագործության հավանականության հետ կապված դեպքերում «փողի հետևից գնալն» օգնում է բացահայտել և քարտեզագրել հանցավոր ցանցերի հիմնական խաղացողներին և աստիճանակարգությունը (հիերարխիան), ներառյալ՝ անդրազգային տարածքում գործողներին:⁶ Գլոբալիզացիայի և համացանցի ի հայտ գալով, կազմակերպված հանցավոր խմբերն արագորեն էվոլյուցիայի են ենթարկվել և հարմարվել են: Գլոբալիզացիան ընդարձակում է մուտքը բազմաթիվ շուկաներ, և կազմակերպված հանցավոր խմբավորումները կարող են ընդլայնել իրենց հասանելիությունն ու ազդեցությունը, այդ թվում՝ իրենց կոռուպացնող ազդեցությունը:

Այս սպառնալիքին հակազդելու համար երկրները պետք է օգտվեն միջսահմանային գործիքներից և համագործակցության

մեխանիզմներից և հասկանան ապօրինաբար ձեռքբերված ակտիվների առգրավմանն առաջնահերթություն տալու կարևորությունը՝ որպես այդ ապօրինի բիզնեսների կազմաքանդման ստանդարտ գործառնական ընթացակարգ: Ազգային քաղաքականությունները և գործառնական գործելակերպերը (ինչպես նաև միջազգային և երկկողմ համաձայնագրերի օգտագործումը), որոնք արագացնում են անդրսահմանային համագործակցությունը ապօրինաբար ձեռքբերված ակտիվների հետագծման, սառեցման, առգրավման և բռնագրավման (հնարավոր է, նաև այդ ակտիվների համօգտագործման) ուղղությամբ, լուրջ հակակշիռ են ստեղծում կազմակերպված հանցավորության ներկայացրած սպառնալիքներին և կոռուպացնող ազդեցությանը: Համատեղ հետաքննությունները, հաճախակի երկխոսությունները և փորձի փոխանակումը հարևան Պետությունների, ինչպես նաև այլ իրավագործության տարածքների գործընկերների հետ՝ էական գործելակերպեր են և պետք է դիտարկվեն ավելի շուտ որպես նորմ, քան՝ բացառություն:⁷ Իր 40 հանձնարարականներում Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը (ՖԱԹՓ)⁸ ընդգծում է, որ երկրները պետք է ապահովեն փոխադարձ իրավական օգնության (ՓԻՕ) հնարավորինս լայն շրջանակ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված դեպքերի առնչությամբ, թեև չպետք է հասկանալ, որ սա բացառում է կազմակերպված հանցավոր գործունեության (կամ բարձր մակարդակի կոռուպցիայի) հետաքննությունները: Նաև չպետք է հասկանալ, որ սա բացառում է ոչ պաշտոնական միջսահմանային երկխոսությունները, որոնք կարող են նախորդել պաշտոնական ՓԻՕ հարցումներին (և գուցե անհարկի դարձնել դրանք): Նույն կերպ, չպետք է դիտարկել, թե դրանք սահմանափակվում են քրեական արդարադատության ոլորտով:



Երկրները պետք է դիտարկեն այնպիսի միջոցառումների ընդունումը, որոնք թույլ կտան բռնագրավել նման եկամուտները կամ գործիքները՝ առանց քրեական մեղադրական դատավճիռ պահանջելու (առանց մեղադրական դատավճռի բռնագրավում) կամ որոնք հանցագործից պահանջում են ցույց տալ գույքի օրինական ծագումը, որը ենթադրաբար ենթակա է բռնագրավման՝ այն չսփռվել, որ չսփռվել նման պահանջը համապատասխանում է իրենց ներպետական օրենսդրության սկզբունքներին:

ՖԱԹՖ-ի 4-րդ հանձնարարական, 3-րդ պարբերություն

Նման հանձնարարականները, ինչպես նաև միջազգային իրավունքի այլ կողմերը, ընդգծում են եկամտաստեղծ լուրջ հանցագործությունների հիմնական բաղադրիչի խախտման կարևորությունը և հորդորում են Պետություններին ինչպես քրեական արդարադատության ոլորտում, այնպես էլ դրա սահմաններից դուրս ընդունել միջոցառումներ ակտիվների վերականգնման նպատակով: Այս գործընթացն ավելի հաճախ ավարտվում է ներգրավվածների բացահայտմամբ՝ դյուրացնելով նման ցանցերի կազմաքանդումը:

Ըստ Եվրոպական Հանձնաժողովի, ֆինանսական հետաքննությունները պետք է իրականացվեն բոլոր հետաքննություններին զուգահեռ, որոնք վերաբերում են լուրջ հանցագործությունների ոլորտներին, այդ թվում՝ ահաբեկչությանը⁹: Այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտ է ֆինանսական քրեական վերլուծությունը և հետաքննությունն ընդունել որպես իրավակիրառ գործունեության իրականացման ստանդարտ գործելակերպ բոլոր լուրջ և կազմակերպված հանցավորության գործերում՝ անկախ

քրեական գործի հարուցումից կամ առկայությունից: Չուզահեռ ֆինանսական հետաքննությունների առավելությունները ներառում են կասկածվող անձանց, հայտնի հանցակիցներին և նրանց ակտիվները միմյանց կապելու, ինչպես նաև վկաներին և տուժածներին նույնականացնելու հնարավորությունը¹⁰: Որոշ կազմակերպություններ առաջարկել են հետաքննության մեխանիզմներ, որոնք բարելավում են ֆինանսական հետաքննությունները, այդ թվում՝ սուբյեկտների պրոֆիլները և ապացույցների մատրիցաները. առաջինները մեկտեղում են կասկածյալի վերաբերյալ բոլոր հիմնական տեղեկությունները (օրինակ, տարիքը, մատնադրոշմները, հայտնի հանցակիցներին) և մշտապես թարմացվում են նորագույն ֆինանսական և հետախուզական տվյալներով, մինչդեռ երկրորդները նպատակ ունեն ապահովելու, որ հետաքննության կիզակետում մնան ֆինանսական ասպեկտները, այդպիսով թիրախավորելով ֆինանսական «շարժիչը», որը կազմակերպված հանցավորության հիմնական նպաստող և խթանող գործոնն է¹¹:

Էլ. ՓԻՕ-ներ

ԻՆՏԵՐՊՈԼ-ը ԵՄ-ի հետ համատեղ ուսումնասիրել է փոխադարձ իրավական օգնության հարցումների էլեկտրոնային եղանակով փոխանցման օգտագործումը: Մա միջազգային գործակցությունն առավել ճկուն և արդյունավետ դարձնելու բազմաթիվ օգտակար եղանակներից մեկն է¹²:

Ամերիկյան պետությունների կազմակերպության Զրեական և արտահանձնման հարցերում փոխադարձ օգնության և կազմակերպության համար տեղեկությունների փոխանակման կիսազնդային ցանցը հարթակի օրինակ է, որը ներդրել է անվտանգության էլեկտրոնային հաղորդակցության համակարգ: Համակարգը հեշտացնում է փոխադարձ իրավական օգնության և արտահանձնման վերաբերյալ հաղորդակցությունը համապատասխան իրավապահ մարմինների միջև՝ կենտրոնական իշխանությունների հետ անվտանգ ակնթարթային էլեկտրոնային փոստի ծառայության և վիրտուալ հանդիպումների և համապատասխան փաստաթղթերի փոխանակման տարածքի միջոցով¹³:

Համաձայն «Զրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի, իրավաբանական օգնության խնդրանքները փոխանցվել էլեկտրոնային կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով՝ պայմանով, որ հայցող Կողմը պատրաստ է ցանկացած ժամանակ տրամադրել դրանց գրավոր արձանագրությունները և բնօրինակները¹⁴:

1.2.2 Ակտիվների հաջող վերականգնում

Ակտիվների առգրավումը կազմակերպված հանցավորության հետաքննության վերջնափուլի նույնքան կարևոր բաղադրիչ է: Հետաքննության փուլում կարող են ի հայտ գալ որոշ մարտահրավերներ, ինչպիսիք են այնպիսի ապացույցներ գտնելու դժվարությունները, որոնք ակտիվներն ուղղակիորեն կապում են կասկածյալներին, կամ որոշակի իրավախախտման արդյունքում առաջացած ուղղակի դրամական օգուտների հաստատման հետ կապված խնդիրները¹⁵: Հետաքննության միջոցով հանցագործության արդյունքում ստացված եկամուտները վերջնականապես նույնականացվելուց հետո երկրները պետք է կարողանան նախաձեռնել և հաջողությամբ ավարտել ակտիվների վերականգնման շրջափուլի հիմնական փուլերը:

Ակտիվների վերականգնման հիմնական նպատակը զսպումն է, կազմակերպված հանցավոր գործունեությունը և կոռուպցիան

ավելի բարձր ռիսկային և ավելի փոքր ցածր արդյունքներ տվող գործունեության վերածելը¹⁶: Միևնույն ժամանակ, ակտիվների հաջող վերականգնումը նշանակում է, որ կառավարությունները կարող են միջոցներ ներդնել դատական համակարգն ուժեղացնելու համար կամ, օրինակ, զարգացման առաջնահերթ ոլորտներում, ինչպիսիք են կրթության, առողջապահության և զբաղվածության ոլորտները¹⁷. սրանք գործոններ են, որոնք կարող են մեծացնել դիմակայունությունը կազմակերպված հանցավոր գործունեության կամ կոռուպցիայի նկատմամբ: Նման ներդրումները կարող են հանգեցնել ավելի ուժեղ օրենքի գերակայության և կառավարության աշխատանքի հանդեպ ավելի բարձր վստահության:

Այնուամենայնիվ, ակտիվների վերականգնման շրջափուլի ընթացքում գոյություն ունեն բազմաթիվ խոչընդոտներ, որոնք ավելի մանրամասնորեն կքննարկվեն ողջ զեկույցում: Ամենից հաճախ այս հարցերը գործնական բնույթի են և

կարող են լուծվել հաղորդակցության ոչ պաշտոնական ցանցերից ավելի շատ օգտվելու, միջկառույցային գործակցության բարելավման և խրախուսման, կամ ակտիվների բռնագրավման՝ առանց պատժամիջոցի մեխանիզմների ընդունման միջոցով:

Ակտիվների վերականգնումը, որը թե՛ բարոյական, թե՛ իրավական հրամայական է, պետք է անկյունաքար լինի կազմակերպված հանցավոր գործունեության դեմ ցանկացած հաջող պայքարում և կոռուպցիոն բազմաթիվ գործողությունների հակազդման գործում: Այնուամենայնիվ, ակտիվների գույտ վերականգնումը՝ առանց դրանց լիկվիդացման և սոցիալական վերօգտագործման օպտիմալացման քաղաքականության և գործելակերպերի, կարող է «ակտիվների վերականգնումը» դարձնել դատարկ կամ սնամեջ: ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտի (UNICRI) կողմից իրականացված լայնածավալ հետազոտությունը ցույց է տվել, որ ամեն տարի հանցավոր գործունեության հետևանքով կորսվող ապօրինի ֆինանսական հոսքերի (ԱՖՀ-եր)¹⁸ ընդհանուր գնահատված չափի միայն 10%-ի հաջող վերականգնումը, եթե վերահղվի զարգացման առաջնահերթ կարիքների բավարարմանը, մեծապես կնպաստի քաղաքացիների կյանքի որակի բարձրացմանը¹⁹:

Հանցավոր գործունեությունից բխող ԱՖՀ-երը վնասակար ազդեցություն են ունենում զարգացող երկրների վրա և հաճախ նշանակում են ավելի փոքրաթիվ հիվանդանոցներ, դպրոցներ, ավելի ցածր կենսաթոշակներ և աշխատանքի սակավ հնարավորություններ²⁰: Սա ավելի մեծ արժանահավատություն է ստեղծում ապօրինաբար ձեռքբերված

ակտիվների հետագծմանը, առգրավմանը, բռնագրավմանը և վերականգնմանը առաջնահերթություն տալու, ինչպես նաև այնպիսի քաղաքականությունների հաստատման կամ ամրապնդման հանդեպ, որոնք քաղաքացիներին ցույց են տալիս, որ վերականգնված ակտիվները ներարկվում են զարգացման առաջնահերթ կարիքների բավարարման ուղղությամբ:

Իրոք, քաղաքականություն մշակողները կարող են ակտիվների վերականգնումը (առգրավման և բռնագրավման արագացված մեխանիզմները ներառյալ) և միջսահմանային գործակցությունը դիտարկել որպես իրենց երկրներում զարգացման նախագծերն ամրապնդելու արժեքավոր և պատեհ եղանակներ: Այս համատեքստում կարևոր է, որ քաղաքականություն մշակողները լրացուցիչ ուշադրություն դարձնեն և շեշտը դնեն այնպիսի քաղաքականությունների վրա, որոնք առավել արդյունավետ են դարձնում և պարզեցնում են նման միջսահմանային գործակցությունը (ինչպես նաև միջկառույցային գործակցությունը երկրի ներսում)՝ ունենալով ապօրինաբար ձեռքբերված ակտիվները վերականգնելու և դրանք զարգացման նախաձեռնություններին ուղղորդելու գերնպատակ²¹:

Նման քաղաքականությունները պետք է ներառեն միջսահմանային համաձայնագրեր, որոնք ենթադրում են վերականգնված ակտիվների համօգտագործում՝ որպես գործակցությունը խրախուսելու միջոց: Նման մոտեցումն ընկած է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակ (ԿՁՆ) 16-ի հիմքում, որն ուղղված է խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը խթանելուն՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար արդարությունը հասանելի դարձնելուն, բոլոր մակարդակներում արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ ստեղծելուն²²:

Շամանակակից գործելակերպեր, որոնք արդյունավետ են ակտիվների վերականգնման գործում²³

Մեխանիզմների ընդունում, որոնք արագացնում են քրեական արդարադատության գործընթացները բռնագրավման համար: Օրինակ. (1) մեղքի ընդունման գործարքի, հաշտության համաձայնության մեխանիզմները կամ վեճի լուծման այլ տարբերակներ, երբ ամբաստանյալը վերադարձնում է ապօրինաբար ձեռքբերված ակտիվները ավելի մեղմ պատժի դիմաց դիմաց²⁴, (2) ընդլայնված բռնագրավում կիրառելու մեխանիզմներ²⁵, (3) համարժեք գույքի բռնագրավման մեխանիզմներ, որոնք դատարանների թույլ են տալիս օրդերներ արձակել «օրինական ճանապարհով ձեռքբերված» ակտիվների առգրավման և բռնագրավման համար, եթե Պետությունը (սովորաբար՝ դատախազները) ցույց տա, որ ձեռնարկել է բոլոր ողջամիտ միջոցները ապօրինաբար ձեռքբերված ակտիվները գտնելու համար, սակայն չի կարողացել գտնել²⁶:

Ակտիվների ոչ քրեական դատապարտման արդյունքում արագացված կարգով բռնագանձման մեխանիզմների ընդունում Գոյություն ունի քաղաքացիական վարույթով բռնագրավման մեխանիզմների ընդունման հստակ գործառնություն (ցանկացած քրեական վարույթներից դուրս և դրանցից անկախ), երբ ակտիվներն առգրավվում են և հաճախ անվանվում են որպես ամբաստանյալ քաղաքացիական կամ վարչական վարույթում (հայտնի են նաև որպես ըստ գործի էության՝ *in rem* վարույթներ), և երբ Պետությունը կրում է սկզբնական բեռը (օրինակ, ապացուցման բեռի փոխանցում տեղի չի ունենում)՝ ցույց տալու, որ ակտիվները կապված են հանցավորության որևէ ձևի հետ: Հաշվի առնելով այն փաստը, որ նման վարույթները դատարանին թույլ չեն տալիս որևէ մեկին ազատագրել, և միայն հարկ է լինում որոշել, թե ակտիվները կապված են արդյոք հանցավորության հետ, ապացուցման բեռը հաճախ ավելի փոքր է, առնվազն՝ ընդհանուր իրավունքի իրավագործություններում: Պետությունը հաճախ պետք է միայն ապացուցի, որ «ավելի հավանական է», որ ակտիվները կապված են հանցավոր գործունեության հետ, ոչ թե ցույց տա, որ ողջամիտ կասկածից վեր է, որ ակտիվները կապված են կոնկրետ հանցագործության հետ: Քաղաքացիական բռնագրավման վարույթները չեն ենթադրում քրեական պատասխանատվություն և ունեն այն առավելությունը, որ ակտիվները վերականգնվում են ամիսների ընթացքում՝ համեմատած փողերի լվացման՝ հաճախ մի քանի տարի տևող տիպիկ վարույթների հետ: Բազմաթիվ Պետություններ, որոնք ամենամեծ հաջողությունն են գրանցել կազմակերպված հանցավոր գործունեության կամ կոռուպցիայի մեջ ներգրավված անձանց ակտիվներն առգրավելու գործում, որդեգրել են քաղաքացիական վարույթով բռնագրավման որևէ ձև:

«Չբացատրվող» ունեցվածքի կամ ապօրինի հարստացման համար վարույթ հարուցելու մեխանիզմների ընդունում: Քաղաքացիական բռնագրավման մի փոքր փոփոխված տարբերակ է «չբացատրվող ունեցվածքի օրդերների (ՉՈՒՕ)» օգտագործումը, որտեղ Պետությունը պետք է ցույց տա, որ որևէ մեկի ակտիվները զգալիորեն գերազանցում են նրա հայտարարագրած եկամուտները (օրինակ, պետական պաշտոնյաների տարեկան հայտարարագրեր կամ ներկայացված հարկային հայտարարագրերի միջոցով): այս վարույթները կարող են տեղի ունենալ քրեական դատարաններում կամ քաղաքացիական վարույթներում՝ կախված ընդունված օրենսդրությունից, և, ինչպես քաղաքացիական բռնագրավման դեպքում, հաճախ չեն պահանջում քրեական մեղադրական դատավճիռ կամ նույնիսկ գուգահեռ քրեական վարույթ:


Հատուկ նախատեսված Ակտիվների վերականգնման գրասենյակների (ԱՎԳ-եր) հիմնում:

Ակտիվների վերականգնման ամենաարդյունավետ գրասենյակները մեկ հարկի տակ ունեն համապատասխան տվյալների շտեմարանների լայն շրջանակի (օրինակ, տրանսպորտային միջոցների ռեգիստր, բիզնես ռեգիստր, հարկային տեղեկություններ և այլն) հասանելիություն, ինչը թույլ է տալիս ստանալ անհատի և նրա ընտանիքի ակտիվների, ինչպես նաև հայտնի հանցակիցների տնօրինած ակտիվների միջկառույցային պատկերը. ակտիվների լվացումը հաճախ չի իրականացվում այդ ակտիվները տնօրինողների անունով: ԱՎԳ-երի լավագույն գործելակերպերը ցույց են տվել, որ կոնկրետ լիազորություն ունենալը՝ հետագծում և կառավարում, որն առանձնացված է բռնագրավումից, ամենից արդյունավետն է շահերի բախումից կամ նույնիսկ դրա ընկալումից խուսափելու համար: Ակտիվների առգրավման և բռնագրավման համար պատասխանատու կազմակերպությունը չպետք է լինի այն կազմակերպությունը, որը կառավարում է այդպիսի ակտիվները, թեև եղել են հաջող բացառությունների օրինակներ (օրինակ, Բելգիայում):

Գատական գործերում մասնագիտացած ֆինանսական վերլուծաբանների պատրաստում:

Ժամանակակից և արդյունավետ գործելակերպերը երաշխավորում են, որ որևէ մեկի ակտիվների հետաքննությունները նախաձեռնվում են ԲՈՒՈՐ այն քրեական հետաքննություններին զուգահեռ, որոնք վերաբերում են եկամտաստեղծ լուրջ հանցագործությաններին: Սա նշանակում է՝ ընդունել, որ նման հանցագործությունները պարզապես ապօրինի բիզնեսներ են, և դրանց դեմ արդյունավետ կերպով պայքարելու համար անհրաժեշտ է գործադրել նույնքան ջանքեր՝ առգրավելու այն ակտիվները, որոնք խթան են հանդիսանում նման վարքագծի համար: Սա զգալիորեն ավելի մեծ հաջողություն է բերում՝ ապահովելով, որ օրինախախտները շահույթ չստանան իրենց գործունեությունից: Այսպիսով, դատական ֆինանսական վերլուծաբանների հավաքագրումը և վերապատրաստումը՝ զուգահեռ ֆինանսական հետաքննությունները դյուրացնելու նպատակով, այլևս ոչ թե տարբերակ է, այլ՝ հրամայական:

Ակտիվների վերականգնման շրջափուլը



Միջկառույցային գործակցության հզոր մեխանիզմների մշակում: Ակտիվների վերականգնման փորձը ցույց է տալիս, որ թեև անհրաժեշտություն է զգացվում ավելի լավ ըմբռնելու ակտիվների հետագծման, սառեցման, առգրավման և բռնագրավման լավագույն գործելակերպերը, սակայն միջգերատեսչական համակարգման բացակայությունը պարզապես ավելի խոշոր, առավել չափով արգելակող գործոն է: Սա հաճախ հետևանք է կառույցային լիազորությունների և դերերի վատ կառուցավորված և անհարկի կերպով համընկնող կառույցային լիազորությունների և դերերի, կամ միջկառույցային գործակցության խրախուսման վատ կամ գոյություն չունեցող մեխանիզմների, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից այլ կառույցների դերերի վատ ըմբռնման՝ այն գործընթացներում, որոնք անհրաժեշտ են հանցավորության հետ կապված ակտիվները հաջողությամբ առգրավելու և բռնագրավելու համար: Իր դերն ունի նաև կոռուպցիան և (կամ) այլ կառույցների հետ գործակցելու դժկամության մտայնությունը: Համապատասխանաբար, գրեթե յուրաքանչյուր երկրում անհրաժեշտ են միջկառույցային համագործակցությունը «խրախուսելու» ավելի ուժեղ միջոցներ: Դրանց թվում կարող են լինել, օրինակ, արդյունքամետ բյուջետավորումը պետական կառույցների համար, որը պայմանավորված է միջկառույցային գործակցության հետ կապված շոշափելի արդյունքներով, մասնավորապես՝ որակական տեղեկությունների ժամանակին փոխանակում, առգրավումների և (կամ) բռնագրավումների ծավալների ավելացում և (կամ) փողերի լվացման գործերով կայացված մեղադրական դատավճիռների կամ քաղաքացիական վարույթով բռնագրավման որոշումների քանակի ավելացում: Այս պահանջը կարող է բխել վերագրային մարմիններից կամ վերանայման մեխանիզմներից, որոնք ունեն հստակ և պարզորոշ կերպով սահմանված ուղեցույցներ և կարող են որոշակի չափորոշիչներով ստուգել, թե միջկառույցային գործակցությունը ճիշտ է արդյոք իրականացվում:

1.2.3 Ակտիվների վերականգնման շրջափուլը

Այս բաժնում ընթերցողին կառաջարկվի բացատրություն, թե ինչպես է գործում ակտիվների վերականգնման շրջափուլը՝ հետաքննության սկզբնական փուլից մինչև ակտիվների վերականգնման հիմնական նպատակը, որը վերականգնված և լիկվիդացված ակտիվների վերաներդրումն է զարգացման խիստ առաջնահերթ ոլորտներում կամ սոցիալական վերօգտագործումը այլ կերպերով: Կտրվի յուրաքանչյուր քայլի համառոտ նկարագրությունը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով ենթաթեմատիկ հարցերին, որոնք հաճախ ի հայտ են գալիս ստորև նշված փուլերից որևէ մեկի ընթացքում:

Օրինակ, ինքնիշխանության սկզբունքը կարող է խոչընդոտել և հետաձգել ակտիվների հետագծման և վերականգնման փուլերը, քանի որ այս սկզբունքը ենթադրում

է, որ օտարերկրյա իրավագործության ներքո գտնվող բոլոր առգրավված և բռնագրավված ակտիվները պետք է վերադարձվեն Հայցող Պետությանը. սա կարող է հանգեցնել Հայցվող Պետությունում (որտեղ գտնվում են ակտիվները) այդ ակտիվներն առգրավելու, բռնագրավելու և վերադարձնելու համար միջոցներ հատկացնելու խթանների (դրդապատճառների) նվազմանը²⁷:

Բացի դրանից, քաղաքացիական հասարակության հետ կանոնավոր կերպով խորհրդակցություններ չանցկացնելը կարող է հանգեցնել հանրային այն ընկալմանը, որ վերականգնված ակտիվներն ուղղորդվում են սխալ ուղղությամբ, չարաշահվում են կամ ընդհանրապես չեն օգտագործվում:

Համաշխարհային Բանկը իրավապահ մարմինների առջև ծառայած մարտահրավերները դասում է երեք կատեգորիայի²⁸.

- Ընդհանուր/կառույցային խոչընդոտներ՝ ակտիվների վերականգնման ընդհանուր համատեքստի հետ կապված հարցերում,
- Իրավական խոչընդոտներ, ներառյալ հստակ և միանշանակ իրավական դաշտի բացակայությունը, որոնք հաճախ անհնարին են դարձնում ակտիվների վերականգնումը,
- Գործառնական խոչընդոտներ, ներառյալ հաղորդակցության խնդիրները:


Միավորված Ազգերի Կազմակերպության «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» (ՄԱԿ-ի ԿԳԿ) Գլուխ V-ը սահմանում է գողացված ակտիվների վերադարձման շրջանակը՝ Մասնակից Պետություններին պարտավորեցնելով ապահովել միմյանց միջև գործակցության ամենաբարձր մակարդակ²⁹:

Ակտիվների վերականգնման հետ կապված մարտահրավերները հաղթահարելու վերաբերյալ առաջարկություններն ավելի հանգամանորեն կուսումնասիրվեն ողջ զեկույցում, որտեղ կներկայացվեն միջսահմանային գործակցություն հասանելի և բարելավված միջոցները:

1.2.4 1-ԻՆ ՓՈՒԼ: ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏԱԳԾՈՒՄ ԵՎ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ

Ակտիվների վերականգնման շրջափուլի առաջին քայլը գողացված ակտիվների հետ կապված հանցագործության հետաքննությունն է: Այս փուլը բաղկացած է ապացույցների, հետախուզական տվյալների և բոլոր օգտակար տեղեկությունների հավաքումից՝ հանցավորության հետ

Կասկածյալներին իրենց ակտիվների հետ կապելը տվյալների ռեյացիոն շտեմարանների օգտագործման միջոցով



կապված ակտիվները հետագծելու և բացահայտելու նպատակով: Դրանք կարող են ներառել ակտիվներ, որոնք ձեռք են բերվել հանցագործության հետևանքով (օրինակ, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտները), ինչպես նաև ակտիվներ, որոնք օգտագործվում են որպես հանցագործության կատարման գործիք (օրինակ, օրինական ճանապարհով ձեռքբերված միջոցներով գնված տրանսպորտային միջոց, որն օգտագործվում է թմրամիջոցներ տեղափոխելու համար թմրամիջոցների ապօրինի շրջանառության գործողություններում, կամ գուցե օրինականորեն ձեռքբերված հյուրանոց, որն օգտագործվում է մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների կողմից՝ սեռական շահագործման նպատակով)³⁰: Դրանք ներառում են կասկածյալի, ինչպես նաև նրա հանցակիցների վերաբերյալ բոլոր համապատասխան տվյալները, ովքեր կարող են լինել թե՛ ֆիզիկական անձինք, թե՛ բիզնեսներ: Քննիչները կարող են բախվել բազմաթիվ մարտահրավերների: Սա կարող է ներառել որոշակի տեսակի հանցագործությունների հետաքննության հետ կապված դժվարություններ, որոնք իրենց բնույթով նեղ մասնագիտական են և կարող են պահանջել ֆինանսական ոլորտի գիտելիքներ:

Քննիչները պետք է նաև որոշեն ակտիվների իրական շահառուներին, որոնք կարող են տնօրինվել բիզնեսների կամ այլ երրորդ անձանց կողմից, ովքեր կարող են չլինել գլխավոր կասկածյալը: Հաշվի առնելով, որ իրական շահառուն կարող է թաքնվել, օրինակ, կեղծ ընկերության հետևում, քննիչը պետք է բացահայտի, թե ով է իրականում օգտվում որոշակի բիզնեսի մեջ ներարկված միջոցներից³¹: Այս մարտահրավերը հաղթահարելու գործում հետաքննություններին օգնելու նպատակով Եվրամիությունը, ինչպես նաև այլ երկրներ

(օրինակ, Ուկրաինան) որդեգրել են իրական շահառուների պետական ռեգիստրներ ստեղծելու քաղաքականություն, օրինակ, բանկերից և այլ կազմակերպություններից պահանջելով ամբողջությամբ բացահայտել իրենց հաճախորդներին³²: Նման ռեգիստրները կարևոր դեր են խաղում փողերի լվացման դեպքերի բացահայտմանը և քրեական հետապնդմանն աջակցելու գործում³³, քանի որ նպաստում են իրական շահառուների վերաբերյալ ավելի մեծաքանակ որակական տեղեկությունների ժամանակին հասանելիությանը³⁴: Այս առումով առաջընթացի ամենանշանակալի քայլը ներկայացված է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ ԵՄ հինգերորդ հրահանգով», որը պահանջում է իրական շահառուների և կենտրոնական բանկի հաշիվների ռեգիստրների ստեղծում³⁵: Արդյունավետ իրականացումը և կոնկրետ արդյունքները տեսանելի կլինեն ժամանակին՝ հաշվի առնելով, որ ապօրինի ֆինանսական գործունեության մեջ ներգրավվածներից ոմանք կարող են տեղափոխվել այլ իրավագործության տարածքներ, որոնք չունեն իրական շահառուների ռեգիստրի խիստ համակարգեր³⁶:

Ակտիվների հետագծման ընթացքում ազգային իշխանությունները բախվում են այլ խնդիրների ևս, օրինակ, վատ հաղորդակցությունը և գործակցությունը, հատկապես, օրինակ, տեղեկությունների փոխանակման համար օգտագործվող համապատասխան կապուղիների առումով: Ազգային իշխանությունները կարող են նաև համակողմանի հետաքննություն իրականացնելու նպատակով այլ երկրների իրավապահ մարմինների հետ գործակցություն հաստատելու հարցում հանդիպել դժվարությունների, որոնք կարող են ավելի խորանալ Ակտիվների վերականգնման գրասենյակների (ԱՎԳ-ներ) գոյության և դերի մասին

անբավարար տեղեկացվածության պատճառով³⁷: Վերջապես, ավելի գործնական մարտահրավերներ կան դատարանների որոշումների վատ թարգմանության կամ իրավական փոխադարձ օգնության հարցումների անհասկանալի ձևակերպումների արդյունքում, որոնք հաճախ հետևանք են այն բանի, որ պարզապես նախքան հարցումը կազմելը օտարերկրյա իրավագործության տարածքների գործընկերների հետ ոչ պաշտոնապես չեն խորհրդակցում:

Հետագծմանը և բացահայտմանը խոչընդոտում է նաև իրավապահ մարմինների և Ֆինանսական հետախուզության մարմինների (ՖՀՄ-ներ) միջև սահմանափակ, կամ որոշ դեպքերում բացակայող համակարգումը: ՖՀՄ-ները հաճախ թերօգտագործվում են և բավականին հաճախ՝ թերֆինանսավորվում³⁸: Բացի դրանից, ՖՀՄ-ների կողմից պատրաստված հաշվետվությունները կարող են կառուցված չլինել այնպես, որ բավարար հիմք ծառայեն գործ հարուցելու համար կամ լավ հասկանալի լինեն իրավապահ մարմիններին. սա ևս հաճախ հրավապահ մարմինների (ԻՄ-ներ) և ՖՀՄ-ների միջև որակական բնույթի երկխոսության բացակայության արդյունք է: ՖՀՄ-ները պետք է հասկանան, թե ինչն է անհրաժեշտ և ինչը անհրաժեշտ չէ ոստիկաններին և դատախազներին (և, ի վերջո, դատավորներին), որպեսզի ապահովեն, որ իրենց արդյունքները հնարավորինս հիմնավոր լինեն՝ գործ հարուցելու համար: Նույն կերպ, ոստիկանությունը և դատախազական ծառայությունները պետք է ավելի լավ հաղորդեն ՖՀՄ-ներին տեղեկությունների այն տեսակների մասին, որոնք իրենց անհրաժեշտ են ֆինանսական հանցագործությունների հետաքննություններն առաջ տանելու և ակտիվների առգրավման և բռնագրավման օրդերներ ստանալու համար:

Հետագծման և բացահայտման լրացուցիչ, բայց ոչ պակաս կարևոր ասպեկտը ռեյյալիտի տվյալների շտեմարանի ծրագրակազմի ընդունումն ու արդյունավետ օգտագործումն է:

Նման ծրագրակազմերը (օրինակ, Analyst’s Notebook-ը և շատ ուրիշներ) և դրանց վերաբերյալ ուսուցումը ավելի հաջող արդյունքներ են տալիս հարյուրավոր կամ հազարավոր ֆինանսական կամ առնչվող գործարքները վերլուծելիս, ինչպես նաև բանկային հաշիվների միջև գործարքները ցուցադրող տեսանելիացված գրաֆիկա պատրաստելիս, ինչն իր հերթին հանգեցնում է ակտիվների համակողմանի հետագծմանը և հանցավոր գործողություններում ներգրավված այլ կասկածյալների հնարավոր բացահայտմանը: Ժամանակակից գործելակերպերը հստակ ցույց են տալիս, որ ոստիկանների, դատախազների և դատավորների համար ավելի դյուրին է հասկանալ գործը և դրա նեղ ֆինանսական գործարքները՝ ուսումնասիրելով կապերն ու գործարքները ցուցադրող տեսանելիացված գրաֆիկան: Ավելի հեշտ է ուսումնասիրել և հասկանալ գծապատկերը, քան՝ կարդալ 200 էջանոց գործը: Այս համատեքստում գրաֆիկական տեսանելիացման ծրագրակազմերի օգտագործումը (ՖՀՄ-ների և ԻՄ-ների կողմից) ակնհայտորեն օգնում է հետագծման և բացահայտման գործընթացին:

1.2.5 2-ՐԳ ՓՈՒԼ: ԱԿՏԻՎՆԵՐԻ ՍԱՌԵՑՈՒՄ ԵՎ ԱՌԳՐԱՎՈՒՄ

Երկրորդ քայլը վերաբերում է ակտիվների ստեղծմանը և առգրավմանը³⁹: Ստեղծումը և առգրավումը սահմանվում են որպես «գույքի փոխանցումը, փոխարկումը, տնօրինումը կամ տեղաշարժը ժամանակավորապես արգելելը կամ գույքի նկատմամբ ժամանակավորապես պահառություն կամ վերահսկողություն ստանձնելը՝

դատարանի կամ իրավասու այլ մարմնի կողմից տրված օրդերի հիման վրա⁴⁰»:
Քանի որ դատական օրդեր ստանալը կարող է որոշ ժամանակ պահանջել, և ապօրինաբար ձեռքբերված ակտիվները կարող են անհետանալ, որոշ պետություններ ապահովել են, որ թույլատրվի անհետաձգելի կերպով սառեցում և (կամ) առգրավում. օրինակ, Ուկրաինայում Ազգային հակակոռուպցիոն բյուրոյի (ՈւԱՀԲ) ղեկավարը և դատախազները կարող են կատարել անհետաձգելի առգրավումներ (ուժի մեջ է 48 ժամ), որից հետո անհրաժեշտ է դատարանի օրդեր: Սառեցման կամ առգրավման հետևանքով սեփականատերը չի կարող տնօրինել իր ակտիվները մինչև գործը փակվելը. ակտիվների ժամանակին առգրավումը հաճախ վճռորոշ է, քանի որ նման ակտիվների վերականգնումը կարող է զգալիորեն դժվարանալ, եթե ամբաստանյալին հնարավորություն տրվի տեղափոխել կամ փոխարկել այդ ակտիվները:

Այս փուլում գոյություն ունեն մի շարք գործնական արգելակիչներ: Եվրոջապժը նշում է մի շարք մարտահրավերներ, որոնց բախվում են ազգային իշխանությունները ակտիվների վերականգնման շրջափուլի այս փուլում⁴¹: Նախ, կիրարկման ազգային ընթացակարգերի կամ օրենսդրության

մեկնաբանման տարբերությունները կարող են անորոշություններ առաջացնել ակտիվների սառեցման կամ առգրավման օրդեր արձակելու պահանջների հարցում: Սա կարող է հանգեցնել հապաղումների, որոնց ընթացքում ամբաստանյալը կամ նրա հանցակիցները կարող են փոխանցել, փոխակերպել, տեղափոխել կամ տնօրինել կասկածելի ակտիվները: Շփոթություն կարող է առաջանալ նաև համապատասխան պաշտոնակիցներին կամ իրավասու ազգային մարմիններին իրենց իրազորության սահմաններից դուրս գտնելիս⁴², ինչպես նաև սառեցման օրդերների արձակումը մերժելու հիմքերի հետ կապված խնդիրներից, որոնք կարող են տարբեր լինել:

Ինչ վերաբերում է վերջին կետին, չկատարման հիմք կարող է հանդիսանալ այն, որ օտարերկրյա իրավագործության տարածքում անհրաժեշտ է ցույց տալ այլ մակարդակի ապացույցներ, որ ակտիվը կապված է հանցավորության հետ, կամ որ Հայցող Պետության մեջ (որից գողացվել են ակտիվները) արձակված սառեցման կամ առգրավման օրդերը կարող է վերցված լինել *in absentia* (հեռակա կարգով ընթացող) գործով, որտեղ ամբաստանյալը կարող է ծանուցում ստացած չլինել, որ իր նկատմամբ կա առկա քրեական գործ⁴³:

1.2.6 3-րդ ՓՈՒԼ: ԱԿՏԻՎՆԵՐԻ ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄ

Քրեական գործերով ամբաստանյալին դատապարտելու մասին որոշում կայացնելուց հետո դատարանները կարող են արձակել բռնագրավման համապատասխան օրդերներ⁴⁴ առգրավված ակտիվների սեփականությունը մշտապես փոխանցելով Պետությանը⁴⁵: Բռնագրավումը սահմանվում է որպես «դատարանի կամ այլ իրավասու մարմնի օրդերով գույքից մշտապես զրկում»⁴⁶: Բռնագրավումը կազմակերպված հանցավորության, ինչպես նաև բարձր մակարդակի կոռուպցիայի դեմ պայքարի ամենաարդյունավետ գործիքներից է: Այդուհանդերձ, բռնագրավումը չի սահմանափակվում և չպետք է սահմանափակվի քրեական արդարադատության ոլորտով:

Պետությունները, որոնք ավելի մեծ հաջողությունների են հասել հանցավոր գործունեության մեջ ներգրավված անձանց ակտիվներն առգրավելու գործում, այն պետություններն են, որոնք նաև

թույլ են տալիս բռնագրավում առանց մեղադրական դատավճռի⁴⁷. սա ներառում է քաղաքացիական բռնագրավման և վարչական բռնագրավման գործընթացները (օրինակ, չվճարված հարկերի արժեքին համարժեք ակտիվների բռնագրավման վարույթները հարկային մարմինների կողմից): Մեծ թվով իրավագործության տարածքներում նման վարույթները չեն պահանջում զուգահեռ քրեական վարույթ և, ի հակադրություն որոշ քննադատությունների, մեծ մասամբ չեն փոխանցում ապացուցման բեռը: Ակտիվների բռնագրավման լրացուցիչ՝ առանց պատժամիջոցի վարույթները կարող են ներառել այնպիսի վարույթներ, որոնցում պետական իշխանությունները կարող են ցույց տալ, որ անհատի (պետական պաշտոնյայի կամ մասնավոր անձի) կողմից տնօրինվող ակտիվները զգալիորեն գերազանցում են նրա հայտարարագրած ունեցվածքը, օրինակ, պետական պաշտոնյաների տարեկան հայտարարագրերի կամ մասնավոր անձանց տարեկան հարկային հաշվետվությունների միջոցով⁴⁸:

Բուլղարիա և Իտալիա: Որոշ եվրոպական օրինակներ Բուլղարիայում գույքը կարող է բռնագրավվել քաղաքացիական վարույթներով, և կան դրույթներ, որոնք թույլ են տալիս առգրավել չբացատրվող ունեցվածքը: Հաշվի առնելով, որ մեծ թվով իրավագործության տարածքներում քաղաքացիական դատավարության ժամանակ պահանջվող ապացույցների չափորոշիչն ավելի ցածր է, քան՝ քրեական գործերում, որտեղ պետությունը ցույց է տալիս, որ ավելի հավանական է, որ ակտիվները կապված են հանցավորության որևէ ձևի հետ, և որտեղ որևէ իրավատեր չի կարող դա հերքել, բռնագրավման օրդերներ կարելի է ստանալ ավելի դյուրին կերպով⁴⁹: Իտալիայի իրավական համակարգը մաֆիայի դեմ պայքարի դրույթների միջոցով թույլ է տալիս «կանխարգելիչ» բռնագրավում, մասնավորապես այն անձանց նկատմամբ, ովքեր «ըստ սովորության» ներգրավված են հանցավոր գործունեության մեջ⁵⁰:

Ուկրաինայի՝ քաղաքացիական վարույթով բռնագրավման առաջին դեպքը⁵¹

2019 թվականին Ուկրաինան ընդունեց թիվ 263-IX օրենքը «Ապօրինի գույքի բռնագրավման վերաբերյալ Ուկրաինայի որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին»՝ քաղաքացիական բռնագրավումը ներդնելով որպես երկրում ակտիվների վերականգնման մեխանիզմ: Քաղաքացիական բռնագրավման նպատակն է՝ նվազեցնել բռնագրավման երկարատև գործընթացը մի քանի տարվա ժամկետից մինչև ամիսներ տևող ժամկետի՝ միևնույն ժամանակ երաշխավորելով պատշաճ ընթացակարգը: Քաղաքացիական բռնագրավումը բարձրացնում է հանրության վստահությունը արդարադատության համակարգի արդյունավետության նկատմամբ և կարող է նպաստել զարգացման առաջնահերթ կարիքների ֆինանսավորմանը:

2021 թվականի օգոստոսին Ուկրաինայի Բարձրագույն հակակոռուպցիոն դատարանը կայացրել է քաղաքացիական բռնագրավման իր առաջին որոշումը: Գործը հետաքննվել է Մասնագիտացված հակակոռուպցիոն դատախազության կողմից (ՄՀԴ)՝ Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության (ԿԿԱԳ) և Ուկրաինայի Ազգային հակակոռուպցիոն բյուրոյի (ՈւԱՀԲ) հետ համատեղ: Հետաքննությունը ցույց է տվել պատգամավորի կողմից ավելի քան 1,2 միլիոն ՈւԳ անհիմն հարստացման ապացույցներ: Վճռով պահանջվել է պատգամավորից բռնագանձել 1,2 մլն ՈւԳ:

Ի լրումն միջազգային հանրության կողմից տրամադրվող կարևոր փորձագիտական օժանդակության ծրագրերի, Ուկրաինան ունի քաղաքացիական հասարակության արժեքավոր կառույց, որը քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ-ներ) ի գործ կդարձնի առանցքային դեր խաղալ կոռուպցիայի դեմ պայքարում: Հակակոռուպցիոն գործողությունների կենտրոնը (ՀԳԿ) զգալի ջանքեր է գործադրել Ուկրաինայում կոռուպցիայի և փողերի լվացման դեպքերի բացահայտման, քաղաքացիական բռնագրավման արժեքավորության մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ: Մույն զեկույցի կազմման օրվա դրությամբ ՀԳԿ-ը տեղեկություններ էր տրամադրել իշխանություններին՝ կոռուպցիոն գործողությունների հետ կապված զգալի քանակությամբ ակտիվների բռնագրավումը դյուրացնելու նպատակով: ՀԳԿ-ը նաև հանդես է եկել մի շարք առանցքային օրենքների ընդունման օգտին⁵²:

Քրեական վարույթով բռնագրավում

- ▶ Պահանջում է մեղադրական դատավճիռ կամ մեղադրանքի ընդունում
- ▶ Կարող է լինել սեփականության վրա հիմնված (հատուկ ակտիվ) կամ արժեքի վրա հիմնված (կոնկրետ անձին պատկանող գումարի չափը)
- ▶ Ապացույցի չափորոշիչները կարող են տարբեր իրավագործության տարածքներում լինել տարբեր
- ▶ Կարող է հնարավոր չլինել, եթե ամբաստանյալը մահանա կամ փախչի արդարադատությունից, թեև որոշ իրավագործության տարածքներ փոփոխել են իրենց օրենսդրությունը և թույլ են տալիս նման դեպքերում քրեական վարույթը շարունակել՝ որոշելու, թե պե՞տք է արդյոք բռնագրավման մասին օրդեր արձակել
- ▶ Որոշ իրավագործության տարածքներում դատարանները կարող են «ընդլայնված բռնագրավման» օրդերներ արձակել, եթե դատարանը ամբաստանյալին դատապարտում է եկամտաստեղծ լուրջ հանցագործության համար, ապա կարող է օրդեր արձակել՝ նշելով, որ ներկայում առկա է իրավական կանխավարկած, որ ամբաստանյալի ԲՈՒՈՐ ակտիվները, որոնք ձեռք են բերվել, օրինակ, նախորդ հինգից տասը տարվա ընթացքում, ենթադրաբար ձեռք են բերվել ապօրինաբար և ենթակա են բռնագրավման, ինչը ամբաստանյալը կարող է հերքել ապացույցներով⁵³:
- ▶ Որոշ իրավագործության տարածքներում դատարանները կարող են «համարժեք արժեքի» բռնագրավման օրդերներ արձակել՝ թույլ տալով իշխանություններին բռնագրավել ամբաստանյալի օրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվները, եթե Պետությունը կարող է ցույց տալ, որ արել է ողջամտորեն հնարավոր ամեն բան՝ ապօրինաբար ձեռքբերված ակտիվները գտնելու համար, սակայն չի կարողացել գտնել⁵⁴:
- ▶ Որոշ իրավագործության տարածքներ թույլ են տալիս քրեական վարույթներում իրականացնել ըստ գործի էության՝ in rem առգրավում՝ անկախ այն բանից՝ մեղադրական դատավճիռ կայացվե՞լ է, թե՛ ոչ:

Առանց մեղադրական դատավճի (ԱՄԳ) առգրավում / բռնագրավում

- ▶ Դատարաններին թույլ է տալիս բռնագրավման օրդերներ արձակել առանց մեղադրական դատավճի
- ▶ Հաճախ տեղի է ունենում առանձին վարույթի միջոցով՝ անկախ որևէ քրեական վարույթից
- ▶ Հաճախ ղեկավարվում է քաղաքացիական ընթացակարգով, որի դեպքում մեծ թվով իրավագործության տարածքներում ապացուցման բեռն ավելի փոքր է
- ▶ Նման վարույթներում դատարանը սահմանափակվում է որոշելով, թե ակտիվները կապվա՞ծ են արդյոք հանցավորության հետ. դատարանը որևէ մեկին ազատագրելու իրավասություն չունի (ինչը հիմնավորում է ապացուցման ցածր բեռը)
- ▶ Իրավագործության տարածքների մեծ մասում ապացուցման բեռը չի փոխանցվում. Պետությունը դարձյալ պետք է նախ ցույց տա, որ ակտիվները կապված են հանցավոր գործունեության հետ
- ▶ Այն իրավագործության տարածքներում, որտեղ կիրառվում է ապացուցման ավելի փոքր բեռ, քաղաքացիական բռնագրավման օրդերներ կարելի է ստանալ, նույնիսկ եթե քրեական վարույթը ամբաստանյալին անմեղ է ճանաչել
- ▶ Ի տարբերություն մեծ թվով քրեական վարույթների, քաղաքացիական բռնագրավումը կարող է կիրառվել այն դեպքում, երբ սեփականության իրավունքի տերը մահացել է կամ խուսափել է արդարադատությունից. ամբաստանյալը ակտիվներն են, ոչ թե անհատը:

Վարչական բռնագրավում

- ▶ Սովորաբար տեղի է ունենում առանց դատարանի որոշման անհրաժեշտության
- ▶ Հաճախ կապված է մաքսային օրենսդրության կիրարկման (չհայտարարագրված կամ արգելված իրերի առգրավում և բռնագրավում, ներառյալ թմրանյութերը կամ չհայտարարագրված կանխիկ գումարը) կամ չվճարված հարկերի հետ
- ▶ Արագ է և միջոցներ տնտեսող:

Ինչ վերաբերում է անդրասահմանային բռնագրավման արգելակիչներին, իրական դեպքերում տարածված խնդիրները հետևյալներն են.

1. նախքան փոխադարձ իրավական օգնության որևէ պաշտոնական հարցում կատարելը Հայցող Պետության իշխանությունների կողմից պարզապես ոչ պաշտոնապես կապ չհաստատելը Հայցվող Պետության ակտիվների վերականգնման համակարգողների հետ՝ գործը բացատրելու և օտարերկրյա իրավագործության տարածքի պաշտոնյաներին հարցնելու, թե ինչ տեղեկություններ կարող են իրենց պետք լինել՝ տվյալ օտարերկրյա իրավագործության տարածքում շրջանում բռնագրավման օրդեր ստանալու համար,
2. Հայցվող Պետության պաշտոնատարների կողմից փոխադարձ իրավական օգնության հարցումներին տրված ցածր առաջնահերթություն. բյուջեն կարող է սահմանափակ լինել, կամ որոշակի խնդրանքի հետ կապված կարող է հստակության անհրաժեշտություն լինել, բայց նրանք նախաձեռնողաբար չեն կապվում Հայցող Պետության պաշտոնատարների հետ՝ Պետական պաշտոնյաների հետ՝ անհրաժեշտ հստակություն ստանալու համար,
3. Հայցվող Պետության պաշտոնատարների կողմից իրականում գործակցելու ցածր դրդապատճառներ (ընկալումն այն է, որ տեղի չի ունենա բռնագրավված ակտիվների բաշխում և (կամ) Հայցվող Պետության կողմից ծախսված ռեսուրսների ծախքերի ծածկում),
4. մեկ իրավագործության տարածքում օգտագործվող եզրաբանությունը, որն օգտագործվում է դատավորի կողմից Հայցող Պետությունում բռնագրավման օրդեր արձակելու համար, կարող է տարբերվել Հայցվող Պետության

դատավորի կողմից սովորաբար օգտագործվող եզրաբանությունից և կարող է պատճառ դառնալ, որ Հայցվող Պետության դատավորը վարանի արձակել նույնպիսի օրդեր այն իրավագործության տարածքում, որտեղ գտնվում են ակտիվները,

5. Հայցող Պետությունում բռնագրավման օրդերի համար հիմք ծառայող ապացույցները կարող են բավարար չլինել Հայցվող Պետության դատավորի համար,
6. Հայցող պետության կողմից պատշաճ կերպով ցույց չտալը, որ ամբաստանյալն իրականում այլ անձի կամ կազմակերպության (օրինակ՝ կեղծ ընկերության կամ հավատարմագրային հիմնադրամի) տիրապետած գույքի իրական շահառուն է, և Հայցվող Պետության պաշտոնատար անձի կողմից այս հարցի վերաբերյալ հստակություն չփնտրելը,
7. Հայցվող Պետության կողմից գույքի բռնագրավման օրդեր արրձակելուց հրաժարվելը, երբ Հայցող Պետությունում մեղադրական դատավճիռը կայացվել է *in absentia* (հեռակա կարգով) վարույթի արդյունքում, անկախ նրանից, որ Հայցող Պետությունը ցույց է տալիս, որ ձեռնարկել է բոլոր ողջամիտ միջոցները՝ ամբաստանյալին տեղեկացնելու իր դեմ հարուցված քրեական վարույթի մասին, օրինակ՝ ապացույց, որ ծանուցումն ուղարկվել է վերջին հայտնի հասցեով և (կամ) կամ ամբաստանյալի փաստաբանին⁵⁵:

Այլ ժամանակատար ասպեկտները կարող են ներառել, օրինակ, Հայցվող Պետության կողմից լրացուցիչ փաստաթղթերի խնդրանքները, թեև դա սերտորեն կապված է վերը նշված (1) կետի հետ, կամ հիմնական փաստաթղթերի թարգմանության հետ կապված ուշացումների հարցերը⁵⁶:

1.2.7 4-ԲԴ ՓՈՒԼ: ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄ

4-րդ փուլը վերաբերում է ակտիվներին, որոնք հանցավոր գործունեության արդյունք են և գտնվում են օտարերկրյա իրավագործության տարածքներում: Նման դեպքերում Հայցող Պետությունը (որից վերցվել են ակտիվները) պետք է իր աշխատանքը համակարգի Հայցվող Պետության հետ (որտեղ գտնվում են ակտիվները)՝ դրանց վերադարձն ապահովելու նպատակով: Ակտիվների վերադարձման առավել հաճախ օգտագործվող մեթոդը երկկողմ և բազմակողմ պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա գործակցելն է: Ամենից հաճախ ՓԻՕ հարցումներն ուղարկվում են օտարերկրյա իրավագործության տարածք՝ որպես իրավական հիմնավորում հղում կատարելով ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» (ՄԱԿ-ի ԿԴԿ) կամ ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի» (ՄԱԿ-ի ԱԿՀԿ) առանցքային դրույթներին: Կարող են նաև օգտագործվել և ինչպես ՄԱԿ-ի ԱԿՀԿ, այնպես էլ ՄԱԿ-ի ԿԴԿ-ի կողմից խրախուսվում են իրավապահ մարմինների ոլորտում գործակցության երկկողմ համաձայնագրերը, եթե դրանք գոյություն ունեն երկու պետությունների միջև⁵⁷: Երկու կոնվենցիաներն էլ Հայցվող Պետությանը թույլ են տալիս հանել ՓԻՕ հարցումը կատարելու հետ կապված ծախքերը միայն այն դեպքում, եթե դրանք զգալի են և արտասովոր բնույթ ունեն, և միայն Հայցող Պետության հետ խորհրդակցելուց հետո⁵⁸, թեև ՄԱԿ-ի ԱԿՀԿ-ը նաև նշում է, որ Հայցվող Պետությունը կարող է հանել «ողջամիտ ծախսերը, որոնք ծագել են դեպի բռնագրավված գույքի վերադարձին կամ տնօրինմանը հանգեցնող հետաքննությունների, հետապնդումների կամ դատական վարույթների ընթացքում»⁵⁹:

ՄԱԿ-ի ԿԴԿ-ն թույլ է տալիս Հայցող և Հայցվող Պետություններին «հատուկ քննարկել յուրաքանչյուր առանձին դեպքում բռնագրավված գույքի վերջնական տնօրինման վերաբերյալ համաձայնագրեր կամ փոխընդունելի պայմանավորվածություններ կնքելու հնարավորությունը» (օրինակ, վերականգնված ակտիվների փոխանակման վերաբերյալ)⁶⁰: Նման հատուկ (*ad hoc*) համաձայնագրերը խրախուսվում են՝ որպես միջսահմանային գործակցությունը խթանելու միջոց: Ակտիվների փոխանակման համաձայնագրերը կարող են օգտագործվել, ինչպես Միացյալ Նահանգների դեպքում, խրախուսելու համատեղ հետաքննությունները՝ հաճախ այն դեպքերում, որոնք վերաբերում են թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը և փողերի լվացմանը⁶¹:

Այնուամենայնիվ, անդրսահմանային վերականգնումը մնում է ակտիվների վերականգնման ընդհանուր գործընթացի հիմնական ուշացումների կամ արգելակիչների թվում: Ակտիվների վերականգնման գործընթացում ՄԱԿ-ի ԱԿՀԿ-ի և ՄԱԿ-ի ԿԴԿ-ի ոգուն և մտադրությանն իրական արդյունավետություն բերելու համար բոլոր Պետությունները պետք է հաշվի առնեն մի շարք գործնական հարցեր, որոնք ուղղակիորեն նշված չեն (կամ համարժեք կերպով լուսաբանված) չեն կոնվենցիաներում: Ստորև բերվում են նման հարցերի օրինակներ.

- Նախքան փոխադարձ իրավական օգնության խնդրանք ուղարկելը ոչ պաշտոնական կապ հաստատել և համակարգել գործողությունները. սա թերևս այն խնդիրն է, որն անտեսվել է շատ իրավագործության տարածքների կողմից: Ակտիվների առգրավման, բռնագրավման և հայրենադարձման վերաբերյալ ՓԻՕ հարցումներից շատերը,

Եթե ոչ մեծ մասը, ճախողվում են կամ զգալիորեն հապաղում՝ գործընկերների միջև նախնական քննարկումների բացակայության հետևանքով՝ գործի վերաբերյալ և թե ինչ կարող է անհրաժեշտ լինել ցանկացած ՓԻՕ հարցման համար,

- Իմանալ, թե ով է օտարերկրյա իրավագործության տարածքում գտնվող ակտիվների վերականգնման գործընկերը. շատ երկրներ ամբողջությամբ չեն օգտագործում օտարերկրյա իրավագործության տարածքներում գործող Ակտիվների վերականգնման միջգերատեսչական ցանցի (ARIN) համակարգողների տվյալները (կամ նույնիսկ չգիտեն նրանց մասին), դա հաճախ հանգեցնում է սխալ անձի հետ կապ հաստատելուն և իրավական ու գործառնական այնպիսի ճանապարհներով ընթանալուն, որոնք ժամանակ են վատնում և փոքր հաջողություն են բերում ակտիվների առգրավման, բռնագրավման կամ վերադարձման հարցում: Որոշ դեպքերում դա նաև հանգեցրել է ոչ թե ամփոփագրերի, այլ գործի ամբողջ նյութերի փոխանցմանը օտարերկրյա պետությունների իրավագործություններին,
- Փաստաթղթերի (օրինակ, Հայցող պետության դատական իշխանության կողմից արձակված օրդերների) արագ և արդյունավետ թարգմանությունը դյուրացնելու համար հատկացված բյուջեների բացակայությունը,
- Հատուկ բյուջեների բացակայությունը, որը թույլ կտար Հայցող Պետության դատախազներին (կամ այլ հիմնական պաշտոնատարներին) մեկնել Հայցվող Պետություններ՝ առկա գործերի վերաբերյալ երես առ երես քննարկումներ անցկացնելու համար. փորձը ցույց է տվել,

որ նման ուղղակի քննարկումներն ավելի արագ և արդյունավետ կերպով են առաջ տանում գործը, քան՝ պարզապես ՓԻՕ հարցումներին ապավինելը,

- Ակտիվների հնարավոր բաշխումը քննարկելու պատրաստակամության բացակայություն,
- Պատրաստակամության բացակայություն՝ քննարկելու, թե ինչ պետք է անել ցանկացած վերականգնված ակտիվների հետ, երբ դրանք վերադարձվեն Հայցվող Պետությանը. թեև սա հակասում է ինքնիշխանության խնդրին, այնուամենայնիվ, գործնականում մտահոգիչ է բազմաթիվ Հայցվող Պետությունների համար, որոնք չեն ցանկանում քաղաքականապես հայտնվել անհարմար վիճակում ակտիվները Պետությանը վերադարձնելու համար՝ տեսնելով, որ ակտիվները կրկին օգտագործվում են կոռումպացված կերպով⁶²:

1.2.8 5-ՐԴ ՓՈՒԼ: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Ակտիվների վերականգնման ցիկլի վերջնական և դեռևս հարկ եղած ուշադրությանը չարժանացած նպատակն է՝ ապահովել, որ վերականգնված ակտիվները լիկվիդացվեն և արդյունավետ կերպով օգտագործվեն՝ կա՛մ գոհերին օգնելու համար (օրինակ, կոռուպցիայի կամ մարդկանց թրաֆիքինգի), կա՛մ այդպիսի լուծարված ակտիվներն ուղղորդել զարգացման խիստ առաջնահերթ կարիքներին, ինչպիսիք են առողջապահության, կրթության և զբաղվածության ոլորտները⁶³:

UNICRI-ի անօրինական ֆինանսական հոսքերի (ԱՖՀ-եր) և ակտիվների վերականգնման վերաբերյալ զեկույցների

շարունակական շարքում քննարկվում են ապօրինի ֆինանսական հոսքերի պատճառած վնասները և դրանց կործանարար հետևանքները երկրների, հատկապես զարգացող երկրների վրա, ինչպես նաև առաջնահերթությունը, որը պետք է տրվի ապօրինի ֆինանսական հոսքերի հետ կապված ակտիվների վերականգնմանը և (դրանց արժևորմանը)⁶⁴: Այս զեկույցները նաև ընդգծել են, թե քաղաքացիական հասարակության հետ գործակցությունն ինչպես կարող է նպաստել վերականգնված ակտիվների լավ և օպտիմալ օգտագործմանը. քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են զգալի ավանդ բերել սոցիալական վերաօգտագործման նախագծերի մշակման գործում:

Սոցիալական վերօգտագործման նպատակը ակտիվների վերականգնման գործընթացին իրական արժեք տալն է՝ լիկվիդացված ակտիվներն ուղղելով ազդակիր համայնքներին, ինչը նաև հանգեցնում է օրենքի գերակայության նկատմամբ վստահության վերականգնմանը⁶⁵: Այս նպատակը նաև ցույց է տալիս ակտիվների վերականգնման առանցքային կարևորությունը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին հասնելու գործում⁶⁶: Վերականգնված և լիկվիդացված ակտիվները կարող են օգտագործվել նաև կառավարությունների կողմից՝ ամրապնդելու ակտիվների վերականգնման ազգային նախաձեռնությունները կամ համայնքային նախագծերը, ինչպես արվել է Նիգերիայում⁶⁷: Սոցիալական վերօգտագործման լավ օրինակներ կարելի է գտնել, օրինակ, Բելգիայի, Հոնդուրասի, Իտալիայի և Միացյալ Թագավորության փորձում⁶⁸:

Բռնագրավված ակտիվների սոցիալական վերօգտագործման հաջողություններ⁶⁹

Իտալիայում մաֆիայից բռնագրավված տներն ու ապրանքները հաճախ փոխանցվում են անհատներին և ընտանիքներին, ովքեր կորցրել են իրենց տները, օրինակ, բնապահպանական աղետների պատճառով, կամ օգտագործվում են տեղավորելու դժբախտության մատնված կանանց, փախստականներին և անօթևաններին, ինչպես նաև կազմակերպված հանցավորության զոհերին:

Դա տեղի է ունենում նաև ՔՀԿ-ների աջակցությամբ: Իտալիան կառավարության և ՔՀԿ-ների միջև արդյունավետ գործակցության հարուստ պատմություն ունի՝ վերականգնված ակտիվները սոցիալական ոլորտներում կառավարելու առումով, միաժամանակ խթանելով կայուն տնտեսությունը⁷⁰:

Նույն կերպ, **Հոնդուրասի** կառավարությունը առգրավված կամ բռնագրավել շենքերը ժամանակավորապես տրամադրում է կարիքավոր մարդկանց և ընտանիքներին, որոնք կազմակերպված հանցավոր խմբերի թիրախն են:

Միացյալ Թագավորությունում «Հետվճար համայնքներին» ծրագրի⁷¹ շրջանակներում որոշ վերականգնված ակտիվներ ներդրվել են հաստատություններում, որոնք նախատեսված են հսկայական փողերի վարքագիծ դրսևորելու ռիսկի ենթակա պատանիների համար:

Այնուամենայնիվ, շատ Պետություններում անհրաժեշտ է ավելի մեծ թափանցիկություն վերականգնված ակտիվների լիկվիդացման և օգտագործման գործում: Այժմ կան դեպքեր, երբ Հայցվող Պետությունը կարող է վերադարձնել ակտիվները միայն այն դեպքում, եթե դրանք օգտագործվեն որոշակի նպատակներով. այս խնդիրն առաջացել է հիմնականում այն մտահոգության հետևանքով, որ նման վերականգնված ակտիվները կարող են կրկին չարաշահվել կոռումպացված կերպով: Երբ ուժեղ ապացույցները ցույց են տալիս, որ ակտիվները կարող են կոռումպացված

կերպով վերօգտագործվել հայցող իրավագործության տարածքի կողմից, անտրամաբանական չէ, որ Հայցվող Պետությունը կարող է տատանվել նման ակտիվները վերադարձնելու հարցում՝ անկախ որևէ արդեն իսկ ապացուցված իրավական գործից: Դժվար է որոշել, թե ինչ շեմ պետք է օգտագործվի այս որոշման համար: Այս առումով, շատ ձեռնառու կլինեք երկրների համար նախաձեռնել քննարկում այն մասին, թե ինչպես ապահովել, որ վերականգնումը բերի շահեկան արդյունք բոլոր կողմերին:

Փոխըմբռնման հուշագիր (ՓՀ) Միացյալ Թագավորության և Նիզերիայի միջև՝ Միացյալ Թագավորության կողմից առգրավված գողացված ակտիվների վերադարձման եղանակների վերաբերյալ

2016-ին Միացյալ Թագավորությունը և Նիզերիայի կառավարությունը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր, որը ներառում էր Նիզերիայի ժողովրդից գողացված և Միացյալ Թագավորության կողմից վերականգնված ակտիվները վերադարձնելու մասին դրույթներ:

2021 թվականին կառավարությունը մշակեց Հավելված I-ի նախագիծը, որտեղ ամրագրված են հատուկ պայմանավորվածություններ այն ակտիվների առնչությամբ, որոնք նախկինում գողացվել էին Դելտա նահանգի նահանգապետ Ջեյմս Իբորիի և նրա հանցակիցների կողմից (ավելի քան չորս միլիոն ֆունտ ստեռլինգ): Հավելվածը ներառում է նաև դրույթներ այդ ակտիվների վերադարձի, մոնիտորինգի և կառավարման վերաբերյալ⁷²: Հատուկ պայմանավորվածությունների առկայությունը ակտիվների կառավարման փուլին ավելացնում է արժանահավատություն և թափանցիկություն՝ այդպիսով հանգեցնելով վերադարձվող ակտիվների առավելագույն հնարավոր օպտիմալացմանը՝ օգուտ բերելով առավելագույն թվով մարդկանց և ամրապնդելով հանրային վստահությունը կառավարության աշխատանքի հանդեպ: Բացի դրանից, Հավելվածում տրամադրվում էին տեղեկություններ վերադարձված ակտիվների կառավարման մասին, որոնք պետք է հասանելի դարձվեին Նիզերիայի հանրությանը, նաև այն, թե ինչպես պետք է ամեն տարի հրապարակվեին հաշվետվողականության հաշվետվությունները⁷³:

Համաձայն Հավելված I-ի դրույթների, վերադարձված միջոցները պետք է ուղղվեն Նիգերիայի Ազգային Ժողովի կողմից 2020 թ. Հատկացումների ակտի համաձայն հաստատված որոշակի ենթակառուցվածքների նախագծերի ֆինանսավորմանը (Լագոսից Իբադան արագընթաց մայրուղի, Աբուջայից Կանո ճանապարհի և Նիգերի երկրորդ կամուրջ): Վերադարձված ակտիվների կառավարման վերահսկումն ու մոնիտորինգը գտնվում են Նիգերիայի Ինքնիշխան ներդրումային մարմնի ձեռքում և ենթարկվում են անկախ աուդիտի: Նիգերիայի Դաշնային Հանրապետության մոնիտորինգի թիմի վրա դրվել է նախագծերի ճիշտ իրականացումը վերահսկելու և առաջընթացի մասին պարբերաբար զեկուցելու պատասխանատվություն⁷⁴: Փոխըմբռնման հուշագրի հիմնական նպատակն էր՝ ապահովել, որ վերականգնված ակտիվները նորից չհայտնվեն հանցագործների ձեռքում, այլ կուղղվեն այն նախագծերին, որոնք օգուտ են բերում հասարակության ամենաաղքատ անդամներին և բարելավում են արդարադատության հասանելիությունը Նիգերիայի ժողովրդի համար⁷⁵:

Ինչպես հուշագրերի ամփայությունը նպաստում է միջսահմանային գործակցությանը և արժանահավատություն է հաղորդում Հայցող Պետությանը, քանի որ դրանք սահմանում են ճշգրիտ և թափանցիկ ընթացակարգեր և կանոններ, թե ինչպես են վերականգնված ակտիվները օգտագործվելու և կառավարվելու: Դա արվում է թափանցիկ կերպով նշելով, թե ո՞ր կառույցն է պատասխանատու կոնկրետ խնդիրների համար, ինչպես նաև տրամադրելով մանրամասներ, թե ո՞ր նախագծերը պետք է ֆինանսավորվեն: Թեև ինքնիշխանությունը կարևոր սկզբունք է, սակայն նման ՓՀ-երը ցույց են տալիս, որ առնվազն ակտիվների վերականգնման իրական պրակտիկայում այս սկզբունքը կարող է ողջամտորեն կասկածի տակ դրվել որոշակի հանգամանքներում:

Անկախ վերը նշվածից, իրական պրակտիկան և համապատասխան միջազգային կոնվենցիաների ոգին ցույց են տալիս, որ Հայցող Պետությունները պետք է ավելին անեն՝ թափանցիկություն ապահովելու վերականգնված ակտիվների կառավարման և «օպտիմալացման» հարցում (օրինակ, հանրության համար դյուրությամբ հասանելի դարձնելով տեղեկություններն այն մասին, թե ինչպես են նման ակտիվները լուծարվում և բաշխվում)⁷⁶:

Նույն կերպ, իրական պրակտիկան ցույց է տալիս, որ Հայցվող Պետությունները պետք է ավելի նախաձեռնող լինեն Հայցող Պետությունների հետ գործակցելու հարցում՝ ակտիվների վերադարձման գործերը արագ և արդյունավետ լուծելու նպատակով: մի շարք դեպքերում որոշ Պետություններ շտապել են հայտարարել, որ սառեցրել կամ առգրավել են ակտիվներ (իրենց վրա դրական ուշադրություն գրավելով), սակայն դրանից հետո քիչ բան են արել՝ սերտորեն աշխատելու Հայցող Պետությունների պաշտոնատարների հետ, որպեսզի իրականում վերադարձնեն նման ակտիվները⁷⁷:

Ակտիվների օպտիմալացումը դիտարկվել է բազմակողմ ֆորումներում, այդ թվում, օրինակ, Ակտիվների վերականգնման միջկառավարական աշխատանքային խումբը, որին մասնակցում է UNICRI-ն: Աշխատանքային խումբը մշակել է օգտակար ուղեցույցներ առգրավված և բռնագրավված ակտիվների արդյունավետ և արգասաբեր կառավարման վերաբերյալ⁷⁸, և այդ ուղեցույցներից պետք է օգտվեն բոլոր պետությունները:

Ակտիվների վերականգնման գլոբալ ֆորումը (ԱՎԳՖ) նաև սահմանել է կոռուպցիոն

գործերով գողացված՝ բռնագրավված ակտիվների տնօրինման և փոխանցման տասը սկզբունք⁷⁹: Հինգերորդ սկզբունքը հատակ մեկնարկային կետ է ապահովում սոցիալական վերօգտագործման համար, քանի որ սահմանում է, որ վերականգնված ակտիվների շահառուները (ոչ ի վնաս բացահայտված զոհերի) պետք է լինեն վնաս կրած պետության քաղաքացիները: Թափանցիկությանը և հաշվետվողականությանը վերաբերող չորրորդ սկզբունքն ընդգծում է, որ համայնքներին և լայն հանրությանը պետք է հասանելի լինեն վերադարձված ակտիվների

և դրանց վերաներդրման վերաբերյալ բոլոր տեղեկությունները:

Վերականգնված ակտիվների վերադարձի և հասարակության մեջ դրանց վերաներդրման փուլում թափանցիկությունն ու հաշվետվողականությունն է՛լ ավելի բարձրացնելու նպատակով, տասներորդ սկզբունքը կոչ է անում ուժեղացնել գործակցությունը ազգային իշխանությունների, քաղաքացիական հասարակության, համայնքային կազմակերպությունների և այլ համապատասխան հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) միջև:



02.

**ԱԳ տարածաշրջանում
եկամտաստեղծ լուրջ
հանցագործությունների
և ակտիվների
վերականգնման
ակնարկ**


2.1 Արևելյան գործընկերություն

Արևելյան գործընկերությունը (ԱԳ) համատեղ քաղաքականության նախաձեռնություն է, որի նպատակն է խորացնել և ամրապնդել հարաբերությունները Եվրոպական Միության Անդամ Պետությունների և Արևելյան Եվրոպայի վեց գործընկերների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի միջև⁸⁰:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) հայտարարել է, որ վերոհիշյալ երկրների ուժեղ կողմերը ներառում են «լավ կրթված աշխատուժը, ռազմավարական

աշխարհագրական դիրքը և գործարար միջավայրի բարելավման կարևորության գիտակցումը»⁸¹:

«Եմ-ն բիզնեսի համար. քաղաքականություններից գործողություն» նախագծի շրջանակում ՏՀԶԿ-ն աջակցում է արևելյան վեց գործընկերներին, որոնք հարաճուն կերպով զարգացնում են մրցունակությունը, դիվերսիֆիկացնում իրենց տնտեսությունները և դառնում ավելի ճկուն: ԵՄ-ն նաև փորձում է ներգրավել այդ երկրներին այնպիսի նախաձեռնություններով, որոնք նրանց հնարավորություն կտան մուտք գործել եվրոպական շուկաներ, օրինակ՝ սառցաքան



համաձայնագրերի կամ ազատ առևտրի համաձայնագրերի միջոցով⁸²:

ԱԿԳ ռազմավարական գործընկերությունն սկսվել է 2009 թ.-ին՝ 2004 թ.-ին Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) նախաձեռնության ստեղծումից հետո, որի մի օրինակն է ԱԿԳ-ը: Ընդհանուր առմամբ ԵՀՔ-ի նպատակն է՝ «աջակցել և խթանել կայունությունը, անվտանգությունը և բարգավաճումը ԵՄ հարևանության տարածքում»⁸³: Այսպիսով, ԱԿԳ-ն հիմնված է մի շարք ընդհանուր արժեքների և կանոնների, փոխադարձ քաղաքական և տնտեսական շահերի և պարտավորությունների, ընդհանուր պատասխանատվության և համատեղ սեփականության վրա⁸⁴:

Երկու կողմերի ամուր հանձնառություններն էլ ավելի ամրապնդելու նպատակով 2017թ. ԱԿԳ գագաթնաժողովում ԵՄ Անդամ Պետությունները և ԱԿԳ գործընկեր երկրներն ընդունեցին «20 արդյունք 2020-ի համար» օրակարգը՝ նպատակ ունենալով ամրապնդել տնտեսությունը, կառավարումը, կապը և հասարակությունը⁸⁵:

Խորհրդային Միության փլուզման հետևանքով առաջացած իշխանության

վակուումը նպաստեց տարածաշրջանում քաղաքական և տնտեսական անկայունությանը, որը, օրենքի թույլ գերակայության և կառույցների փլուզման հետ մեկտեղ, հնարավորություններ ստեղծեց էլիտաների կողմից հարստության գրավման⁸⁶, ինչպես նաև կազմակերպված հանցավորության ծաղկման շարունակման համար: Խորհրդային Միության փլուզումը նաև թողեց մի շարք տարածքային վեճեր, որոնք շարունակվում են մինչ օրս⁸⁷ և նպաստում են ընդհանուր անկայունության շարունակական իրավիճակին: Հավելումն, ենթադրվում է, որ մշտական հակամարտությունը, ինչպիսին է Ռուսաստանի նախաձեռնած հակամարտությունն Ուկրաինայում, կարող է խթանել կազմակերպված հանցավոր գործունեությունը Ուկրաինայում, որի օրական ծախսը կազմում է մոտ հինգ միլիոն ԱՄՆԴ⁸⁸: Վերջին ժամանակների ընդհանուր անկայունության հետ կապված նույնպիսի դինամիկան կարող է հիմք հանդիսանալ կազմակերպված հանցավոր գործունեության (և ապօրինի ֆինանսական հոսքերի) համար Մոլդովական Մերձդնեստրում, վրացական Աբխազիա և Ցիխնվալի շրջաններում/Հարավային Օսիայում և ԱԿԳ տարածաշրջանի այլ վայրերում, որտեղ վերջերս հակամարտություններն են եղել:

2.2 Եկամտաստեղծ լուրջ հանցագործությունները ԱլԳ տարածաշրջանում և նման հանցագործությունների սահմանափակմանն ուղղված տարածաշրջանային առանցքային նախաձեռնությունները

ԱլԳ տարածաշրջանում ապօրինի ֆինանսական հոսքերը կարող են գնահատվել տարեկան գրեթե 29 միլիարդ եվրո⁸⁹: Շարունակվող տարածաշրջանային անկայունությունը, որը առաջացել է զարգացող երկրներում հետևյալ ֆիզիկային իրավիճակներից, խաթարում է սոցիալ-տնտեսական զարգացումը և ստեղծում իդեալական միջավայր կազմակերպված հանցավորության ծաղկման համար:

ԱլԳ տարածաշրջանում եկամտաստեղծ լուրջ հանցագործությունները հիմնականում ներառում է մարդկանց թրաֆիքինգ՝ գլխավորապես հարկադիր աշխատանքի և սեքսի նպատակով, փողերի լվացում⁹⁰, ապօրինի ապրանքների մաքսանենգություն և թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, ինչպես նաև կաշառակերություն և կոռուպցիայի այլ ձևեր:

Եկամտաստեղծ լուրջ հանցագործությունները զսպելու նպատակով տարածաշրջանային որոշ նախաձեռնությունների թվում Եվրոպական Հանձնաժողովը ֆինանսավորել է Եվրոպայի կողմից ղեկավարվող նախագիծ, որի նպատակն է՝ բարելավել ԱլԳ երկրների կարողությունները նման հանցագործության դեմ պայքարելու համար⁹¹: Նախագծի տևողությունը 4 տարի է. Եվրոպայը պետք

է աջակցի ԱլԳ երկրների իրավապահ մարմինների գործակցությանը ինչպես ռազմավարական, այնպես էլ գործառնական մակարդակում: Այս համագործակցության առավել լայն նպատակը ԱլԳ տարածաշրջանում ավելի անվտանգ միջավայր ստեղծելն է՝ հիմնված օրենքի գերակայության և գործակցության վրա⁹²: Ծրագրի միջոցով Եվրոպական Միության Իրավապահ մարմինների ուսուցման գործակալությունը (ՄԻՊՈԼ) վերահսկում է հատուկ մի բաժին, որ ուշադրության կենտրոնում իրավապահների ուսուցումն է և սպառնալիքների գնահատումները⁹³:

TOPCOP («Ուսուցում և գործառնական գործընկերություն ընդդեմ կազմակերպված հանցավորության»)⁹⁴ նախագիծը նպատակ ունի կազմակերպված հանցավորության դեմ պայքարում բարելավել գործակցությունը ԱլԳ տարածաշրջանի ներսում և ԵՄ-ի հետ: Նախագիծն իրականացվում է ԵՄ այլ գործակալությունների աջակցությամբ, ինչպիսիք են Եվրոպայը, Ֆրոնտեքսը և Եվրոջասթը: Հավելումն, ԱլԳ վեց երկրները ԻՆՏԵՐՊՈԼ-ի անդամներ են, հետևաբար, կարող են օգտվել վերջինիս ուժեղ աջակցությունից և փորձագիտությունից, հատկապես Ազգային բյուրոների կենտրոնների (ԱԲԿ-ներ) միջոցով, որոնք հետաքննության ընթացքում ապահովում են սահուն գործակցություն:



Կիրեռհանցագործություններ

Կիրեռհանցագործության դեմ պայքարի տարածաշրջանային նախաձեռնությունները ներառում են վերապատրաստումներ և հանդիպումներ, որոնք ուղղված են գիտելիքների խորացմանը և կիրեռհանցագործությունների դեմ պայքարի գործելակերպերի բարելավմանը՝ ներառելով քննարկումներ կրիպտո և էլեկտրոնային արժույթների և Դարքնեթի (Darknet) վերաբերյալ:

2021 թ. հոկտեմբերին Եվրոպական Միության և Եվրոպայի Խորհրդի կողմից կազմակերպվեց հանդիպում կիրեռհանցագործությունների հետաքննությունների և ֆինանսական հետաքննությունների/Արևելյան գործընկերության տարածաշրջանի հետախուզության միջև համագործակցության վերաբերյալ: Առցանց միջոցառումը կենտրոնացած էր ՏՏ աջակցությամբ իրականացվող խարդախությունների, վիրտուալ արժույթների և Դարքնեթի-ի որոշ տեսակների վրա⁹⁵:

Առկա է ընդհանուր կոնսենսուս կա, որ ԱԳ երկրները պետք է մշակեն ճշգրիտ իրավական ուղեցույցներ՝ կրիպտոարժույթների

ապօրինի օգտագործումը հնարավորինս կարգավորելու նպատակով:



Մարդկանց թրաֆիքինգի (ՄԹ)


Մարդկանց թրաֆիքինգի արդյունքում տարեկան ստացված շահույթը գնահատվում է մոտ 30 միլիարդ եվրո ամբողջ աշխարհում⁹⁶: ԱԳ տարածաշրջանը թրաֆիքինգի գոհերի համար կարևոր ծագման, տարանցիկ և նպատակակետ տարածաշրջան է: Չոհերը թրաֆիքինգի են ենթարկվում երկու հիմնական նպատակով՝ սեռական և աշխատանքային շահագործման: Առաջինը հիմնականում վերաբերում է կանանց և երեխաներին, իսկ երկրորդը կարող է ներառել հարկադրանքի կիրառմամբ հանցավորություն⁹⁷: Չոհերը հիմնականում գյուղական վայրերից են, ովքեր ունեն ցածր կրթական մակարդակ և սակավ տնտեսական կամ կրթական հնարավորություններ ԱԳ տարածաշրջանում: Սա ընդգծում է հաջողությամբ վերականգնված ակտիվները վերաներդրելու անհրաժեշտությունը զարգացման առաջնահերթ կարիքների բավարարման մեջ, որոնք ներառում են կրթության, զբաղվածության և առողջապահության ոլորտները:

Բելառուս. 3-րդ մակարդակից մինչև 2-րդ մակարդակի վերահսկվող ցուցակ (ՎՑ)⁹⁸

Համաձայն ԱՄՆ-ի 2021 թ. մի գեկույցի, Բելառուսի կառավարությունը ձեռքբերումներ է ունեցել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում, ուստի 3-րդ մակարդակից (2019-2020) բարձրացվել է 2-րդ մակարդակ (Tier 2 WL) (2020-2021): 2020-2021 թթ. հիմնական ձեռքբերումները ներառում էին Ուղղորդման ազգային մեխանիզմի (ՈւԱՄ) փոփոխությունը, գոհերի անձի հաստատման և աջակցության բարելավումը՝ անձի հաստատման գործընթացի ժամանակն ավելացնելու միջոցով (անհրաժեշտության դեպքում 30-ից մինչև 90 օր) և պահանջելով նախաքննության ընթացքում ձայնագրել գոհ դարձած երեխային և վկաների ցուցմունքները: Սա օգտակար քայլ է կրկնակի տրավմայի ռիսկը մեղմելու ուղղությամբ, քանի որ տուժյալները ստիպված չեն լինի կրկին ցուցմունք տալ դատարանի դահլիճում: Ենթադրաբար տուժածները կարող են նաև օգտվել անվճար իրավաբանական օգնությունից և կարող են պահանջել պաշտպանության լրացուցիչ միջոցներ, օրինակ՝ հեռակա ցուցմունք տալը:

Հայաստան – 2-րդ WL մակարդակից՝ 2-րդ մակարդակ

Ի թիվս այլ ձեռքբերումների, Հայաստանի կառավարությունը ԵԱՀԿ աջակցությամբ մշակեց ձեռնարկ իրավապահների, աշխատանքի տեսուչների և դատական համակարգի համար՝ վերահսկելու այն բիզնեսները, որոնք կարող են օգտագործվել թրաֆիքինգի, ինչպես նաև շահագործման այլ ձևերի համար: Սա կարևոր քայլ է ՄԹ կանխարգելման և զոհերի պաշտպանության արդյունավետ և կատարելագործված եղանակների մշակման ուղղությամբ: Բացի դրանից, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը 2015 թվականից ի վեր առաջին անգամ անցկացրեց աշխատանքային տեսչական ստուգումներ՝ դրսևորելով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի քաղաքական և գործառնական կամք:



Վրաստան. հաջող գործելակերպերի օրինակներ

Վրաստանի կառավարությունը լիովին բավարարում է ԱՄՆ-ի «Թրաֆիքինգի գոհերի պաշտպանության ակտով» (TVPA) սահմանված՝ մարդկանց թրաֆիքինգի վերացման նվազագույն չափորոշիչները, ինչը վառ օրինակ է ԱԳ տարածաշրջանի իր հարևանների համար: Վրաստանի կառավարությունը COVID-19 համաճարակի ժամանակ մ ընդհանուր առմամբ ավելացրել է թրաֆիքինգով զբաղվողների հետապնդումները և աջակցությունը տուժյալներին՝ համարժեք աջակցություն տրամադրելով պետության կողմից դեկավարվող ապաստաններին: Ի թիվս այլ կարևոր ձեռքբերումների, Վրաստանը ստեղծել է Աշխատանքի տեսչական ծառայություն՝ հարկադիր աշխատանքի հատուկ ստորաբաժանումով, որն ապահովում է համապատասխանությունը աշխատանքային կանոնակարգերին և նորմերին⁹⁹:



Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն

Թմրամիջոցների ապօրինի շուկան աշխարհում տարեկան ավելի քան 30 միլիարդ ԱՄՆ դոլարի ապօրինի շահույթ է բերում՝ այսօրվ հանցագործության բոլոր ոլորտներից ամենաեկամտաբերն է¹⁰⁰: Համաձայն 2021 թ.-ի Լուրջ և կազմակերպված հանցավորության

սպառնալիքների գնահատման (SOCTA), ԵՄ-ում թմրամիջոցների առևտուրը գերիշխում է լուրջ և կազմակերպված հանցավորության նկատմամբ՝ ինչպես ներգրավված մարդկանց, այնպես էլ ստացված շահույթի առումով. կազմակերպված հանցավորությանն առնչվող բռնության զգալի մասը կապված է թմրամիջոցների առևտրի հետ¹⁰¹: Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, ինչպես

ապօրինի ֆինանսական հոսքերը, ԱլԳ վեց երկրների համար մտահոգության հիմնական ոլորտներից է, որը վնասներ է հասցնում տնտեսական, հասարակական և համայնքային մակարդակներում: Թմրամիջոցների օգտագործման ազդեցությունը կարող է զգալի ճնշում գործադրել ԱլԳ երկրների առողջապահական համակարգերի վրա՝ նաև տնտեսական տեսանկյունից՝ նկատի ունենալով թմրամիջոցներից վերականգնման ծրագրերի հետ կապված լրացուցիչ ծախսերը: Սա խոչընդոտում է ՄԱԿ-ի ԿՁՆ-ների Նպատակ 3-ի իրագործմանը, որն է՝ «Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից»:

ԱլԳ վեց երկրների աշխարհագրական դիրքը ռազմավարական տարանցիկ կետ է թրաֆիքինգի և մաքսանենգության հետ կապված անդրազգային հանցագործությունների համար: Հաշվի առնելով Մերձավոր Արևելքին և Թուրքիային հարևանությունը՝ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը գրավիչ երկրներ

են թմրամիջոցների, հատկապես հերոինի ապօրինի շրջանառության համար՝ Իրանից և Աֆղանստանից Ուկրաինա, Մոլդովա և այլ եվրոպական երկրներ¹⁰²: Այսպես կոչված «Կովկասի երթուղին» ապօրինի եկամտի հզոր աղբյուր է կազմակերպված հանցավոր խմբերի համար: Հերոինը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի տարածքով՝ սևծովյան ճանապարհով կամ ցամաքով փոխադրվում է ԵՄ՝ Ռումինիա և Բուլղարիա¹⁰³: Բեռների առաքումները և ծովային բեռնարկերը թիրախավորվելու մեծ վտանգի տակ են՝ ապօրինի թմրամիջոցների, հիմնականում հերոինի և կոկաինի առաքման համար: Գործընթացը շահույթ է բերում տեղական կազմակերպված հանցավոր խմբերին և կոռումպացված պաշտոնյաներին՝ միաժամանակ մեծացնելով թմրանյութերի սպառման և թմրանյութերից կախվածության սպառնալիքն ու իրականությունը: Բելառուսի՝ Ռուսաստանի հետ առանց վիզայի քաղաքականությունը¹⁰⁴ Բելառուսը դարձնում է իդեալական երկիր ապօրինի թմրամիջոցների տարանցման համար¹⁰⁵:

«ԵՄ-ն թմրամիջոցների մոնիտորինգի համար» (EU4MD)

«ԵՄ-ն թմրամիջոցների մոնիտորինգի համար» ԵՄ կողմից ֆինանսավորվող նախագիծ է, որը ղեկավարում է Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի եվրոպական կենտրոնը (ԹԹՄԵԿ): Նախագծի նպատակն է՝ ամրապնդել գործակցությունը ԱյԳ տարածաշրջանի երկրների հետ և երկրների ներսում՝ աջակցելով ազգային իշխանություններին թմրամիջոցների հետ կապված խնդիրներին արձագանքելու հարցում¹⁰⁶: Շահառու երկրներն ստանում են համապատասխանեցված ուսուցում և կարողությունների զարգացում, ինչպես նաև մանրամասն տեղեկություններ և սպառնալիքների գնահատումներ, օրինակ, թմրամիջոցների արտադրության բնապահպանական հետևանքների, թե՛ կետերի հայտնաբերման, տեխնոլոգիական նորարարությունների, դատաբժշկական անալիզների կամ թրաֆիքինգի քարտեզների վերաբերյալ¹⁰⁷: Հստակ և անմիջական հաղորդակցությունը ազգային իշխանությունների և այլ երկրների համապատասխան գործընկերների միջև էական նշանակություն ունի թմրամիջոցների երթուղիների և կապակցված բոլոր երևույթների ավելի ճշգրիտ պատկերացման համար, ինչը կարող է հեշտացնել թե՛ կետերի և կասկածյալների ավելի արագ բացահայտումը:



Փողերի լվացում

Փողերի լվացումը հանցագործներին թույլ է տալիս ընդարձակել իրենց գործունեությունը՝ տնտեսական իշխանությունը խլելով ազգային և տեղական տնտեսություններից, ինչպես նաև քաղաքացիներից: Փող լվացողները հարանուն կերպով օգտվում են ավելի բարդ եղանակներից՝ ֆինանսական գործարքների և կեղծ ընկերությունների միջոցով՝ ավելի մեծ բարդություն առաջացնելով ֆինանսական գործարքների և հանցավորության հետ դրանց կապի բացահայտման գործում¹⁰⁸:


Փողերի լվացման գործունեության չափը չափազանց դժվար է գնահատել, այդ պատճառով անվանվել է «ստվերային տնտեսություն» կամ «պետության չգրանցված ֆինանսական գործունեություն»¹⁰⁹: Թեպետ ոչ մի ազգային կամ միջազգային կազմակերպություն չի կարող որոշակիորեն բացահայտել զուբայ մասշտաբով տեղի ունեցող փողերի լվացման ծավալը (իսկապես, գումարը փոփոխվում է օրական կտրվածքով), ԱյԳ տարածաշրջանում առկա են փողերի լվացման հետ կապված ռիսկեր: Թեև ԱյԳ բոլոր վեց երկրներն ունեն որոշ ընդհանուր

խոցելիություններ, ինչպիսիք են կանխիկ դրամի լայնատարած օգտագործումը և բիզնես վարելու դյուրությունը, ռիսկերը մեղմելու համար տարածաշրջանի երկրներն իսկապես իրականացնում են հակազդման միջոցներ: Վրաստանն ապացուցել է, որ լավ օրինակ է: Վրաստանի Ազգային բանկը և Ապահովագրության պետական վերահսկողության ծառայությունը կիրառում են մուտքի խիստ զննություններ և պարբերաբար վերանայում են լիցենզավորման քաղաքականությունը¹¹⁰:

Այդուհանդերձ, նման հակազդման միջոցները կարող են ավելի ամրապնդվել ռիսկերի մեղմման տարածաշրջանային մոտեցումների որդեգրման միջոցով: դրանք կարող են ներառել տարածաշրջանային համաձայնագրեր՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության անդրսահմանային հետաքննություններն ավելի ճկուն դարձնելու համար (մասնավորապես՝ տարածաշրջանում թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված ակտիվների հետազոծում, առգրավում և բռնագրավում, ինչպես նաև այդ ակտիվները բաշխելու վերաբերյալ համաձայնություններ:

Ինչ վերաբերում է փողերի լվացումը զգալիորեն ուղղված տարածաշրջանային նախաձեռնություններին, ՄԱՆԻՎԱԼ հանձնախումբը Եվրոպայի Խորհրդի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների գնահատման փորձագետների հանձնախումբն է: Մշտական մոնիտորինգի մարմինը գնահատում է համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին՝ միաժամանակ ազգային մարմիններին առաջարկություններ ներկայացնելով իրենց համակարգերի անհրաժեշտ բարելավման վերաբերյալ: Այս համատեքստում ԱԳ երկրներն օգտվում են ՄԱՆԻՎԱԼ-ի փորձագետների գիտելիքներից:


Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան անդամակցում են ՄԱՆԻՎԱԼ-ին¹¹¹, իսկ Բելառուսը Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով եվրասիական տարածաշրջանի երկրների խմբի (ԵԱԽ) անդամ է¹¹²:

 **Կաշառակերություն և կոռուպցիա**

COVID-19-ի համավարակը լրացուցիչ մարտահրավերներ առաջացրեց ԱԳ երկրների համար՝ որոշ պետական պաշտոնյաների կողմից իշխանության չարաշահման ավելի բարձր ռիսկով¹¹³: Ինչպես շատ երկրներում, որոշ քաղաքական առաջնորդներ ճգնաժամն օգտագործեցին իրենց օգտին, օրինակ, սահմանափակումներ ավելացնելով տեղեկությունների արդեն իսկ սահմանափակ հասանելիությանը¹¹⁴ կամ վերացնելով թափանցիկության պահանջները պետական գնումների կանոններից¹¹⁵:

Այնուամենայնիվ, կան դրական նշաններ, որ ԱԳ երկրները զգալի միջոցներ են

ձեռնարկում կոռուպցիայի դեմ պայքարի համար, հատկապես որոշ երկրներում կոռուպցիայի դեմ ուղղված հանրային մոբիլիզացիայի վերջին ջանքերից հետո¹¹⁶: Օրինակ, Ուկրաինան հրապարակել և սկսել է իրականացնել քաղաքացիական բռնագրավման մասին նոր օրենքը: Նույն կերպ, Հայաստանի քաղաքացիական վարույթով բռնագանձման մասին օրենքը գործում է 2020 թվականից, և ներկայումս քննվում է մոտ 300 գործ: Հավելումն, Մոլդովայի Ապօրինի ծագումով ակտիվների վերականգնման գործակալությունը (CARA) ակտիվորեն աշխատում է կոռուպցիայի հետ կապված ակտիվները հետագծելու և բացահայտելու ուղղությամբ: Վրաստանի Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը դատախազներին մինչև տասը տարի ժամանակ է տալիս՝ որոշակի հանցագործությունների համար դատապարտվածների ակտիվները հետագծելու և բացահայտելու համար¹¹⁷, իսկ Ադրբեջանը վերջերս ստեղծել է Բռնագրավման հատուկ հարցերի համակարգման վարչություն¹¹⁸:

 **Կազմակերպված գույքային հանցագործություններ**

Իր «2018-2021 թթ. քաղաքականության շրջափուլով» ԵՄ-ն կազմակերպված գույքային հանցագործությունը ճանաչեց որպես ԱԳ տարածաշրջանում ամենատարածված հանցագործություններից մեկը¹¹⁹: Կազմակերպված գույքային հանցագործությունը կարող է իրականացվել գողության կամ կողոպուտի միջոցով. Եվրոպայում ԱԳ որոշ երկրների քաղաքացիների սփյուռքի համայնքները հաճախ օգտագործվում են նման հանցագործություններ կատարելու համար¹²⁰: Այս երևույթը բացասական հետևանքներ է առաջացնում ԱԳ

տարածաշրջանի երկրների համար, նույնիսկ երբ կազմակերպված գույքային հանցագործությունը տեղի է ունենում երկրից դուրս, քանի որ արտերկրում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները կարող են օգտագործվել երկրի ներսում հանցավորության ֆինանսավորման համար: Ըստ Եվրոպոլի, կազմակերպված գույքային հանցագործությունները, որոնք հաճախ հիմնվում են գողացված ապրանքների առքուվաճառքի վրա, խիստ անբավարար չափով են հետաքննվում և իրավապահ մարմինների համար ներկայացնում են հետախուզական բաց¹²¹: Այնուամենայնիվ, դա, հավանաբար, կազմակերպված հանցավորության ամենատեսանելի ձևն է, որն անմիջական ազդեցություն է ունենում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի վրա. ԵՄ-ում ամեն տարի գրանցվում է բնակարանային կողոպուտի հետ կապված ավելի քան մեկ միլիոն դեպք¹²²:



Ապրանքների մաքսանենգություն

Ապօրինի ապրանքների մաքսանենգությունը նույնպես տարածված հանցագործություն է ԱԳ տարածաշրջանում, քանի որ հանցագործները շահում են ինչպես գների տարբերությունից, այնպես էլ եվրոպական շուկաների մերձությունից: ԱԳ տարածաշրջանից սիգարետների մաքսանենգությունը հիմնականում տեղի է ունենում այսպես կոչված «ապօրինի սպիտակների» (illicit whites) միջոցով. դրանք Բելառուսում, Մոլդովայում և Ուկրաինայում օրինական ճանապարհով արտադրված սիգարետներ են, որոնք այնուհետև մաքսանենգորեն ներկրվում են ԵՄ՝ առանց ակցիզային տուրքերը և ԱԱՀ վճարելու¹²³: ԵՄ-ում սպառվող ապօրինի սիգարետների ավելի քան 20%-ը ծագում է Արևելյան Եվրոպայի երկրներից և անցնում է այսպես կոչված,

Հյուսիսարևելյան երթուղով. տարեկան տեղի է ունենում տասը միլիարդից ավելի սիգարետի ապօրինի շրջանառություն¹²⁴: Եվրոպական խարդախության դեմ պայքարի գրասենյակը գնահատել է, որ ծխախոտի մաքսանենգությունը ԵՄ-ին տարեկան արժենում է 10 միլիարդ եվրո¹²⁵:

Բելառուսական սիգարետների շուկան ԵՄ-ի հիմնական մատակարարներից է, որը շահութաբեր հնարավորություններ է ներկայացնում կազմակերպված հանցավոր խմբերի համար. արժենում է տարեկան մոտ մեկ միլիարդ եվրո¹²⁶: 2021 թվականի մայիսին Լիտվայի Մաքսային քրեական ծառայությունն առգրավել է ավելի քան երեք միլիոն տուփ սիգարետ՝ զրեթե 12 միլիարդ եվրո մոտավոր արժեքով: Իրավապահ մարմինները նաև առգրավել են մոտ 46,5 տոննա ծխախոտ, թմրանյութեր և մաքսանենգ կանխիկ գումար¹²⁷:

Ռուսաստանի Դաշնության զինված ազրեսիան Ուկրաինայի դեմ կարող է նաև առաջացնել ապօրինի ֆինանսական հոսքեր, որոնք բացասաբար կանդրադառնան Ուկրաինայի և տարածաշրջանի տնտեսության և կայունության վրա: Երկրում հիմնական ապօրինի ֆինանսական հոսքերը հաճախ վերաբերում են փոքր զինատեսակների մաքսանենգությանը¹²⁸, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգին¹²⁹ և ահաբեկչության ֆինանսավորմանը¹³⁰: Ծրջանառության մեջ մտնելուց հետո ապօրինի հրազենը կարող է երկարաժամկետ վտանգ ներկայացնել, քանի որ դրանք կարող են օգտագործվել հանցագործությունների այլ ոլորտներում՝ իրենց բազմաչափ բնույթի պատճառով: Ըստ Ֆրոնտեքսի, տեղեկությունների փոխանակումը Արևելյան Եվրոպայի երկրների հետ ցույց է տալիս, որ սահմանային վերահսկողության ազգային մարմինները պարբերաբար հայտնաբերում են ապօրինի զենքեր, պայթուցիկներ և զինամթերք¹³¹: Հաղորդվում է, որ զենքի մաքսանենգությունն

իրական մտահոգություն է առաջացնում Մերձդնեստրում¹³² Մոլդովա-Ուկրաինա սահմանին¹³³:

Ֆրոնտեքսը գողացված ավտոմեքենաների ապօրինի շուկան ևս դիտում է որպես եկամտաբեր աղբյուր կազմակերպված

հանցավոր խմբերի համար՝ արևելյան ցամաքային սահմանների երթուղում:¹³⁴ 2019 թվականին Ֆրոնտեքսի համատեղ գործողություններում գողացված ավտոմեքենաների ավելի քան 57%-ը հայտնաբերվել է այս ճանապարհին, ընդ որում 39%-ը գրանցվել է Բալկաններում:

Անմաքս խանութների օգտագործումը ծխախոտի մաքսանենգության համար

Առանց ուժեղ վերահսկողության անմաքս խանութները կարող են օգտագործվել սիգարետներ մաքսանենգության համար: 2015 թ. դեկտեմբերից մինչև 2016 թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում Մերձդնեստրի անմաքս խանութները ներկայացրել են 1,32 միլիարդ սիգարետ, որոնցից շուրջ 640 միլիոնը իրականում վաճառվել է: Այս երևույթը մտահոգություն է առաջացնում, որ ավելցուկը վաճառվում է սև շուկայում և մաքսանենգ ճանապարհով ներմուծվում ԵՄ¹³⁵:

ՋՀամատեղ գործողությունների օր՝ Arktos 2136 – ԵՄ-ի արևելյան ցամաքային սահմանները

Այս գործողությունը 2020 թ. համակարգվել է Ֆրոնտեքսի, Ֆինլանդիայի և Լատվիայի կողմից, աջակցել են ԻՆՏԵՐՊՈԼ-ը, Եվրոջապժը, Եվրոպոլը, Լեհաստանը, Էստոնիան, Լիտվան և Սլովակիան: Առգրավվել է մոտ 37 մլն ապօրինի սիգարետ, ավելի քան 1,8 տոննա ծխախոտ և ավելի քան 3500 լիտր ապօրինի վառելիք: Այս գործողությունը ցույց է տալիս, որ համապատասխան գործընկերների միջև տեղեկությունների հաջող միջսահմանային փոխանակումն էական նշանակություն ունի կազմակերպված հանցավորության դեմ պայքարում:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության, մարդկանց թրաֆիքինգի և մաքսանենգության այլ ձևերի նվազեցմանն ուղղված հիմնական նախաձեռնություններ

ստ Ֆրոնտեքսի, արևելյան ցամաքային սահմանների ճանապարհի մաքսատների հետ կապված ամենամեծ մարտահրավերը ակցիզային ապրանքների մաքսանենգությունն է, ինչպիսիք են սիգարետները, վառելիքը, ոգելից խմիչքները և գողացված ավտոմեքենաները¹³⁷: ԵՄ-ի և սահմանամերձ արևելյան գործընկերների միջև միջսահմանային գործակցությունն էական նշանակություն ունի սահմանների արդյունավետ կառավարման գործում՝ ստեղծելու սահմանների կառավարման գնալով ավելի կապակցված գլոբալ հանրային և պայքարելու անկանոն միգրացիայի և անդրսահմանային հանցագործությունների դեմ¹³⁸: Ֆրոնտեքսը գործակցում է ԱյԳ տարածաշրջանի երկրների հետ իր Արևելյան գործընկերության ռիսկերի վերլուծության ցանցի (EaP-RAN) միջոցով, որը հետախուզական տվյալների փոխանակման տարածաշրջանային ցանց է և ղյուրացնում է տեղեկությունների փոխանակումը և համատեղ վերլուծությունը, ինչպես նաև տարածաշրջանում Ֆրոնտեքսի հաղորդակցության պատասխանատուի տեղակայման միջոցով¹³⁹: EaP-RAN-ը գործում է ԵՄ կողմից ֆինանսավորվող Արևելյան գործընկերության սահմանների համալիր կառավարման կարողությունների զարգացման նախագծի շրջանակներում և ընդգրկում է ԱյԳ բոլոր վեց երկրները: Ֆրոնտեքսի և ԱյԳ երկրների միջև տեղեկությունների ամենամյա փոխանակումը նպատակ ունի բացահայտելու ի հայտ եկող միտումները՝ ռազմավարական և գործառնական որոշումների կայացմանն աջակցելու նպատակով:

ԱյԳ տարածաշրջանային կայունությունը կարող է ամրապնդվել նաև տարածաշրջանի ներսում հարևան երկրների միջև միջսահմանային գործակցության խորացման միջոցով: Օրինակ, ԵՄ-ն նպատակադրվել է բարելավելու Մոլդովայի և Ուկրաինայի միջև սահմանների համալիր կառավարումը (ՄՀԿ)՝ ունենալով ավելի ընդարձակ նպատակ՝ ամրապնդել տնտեսական անվտանգությունը և կայուն զարգացումը ԱյԳ տարածաշրջանում՝ մաքսանենգության և անդրսահմանային այլ հանցագործությունների դեմ պայքարի միջոցով¹⁴⁰:

Մոլդովայում և Ուկրաինայում Եվրամիության սահմանային աջակցության առաքելությունը (EUBAM) նպաստում է Մոլդովայի և Ուկրաինայի սահմանային համագործակցությանը, խթանում և ներդաշնակեցնում է սահմանային վերահսկողությունը և մաքսային համակարգը, ամրապնդում է տարածաշրջանային անվտանգությունը¹⁴¹: Նախագիծը ծխախոտի և թմրամիջոցների մաքսանենգության, մարդկանց թրաֆիքինգի և մաքսային խարդախության դեմ պայքարում հաջողված միջսահմանային գործակցության ակնառու օրինակ է:

«Համատեղ գործողությունների օր» «Ֆինեստրա» ծածկանունով – Մաքսանենգների դեմ պայքարը Արևելյան գործընկերության տարածաշրջանում¹⁴²

2021 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ֆրոնտեքսը և Ռումինիան Քրեաձին սպառնալիքների դեմ պայքարի եվրոպական բազմադիսցիպլինար հարթակի շրջանակում (EMPACT) արևելյան ցամաքային սահմաններում¹⁴³ ղեկավարեցին հանցագործության դեմ պայքարի միջսահմանային գործողություն: Գործողությունն իրականացվեց ԵՄ մի քանի Անդամ Պետությունների, Մոլդովայի, Ուկրաինայի, Եվրոպոլի, Եվրոջապի, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (OLAF), ԻՆՏԵՐՊՈԼ-ի, ՀՄԿ-ի և EUBAM MD/UA-ի (Մոլդովայում և Ուկրաինայում Եվրամիության սահմանային աջակցության առաքելություն) հետ գործակցությամբ: Արդյունքում հայտնաբերվեց 36 մլն ապօրինի սիգարետ, 2360 կգ ծխախոտ, 160 000 լիտր ապօրինի ոգելից խմիչք, 44 կեղծ փաստաթուղթ և 6000 լիտր հանքային յուղ: Միևնույն ժամանակ, գործողությունը հանգեցրեց 32 մաքսանենգի նույնականացմանը, վեց զոդացված ավտոմեքենայի առգրավմանը, 170-ից ավելի անկանոն միգրանտների և գրեթե 190 մուտքի մերժումների հայտնաբերմանը: Այս հաջող գործողությունը իրավապահ մարմիններին թույլ տվեց տեղեկություններ փոխանակել, ամրապնդել գործակցությունը ԵՄ Անդամ Պետությունների և այլ մասնակից երկրների (Մոլդովա և Ուկրաինա) միջև, ինչպես նաև փոխանակել իրենց լավագույն փորձը:

Ադրբեջանի հաջողությունն ընդդեմ մաքսանենգների¹⁴⁴

2021 թ. սեպտեմբերին ադրբեջանական մաքսային մարմինները կանխեցին ավելի քան 660 կգ թմրամիջոցների՝ հիմնականում հերոինի և ափիոնի մաքսանենգության փորձ: Հերոինը մաքսանենգ ճանապարհով Ադրբեջան էր տեղափոխվում իրանական բեռնատար ավտոմեքենայով, որը մեկնում էր Լատվիա: Հետաքննությունը պարզեց, որ այդ բեռների նպատակակետ տարածաշրջանը Եվրոպան էր, և ցուցադրեց Ադրբեջանի քաղաքական և գործառնական կամքը՝ դիմակայելու կազմակերպված հանցավոր գործունեությանը:

2.3 Ակտիվների վերականգնումը ԱԳ տարածաշրջանում

ԱԳ երկրներն առաջընթաց են գրանցում ապօրինաբար ձեռքբերված ակտիվները վերականգնելու գործում: 2020 թ. ապրիլին Հայաստանի Ազգային Ժողովն ընդունեց «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը¹⁴⁵: 2019 թ. Ուկրաինան ներդրեց քաղաքացիական վարույթով բռնագանձումը¹⁴⁶, իսկ 2021 թ. օգոստոսին դատարանը կայացրեց քաղաքացիական բռնագրավման գործով իր առաջին որոշումը¹⁴⁷: Վրաստանը ներկայումս իրականացնում է օրենք, որը դատախազներին մինչև տասը տարի ժամանակ է տալիս՝ որոշակի հանցագործությունների համար դատապարտվածների ակտիվները հետագծելու և բացահայտելու համար:

Այդուհանդերձ, ԱԳ բոլոր երկրների պաշտոնյաներն ընդունում են, որ բարելավման մեծ անհրաժեշտություն կա, և շատ ավելին պետք է արվի՝ ակտիվների վերականգնումն արդյունավետ դարձնելու համար: ԵՄ-ի և ԱԳ երկրների միջև ընդհանուր ռազմավարության և օպերատիվ արձագանքման իրականացումը շահեկան կլինի ապօրինաբար ձեռքբերված ակտիվների հաջող հետագծման, սառեցման, բռնագրավման և վերադարձի առումով:

Մեծ թվով միջոցառումներ, որոնք արդեն իսկ գործում են ԱԳ որոշ երկրներում, օգտակար են երկրի ներսում և է՛լ ավելի շահեկան կլինեին, եթե իրականացվեին ԱԳ բոլոր երկրներում: Օրինակ, ակտիվների վերականգնման հատուկ գրասենյակների (ԱՎԳ-եր), ինչպիսիք Մոլդովայում և Ուկրաինայում գործող գրասենյակներն են, հիմնական մոտեցումն է՝ ապահովել, որ մեկ տանիքի տակ հնարավոր լինի մուտք գործել մի քանի տվյալների շտեմարաններ

(հարկային տեղեկությունների, տրանսպորտային միջոցների և հողային ռեգիստրի, բանկային տեղեկությունների), ինչը ARO-ներին թույլ կտա հեշտությամբ պատրաստել առանձին (միջկառույցային) հաշվետվություններ հանցավոր գործունեության մեջ կասկածվող անձանց տիրապետած ակտիվների վերաբերյալ:

Տարածաշրջանը դանդաղորեն, բայց անշեղորեն ընդունում է քաղաքացիական վարույթով բռնագրավման միջոցներ, ինչպես նաև ներդրում է տվյալների շտեմարաններ և համակարգված վերլուծություններ կամ ռիսկերի գնահատումներ՝ հանցավորության հետ կապված ֆինանսական գործարքները հասկանալու համար¹⁴⁸:

2017 թ. ԱԳ Գազաթնաժողովում գործընկեր երկրները պարտավորվել են ընդունել ակտիվների վերականգնման վերաբերյալ Համատեղ հռչակագիր՝ ի թիվս այլ հիմնական արդյունքների¹⁴⁹: Ակտիվների վերականգնման հիմնական առաջնահերթությունները սահմանվել են որպես «ակտիվների հայտարարագրման և շահերի բախման արդյունավետ համակարգերի ստեղծում»՝ հեշտությամբ որոնելի տվյալների շտեմարաններով» և «ակտիվների վերականգնման և կառավարման իրավական դաշտի և մեխանիզմների, ֆինանսական հետաքննություններ արդյունավետ գործիքների մշակում»¹⁵⁰: Տեղեկությունների ժամանակին փոխանակումն էական նշանակություն ունի եկամտաստեղծ լուրջ հանցագործությունների հետաքննության ժամանակ, ուստի հուսալի տվյալների շտեմարանի առկայությունը չափազանց կարևոր է դառնում ռազմավարական և գործառնական պլանավորման համար:

Ինչպես նշել է ՄԱՆԻՎԱԼ-ը, անհրաժեշտ է ապահովել, որ ակտիվների վերականգնման գրասենյակները կամ որևէ այլ համապատասխան մարմին տեղյակ լինեն ակտիվների վերականգնման և ֆինանսական հանցագործությունների ոլորտում վերջին տեխնոլոգիական զարգացումներին, ողջ անձնակազմը պատշաճ կերպով պատրաստված լինի և առկա լինի համապատասխան տվյալների շտեմարանների համարժեք հասանելիություն¹⁵¹:

Ակտիվների վերականգնման հետ կապված մեկ այլ առանցքային հիմնախնդիր է միջկառույցային գործակցության բացակայությունը: Դա տեղի է ունենում, երբ չկան հստակ և պարզորոշ կերպով սահմանված ինստիտուցիոնալ կառուցվածքներ կամ նպատակներ: Որոշ դեպքերում դա կարող է բարելավվել՝ ստեղծելով ակտիվների վերականգնման մշտական

միջկառույցային հանձնաժողով կամ ստեղծելով ժամանակավոր աշխատանքային խմբեր¹⁵²: Միջկառույցային գործակցության բացակայությունը հանգեցնում է դերերի հարցում շփոթվածության կամ համընկնող դերերի, ինչպես նաև կառույցների միջև մրցակցության՝ կապված իրենց լիազորությունների հետ:

Հավելումն, ԱԳ երկրներում բռնագրավված ակտիվների վերաբերյալ վիճակագրության բացակայությունը նույնպես կարող է խնդիր լինել: Օրինակ, շատ երկրներում վիճակագրությունը հաճախ ցույց է տալիս, թե որքան քիչ բան է կարգադրվում բռնագրավել, ի տարբերություն այն բանի, թե որքան շատ բան է կարգադրվել բռնագրավել: Միայն այս բացը հասկանալը կարող է հանգեցնել ավելի հասցեագրված քաղաքականությունների, ինչպես նաև օգտակար գործառնական վերակազմավորման:

Քրեական ակտիվների վերականգնման գործակալություն (ՔԱՎԳ) - Մոլդովա¹⁵³

Վերջերս ՔԱՎԳ-ը պետության կալանքի տակ է փոխանցել 11 միլիոն մոլդովական լեյի գողացված ակտիվներ, որոնք նախկինում առգրավվել էին: Դրանով ապահովվել է գողացված ակտիվների թափանցիկ կառավարումը: Գողացված գումարները հայտնաբերելու համար պահանջվել են հատուկ քննչական և օպերատիվ մեթոդներ ու վերլուծություններ ինչպես Մոլդովայում, այնպես էլ արտերկրում: ՔԱՎԳ-ը պատասխանատու է հանցավոր ծագում ունեցող ակտիվների հետազոմման և առգրավման համար, իսկ դատական համակարգը վերահսկում է գողացված ակտիվների բռնագրավումն ու վերականգնումը¹⁵⁴:

ԱԳ որոշ երկրներ օրինակ են ծառայել տարածաշրջանում՝ դրական քայլեր ձեռնարկելով՝ որոշակի հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց խրախուսելու, որպեսզի վերադարձնեն ակտիվները: Դա կարող է տեղի ունենալ պատժից ազատման (համաներման) կամ պատժաչափի կրճատման միջոցով, եթե ամբաստանյալը

համաձայնում է վերադարձնել ակտիվները, իսկ որոշ դեպքերում՝ եթե տուժողներին փոխհատուցում է տրվում:

ԱԳ որոշ երկրների կողմից ակտիվները վերականգնելու ջանքերը կարող են վտանգվել ներքին կոռուպցիայի և քաղաքական ազդեցության ենթարկվելու

պատճառով, ինչը թուլացնում է որոշ մարմինների անկախությունը:

Այնուամենայնիվ, ակտիվների վերականգնման հարցում առաջընթաց

է նկատվում, սակայն բարեփոխումները ժամանակ են պահանջում իրականացվելու և իրենց արդյունավետությունը ցույց տալու համար:

Հաջող հետաքննություններ և առգրավումներ Վրաստանում¹⁵⁵

2021 թ. ապրիլին Վրաստանի դատախազությունը հաջողությամբ դատական գործ է հարուցել երկու անձի դեմ՝ խարդախությամբ 450 000 ԱՄՆ դոլար յուրացնելու համար: Հանցավոր կազմակերպության երկու անդամներին մեղադրանք է առաջադրվել Վրաստանի Քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածով, որը նախատեսում է վեցից ինը տարվա ազատազրկում: Վրաստանի իշխանություններին հաջողվել է հաջողությամբ առգրավել 420 000 ԱՄՆ դոլար, որը պետք է վերադարձվեր խարդախությունից տուժած ընկերությանը:

2021 թ. նոյեմբերին Վրաստանի դատախազությունը հետաքննել է մի հանցավոր խմբի, որը բաղկացած էր ինչպես տեղացի, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներից, և ձերբակալել է մի անձի՝ խոշոր գումարների հափշտակության համար: Գործը վերաբերում էր մի կեղծ կայքի, որտեղ, ինչպես պնդում էին սեփականատերերը, իրենք լիազորված և արտոնագրված են առևտուր անելու կրիպտոարժույթների շուկայում: Չոհերը, որոնք գայթակղվել և կարծել էին, թե շահավետ ներդրումներ են անում, մեծ գումարներ էին կորցրել:

2021 թվականի նոյեմբերին դատախազությունը հեռակա կարգով քրեական հետապնդում է հարուցել: Գործով անցնում է գնումների վարչության պետը և «Միացյալ ջրամատակարարող ընկերության» խորհրդատուն, որը հանրային ընկերություն է: Այս անձինք ստեղծել են մրցույթի ոչ մրցակցային միջավայր, և հաղթող ճանաչված ընկերության տնօրենը երկուսի մտերիմ ընկերն է: Գործով անցնող անձինք մրցույթներում շահելու դիմաց ստացել են ընդհանուր առմամբ 215 000 լարի կաշառք: Գումարի մի մասն այնուհետ լվացվել է՝ ձեռք բերելով շքեղ մեքենա, որն առգրավվել է նախաքննության ընթացքում: Բացահայտված անձանց կարող են քրեական մեղադրանքներ առաջադրվել փողերի լվացման և կաշառակերության համար:

UNICRI-ն և ակտիվների վերականգնումը

ԵՄ-ը ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտի (UNICRI) փորձագետների ներգրավմամբ ֆինանսավորել է նախագիծ, որն ուղղված է հանցավոր գործունեության հետ կապված ակտիվները հայտնաբերելու և բռնագրավելու ԱԳ երկրների կարողությունների զարգացմանը, ինչպես նաև վերականգնված միջոցները զարգացման առաջնահերթ կարիքներին ուղղելուն:

UNICRI-ն տրամադրում է փորձագիտական օժանդակություն՝ կոնկրետ դեպքերի վերաբերյալ մենթորության տեսքով, ինչպես նաև աջակցում է առաքելություններին օտարերկրյա իրավագործությունների տարածքների գործընկերների հետ, որտեղ գտնվում են ԱԳ երկրներից գողացված ակտիվները¹⁵⁶:

Դատական գործերի պետական հիմնադրամներ. Ուկրաինա¹⁵⁷

2020 թվականի գեկույցում Ուկրաինայի Ակտիվների վերականգնման և կառավարման գործակալությունը (ԱՎԿԳ) մատնանշել է դատական գործերի հիմնադրամներ ստեղծելու անհրաժեշտությունը, ինչը Ուկրաինային հնարավորություն կընձեռներ վարձել օտարերկրյա փաստաբանական գրասենյակների՝ օտարերկրյա իրավագործություններում քաղաքացիական գործ հարուցելու համար: Սակայն այս մեխանիզմը քննադատության ենթարկվեց, քանի որ բարձրացվեցին օրինաչափ հարցեր օտարերկրյա փաստաբանական գրասենյակների վարձատրության չափի հետ կապված (որոշ դեպքերում՝ վերականգնված ակտիվների մի խոշոր տոկոսը), ինչպես նաև հնարավոր շահերի բախում առաջանալու առնչությամբ՝ ընտրության գործընթացում երաշխիքների բացակայության պատճառով: Գործընթացը նաև հանգեցրեց քննադատության, որ Պետությունն ինչ-որ կերպ ակտիվների վերականգնման իր պարտականություններն ամբողջությամբ պատվիրակում է մասնավոր փաստաբանական գրասենյակներին, և հանգեցրեց օտարերկրյա իրավագործություններում քաղաքացիական գործ հարուցելու և իրականացնելու համար օտարերկրյա փաստաբանական գրասենյակների վարձման գաղափարի ընդհանրացված մերժմանը:

Պետության դերի էական մասն է՝ ապահովել, որ ընտրվեն հեղինակավոր փաստաբանական գրասենյակներ և սահմանվեն գների արդարացի սանդղակներ, հաշվի առնելով, որ վերականգնված ակտիվները հաճախ կարող են կազմել միլիարդավոր եվրոներ: Գործնականում դեռևս գոյություն չունի օտարերկրյա իրավագործության դատական գործեր վարելու համար փաստաբանական գրասենյակների վարձման՝ փորձով ապացուցված մեն-մի մեթոդաբանություն: Այնուամենայնիվ, այս դինամիկան ցույց է տալիս, որ անհրաժեշտ է օտարերկրյա իրավագործության դատական գործերում հաջողության հասնելու հավանականության նախնական գնահատում, և նման համաձայնագրերը պետք է սահմանափակ ծախքեր պարունակեն Հայցող Պետությունների համար, եթե փաստաբանական գրասենյակը գործը չշահի, միաժամանակ ապահովելով, որ նման փաստաբանական գրասենյակները կարողանան ողջամտորեն, թեև ոչ անհամաչափ կերպով, օգուտ ստանալ շահած դատական գործերից¹⁵⁸:

Հարկ է նշել, որ օտարերկրյա իրավագործություններում քաղաքացիական գործեր հարուցելը նման իրավագործությունների օրենսդրությանը ծանոթ օտարերկրյա փաստաբանական գրասենյակների միջոցով բավականին տարածված գործելակերպ է, և քաղաքացիական դատական գործը (ի հակադրություն քրեական գործերի) հաճախ կարող է ավելի արագ և արդյունավետ լինել՝ տվյալ իրավագործությունում գտնվող ակտիվների բռնագրավման դատական օրդերներ ստանալու համար¹⁵⁹:



03.

Մոցիական
վերօգտագործման
քաղաքականությունների
և գործելակերպերի
անհրաժեշտությունը ԱԳ-
տարածաշրջանում¹⁶⁰

Գնահատվել է, որ կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության հետ կապված անօրինական ֆինանսական հոսքերի պատճառով ԱԳ տարածաշրջանի երկրները տարեկան կորցնում են ընդհանուր առմամբ 29,9 միլիարդ եվրո¹⁶¹: Ապօրինի ֆինանսական հոսքերը (ԱՖՀ-եր) վնասում են հասարակություններին մի քանի մակարդակում՝ խոչընդոտելով երկրի տնտեսական աճին և կառավարություններին հարկադրելով ներդրումները շեղել խիստ անհրաժեշտ բարեփոխումներից:


Այս կորուստները նշանակում են ավելի փոքրաթիվ դպրոցներ և հիվանդանոցներ և ենթակառուցվածքների այլ հիմնական բաղկացուցիչներ, որոնք նպաստում են կյանքի որակին: Նման կորուստները կարող են նշանակել նաև ավելի փոքրաթիվ ուսուցիչներ, բուժքույրեր և բժիշկներ:

Ապօրինի ֆինանսական հոսքերը խաթարում են հանրության վստահությունը պետական կառույցների և օրենքի գերակայության հանդեպ՝ ստեղծելով միջավայր, որտեղ կազմակերպված հանցավորությունը կարող է ավելի հեշտությամբ ծաղկել՝ այդպիսով խոչընդոտելով ՄԱԿ-ի «Օրակարգ 2030»-ի Նպատակ 16-ի (խաղաղության, արդարության և ուժեղ կառույցների խթանում) ձեռքբերմանը:

ԱՖՀ-երի առգրավումը առաջնահերթություն չհամարելը նշանակում է, որ երկրները թուլացնում են իրենց իսկ ձեռքը՝ իրենց քաղաքացիների համար ՄԱԿ-ի «Օրակարգ 2030»-ի Կայուն զարգացման նպատակների (ԿՉՆ-ներ) ձեռքերման գործում: ԿՉՆ-ները ներառում են բազմաթիվ ոլորտներ, ինչպիսիք են աղքատության կրճատումը, կրթությունը, գեղեցիկ կյանքի հավասարությունը, խաղաղությունը, արդարությունը, ուժեղ կառույցները և օրենքի գերակայությունը:



Ինչպես կարող են վերականգնված ակտիվներն օժանդակել ԱլԳ տարածաշրջանի կրթության ոլորտներին



Կրթության ոլորտ

Որակյալ կրթությունը առանցքային նշանակություն ունի երկրի զարգացման համար՝ տնտեսական աճի վրա դրական ազդեցությամբ: Հետևաբար, պետական ներդրումները մարդկային կապիտալի մեջ կարևոր են՝ ապահովելու առողջ կյանք և խթանելու բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից («Օրակարգ 2030»-ի Նպատակ 3):


Թեև կրթության ոլորտին ավելի մեծ ուշադրություն և ֆինանսավորում է հատկացվել ԱլԳ տարածաշրջանի կառավարությունների կողմից, սակայն այս ոլորտը ընդհանուր առմամբ դեռևս հանդիպում է զգալի խոչընդոտների:

ԱլԳ որոշ երկրներում կրթության ոլորտները կարող են վտանգվել թվայնացման անբավարար մակարդակի (օրինակ, ուսուցիչներին հասանելի համակարգիչների բացակայությունը), 21-րդ դարում գործատուների պահանջած հմտություններին չհամապատասխանող դպրոցական ծրագրերի, ինչպես նաև

ուսուցիչների ցածր աշխատավարձերի հետևանքով: Այս վերջին երևույթը կարող է հանգեցնել նրան, որ ուսուցիչներն ավելի հակված լինեն, օրինակ, լավ գնահատականի դիմաց կաշառք ստանալուն (խորացնելով սոցիալ-տնտեսական անհավասարությունը աշակերտների միջև)¹⁶², իսկ երիտասարդ մասնագետները կարող են կրթության ոլորտում կարիերա սկսելու շահադրդվածություն չունենալ:

2,99 միլիարդ եվրոյի հաջող վերականգնումը (ԱլԳ տարածաշրջանում գնահատված ԱՖՀ-երի 10%-ը) կարող է ծածկել ավելի քան 6000 ուսուցչի տասը տարվա աշխատավարձի ծախսերը ողջ տարածաշրջանում՝ ազգային միջին աշխատավարձից 20%-ով ավելի չափով¹⁶³: Հավելումն, նման վերականգնված ակտիվները կֆինանսավորեն հագարավոր դպրոցական պարագաներ, ինչպիսիք են՝ գրքերը, գրիչները, մատիտները, գրասեղանները և դյուրակակիր համակարգիչները¹⁶⁴, ինչպես նաև դպրոցական սնունդը, որին ապավինում են բազմաթիվ ընտանիքներ:

Ավելի քան 6000 ուսուցչի 10 տարվա աշխատավարձ ԱլԳ ողջ տարածաշրջանում՝ իրենց միջին աշխատավարձի չափով (+20%)




Առողջապահության ոլորտ

Նույն կերպ, արդյունավետ և մատչելի առողջապահական ոլորտը մեծապես ապահովում է բնակչության բարեկեցությունը, օրինակ, նվազեցնելով մանկական և մայրական մահացության մակարդակը: Համաշխարհային տնտեսական ֆորումի գեկույցի համաձայն առողջապահության համակարգում ներդրումները մեծացնում են արտադրողականությունը՝ նվազեցնելով վատառողջությունը, որը խոչընդոտում է աշխատանքի հեռանկարներին և մարդկային զարգացմանը¹⁶⁵: ԱլԳ որոշ երկրներում առողջապահության ոլորտին առնչվող հարցերի թվում են երկար հերթերը, բժիշկների և բուժքույրերի ցածր աշխատավարձերը, կոռուպցիան: Մա է՛լ ավելի է սրվել COVID-19 համավարակի

պատճառով, երբ Եվրոպայի և աշխարհի գրեթե բոլոր երկրների առողջապահական համակարգերը զգալի սթրեսի տակ էին գտնվում:

Եթե ԱլԳ երկրները հաջողությամբ վերականգնեին ամեն տարի անօրինական ֆինանսական հոսքերի պատճառով կորցրածի միայն 10%-ը, ապա դա կծածկեր ավելի քան 6000 բժշկի և 6000 բուժքրոջ տասը տարվա աշխատավարձի ծախսերը ողջ տարածաշրջանում¹⁶⁶: Ճիշտ ընտրված ուսուցմամբ և տեխնիկական նյութերով ու գործիքներով ուղեկցվելու դեպքում նման մարդկային կապիտալը կամրապնդի ԱլԳ տարածաշրջանի առողջապահական ոլորտները՝ հանգեցնելով ավելի առողջ ընտանիքների և ավելի առողջ համայնքների:

Ինչպես կարող են վերականգնված ակտիվներն օժանդակել ԱլԳ տարածաշրջանի քրեական արդարադատության համակարգերին



Աջակցություն քրեական արդարադատության հետաքննություններին աջակցող անձնակազմին

Համարժեք վերապատրաստման դեպքում հոգեբանները կդառնան կարևոր գործիք ԱլԳ յուրաքանչյուր երկրի քրեական արդարադատության համակարգի համար՝ նպաստելով տուժածների, հատկապես կանանց և երեխաների բարօրությանը, ովքեր կարող են լինել բռնաբարության, ընտանեկան բռնության և մարդկանց թրաֆիքինգի զոհ:

Նույն կերպ, գրավոր և բանավոր թարգմանիչները կօգնեն արագացնել անդրսահմանային հետաքննությունները և ակտիվների վերականգնման գործընթացները. գրավոր թարգմանիչները կարող են արագացնել ՓԻՕ հարցումների ժամանակին և ճիշտ ներկայացումը օտարերկրյա իրավագործության տարածքներին, իսկ

բանավոր թարգմանիչները կարող են ավելի ճկուն դարձնել միջսահմանային փոխգործողությունները օտարերկրյա իրավագործության տարածքների գործընկերների հետ:


նայած այն հանգամանքին, որ զրեթե բոլոր կազմակերպված հանցավոր խմբերը շահույթ են հետապնդում, ԱլԳ տարածաշրջանի բոլոր երկրները դարձյալ պետք է զուգահեռ ֆինանսական հետաքննությունները ներառեն որպես ստանդարտ գործելակերպ այն դեպքերում, որոնք վերաբերում են եկամտաստեղծ լուրջ հանցագործություններին: Այդպես վարվելու համար նրանք պետք է ֆինանսական վերլուծաբաններ ընդգրկեն դատախազությունում և իրավապահ մարմինների գրասենյակներում:

Հատկանշական է, որ Վրաստանի դատախազությունը և Վրաստանի Պետական անվտանգության ծառայության հակակոռուպցիոն գործակալությունը աշխատանքի են ընդունել համապատասխանաբար երկու և չորս ֆինանսական վերլուծաբանների, ովքեր օգնում են քննիչներին և դատախազներին գուգահեռ ֆինանսական հետաքննություններում: Դատախազների և ոստիկանության աշխատակիցների մեծ մասը ֆինանսական փորձագետներ չեն: Բանկային և այլ ֆինանսական գործարքները պետք է վերլուծվեն ավելի մասնագիտական մակարդակով՝ փողերի լվացումը և այլ ապօրինի ֆինանսական հոսքերը (ներառյալ հարկերից խուսափելը) բացահայտելու նպատակով, և պետք է հնարավոր լինի այս տեղեկությունները թարգմանել և փոխանցել

դատախազներին և դատավորներին (կամ հարկային մարմիններին):

Եթե ԱԳ երկրները հաջողությամբ վերականգնեին ԱԳ տարածաշրջանում տարեկան մոտավոր կորսված գումարների միայն 10%-ը, և եթե դրանք ներդրվեին իրավապահ մարմինների կարողությունների բարձրացման գործում, դա կծածկեր ծախսերի լայն շրջանակ: Օրինակ, կծածկեր ավելի քան 1600 հոգեբանի, գրավոր և բանավոր թարգմանչի և ֆինանսական վերլուծաբանների տասը տարվա աշխատավարձի ծախսերը¹⁶⁷: Ընդհանուր գումարը թույլ կտար նաև ներդրումներ կատարել տեխնիկական սարքավորումներում, ինչպիսիք են համակարգիչները և ակտիվների հետազոծման համապատասխան ծրագրակազմը:

Ինչպես կարող են վերականգնված ակտիվներն օժանդակել ԱԳ տարածաշրջանի իրավապահ ոլորտներին



Աջակցություն ԱԳ տարածաշրջանի դատական համակարգին և ոստիկանությանը

Մոյն ուսումնասիրությունը քննել է ԱԳ երկրներում իրավապահ ոլորտի որոշ կարիքներ և թույլ կողմեր: Կարծես ի հայտ եկող հիմնական խնդիրներից մեկը իրավապահ ոլորտում ներգրավվածների շատ ցածր աշխատավարձն է ԱԳ բոլոր վեց երկրներում: Ինչպես կրթության ոլորտում, այս երևույթը կարող է հանգեցնել նրան, որ ավելի փոքր թվով երիտասարդ, մոտիվացված անհատներ ցանկանան կարիերա սկսել այս ոլորտում, ինչպես նաև կարող է նպաստել այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ կաշառք ընդունելը կարող է հարմար դառնալ: Այս դինամիկան կարող է խարխլել արդարադատության ոլորտի կառույցների հանդեպ քաղաքացիների վստահությունը և հարաճուն կերպով խրախուսել մի միջավայր, որտեղ կոռուպցիան և կազմակերպված հանցավորությունը փոխադարձաբար ամրապնդում են միմյանց՝ ի հաշիվ հասարակության և պետության:


Մոտիվացված դատավորներին և ոստիկաններին աշխատանքի ընդունելը այս կատեգորիայի աշխատողների համար արդեն իսկ գոյություն ունեցող ամենաբարձր միջին աշխատավարձով հավելյալ 20 % բարձրացումով, կարող է

հանգեցնել կաշառքի հանդեպ խոցելիության նվազմանը, քանի որ ցածր աշխատավարձերը հաճախ նշվում են որպես կոռուպցիայի նկատմամբ հակվածության բարձր ռիսկ¹⁶⁸: Այնուամենայնիվ, աշխատավարձերի բարձրացումը բավարար չէ կոռուպցիայի նվազեցման համար՝ չարաշահումների, ռեսուրսների և աշխատակազմի արդյունավետ կառավարման և վերահսկողության բացակայության պայմաններում¹⁶⁹:

ԱԳ երկրներում զնախառված ապօրինի ֆինանսական հոսքերի ընդամենը 10%-ի հաջող վերականգնումն ամեն տարի կծածկի 6000 ոստիկանի (ամեն երկրում՝ 1000 ոստիկանի) 20 տարվա աշխատավարձի ծախսերը՝ նկատի ունենալով ԱԳ յուրաքանչյուր երկրում այս կատեգորիայի աշխատողների ամենաբարձր միջին աշխատավարձը և ավելացնելով 20 % բարձրացում¹⁷⁰:

Նույն կերպ, ԱԳ երկրներից յուրաքանչյուրը կարող է աշխատանքի ընդունել 500 լրացուցիչ դատավորի, ընդհանուր առմամբ՝ 3000 դատավոր, իրավաբանական ոլորտում ամենաբարձր մասնագիտական աստիճանի ազգային միջին աշխատավարձով գումարած 20 % (15 տարի)¹⁷¹:

Ինչպես կարող էին վերականգնված ակտիվները ֆինանսավորել կարևորագույն նախագծերը



Կարևորագույն նախագծերի ֆինանսավորում

Արևելյան գործընկերությունն օգտվում է ինչպես Եվրոպական Միության, այնպես էլ այլ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող բազմաթիվ նախագծերից, ինչպիսիք են Համաշխարհային Բանկը, ԵԱՀԿ-ն և ՏՀՀԿ-ն: «Եմ-ն բիզնեսի համար» (EU4Business) նախաձեռնության միջոցով 2019 թ. ԱյԳ երկրներում փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) աջակցություն է տրվել մոտավորապես 790 միլիոն եվրո բյուջեով: Մոտ 116 նախագիծ օգնել են ՓՄՁ-ներին՝ բարելավելով ֆինանսավորման հասանելիությունը, խթանելով ավելի հաջող կարգավորումներ և ընձեռելով առևտրի հնարավորություններ: «Եմ-ն բիզնեսի համար» նախաձեռնությունը ԱյԳ տարածաշրջանում օգնել է ստեղծել 1,3 միլիարդ եվրոյի եկամուտ և գրեթե 120 000 նոր աշխատատեղ, միաժամանակ 5,9%-ով ավելացնելով արտահանումները¹⁷²:

COVID-19 համաճարակի պայմաններում 2020 թվականի հունիսին Եվրահանձնաժողովը ԱյԳ երկրներին տրամադրեց անհետաձգելի իրավիճակի փաթեթ՝ հրատապ կարիքների և միջնաժամկետ սոցիալական և տնտեսական տարածաշրջանային վերականգնման համար (մինչև 900 միլիոն եվրո)¹⁷³:

ԵՄ կողմից ֆինանսավորված այլ նախագծերի թվում են¹⁷⁴


- «Եմ-ն հանուն մշակույթի» («EU4Culture») ծրագիրը՝ 7,8 միլիոն եվրո բյուջեով, որն ուղղված է տարածաշրջանում սոցիալական զարգացման խթանմանը,
- «ԵՄ գործողություն ընդդեմ թմրամիջոցների և կազմակերպված հանցավորության (EU-ACT) նախագիծը՝ 14,5 միլիոն եվրո բյուջեով, որն ուղղված է կարողությունների զարգացմանը՝

ընդլայնելու տարածաշրջանային և միջսահմանային գործակցությունը կազմակերպված հանցավորության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում,

- «Ուսուցում և գործառնական գործընկերություն ընդդեմ կազմակերպված հանցավորության» (TOPCOP) ծրագիրը՝ 6 միլիոն եվրո բյուջեով, որն ուղղված է իրավապահ մարմինների գործակցության ամրապնդմանը կազմակերպված հանցավորության դեմ պայքարում:

Միասին վերցրած այս նախագծերի բյուջեները կազմում են ավելի փոքր գումար, քան՝ ԱԼԳ տարածաշրջանի ամեն տարի կորցրած ապօրինի ֆինանսական հոսքերի 10%-ը: ԱԼԳ տարածաշրջանում ապօրինի ֆինանսական հոսքերի 10%-ի վերականգնումը (2,99 միլիարդ եվրո)¹⁷⁵ կծածկեր վերոհիշյալ նախաձեռնությունների բյուջեները (1,7 միլիարդ եվրո) և թույլ կտար միջազգային աջակցությունն ուղղել այլ՝ առաջնահերթ կարիքների:

Ինչպես կարող էին վերականգնված ակտիվները ֆինանսավորել նվազագույն աշխատավարձի ծախքերը ԱԳ տարածաշրջանում



Նվազագույն աշխատավարձը ԱԳ ողջ տարածաշրջանում

Եթե Արևելյան գործընկերության տարածաշրջանը հաջողությամբ վերականգներ ապօրինի ֆինանսական հոսքերի պատճառով ամեն տարի կորցրածի միայն 10%-ը, ապա դա կծածկեր ավելի քան 240 000 մարդու (ամեն երկրից՝ մոտ 40 000) հինգ տարվա նվազագույն աշխատավարձի ծախսերը ողջ տարածաշրջանում ¹⁷⁶:

Որպես այլընտրանք, տարածաշրջանում ԱՖՀ-երի առնվազն 10 %-ի վերականգնումը կարող է ֆինանսավորել ԱԳ

տարածաշրջանի շուրջ 168 000 երիտասարդի (ամեն երկրից՝ մոտավորապես 28 000) հինգ տարվա նվազագույն աշխատավարձի ծախքերը ամսական, ենթադրենք, 300 եվրոյի չափով:

Գումարը պետք է պատկերացում տա պոտենցիալ օգուտի և օգտագործման մասին, եթե ԱԳ տարածաշրջանը հաջողությամբ վերականգներ փողի միայն մի փոքր մասը (10 %), որը կորսվում է ապօրինի ֆինանսական հոսքերի պատճառով:



04.

Առաջարկություններ

1. Կազմել տարածաշրջանային համաձայնագրեր և չափորոշիչներ՝ խրախուսելու կազմակերպված հանցավորության (և բարձր մակարդակի կոռուպցիայի) հետ կապված ակտիվների վերականգնումը

Փոխըմբռնման հուշագրերին և երկկողմ համաձայնագրերին գուգահեռ ԱԳ երկրները կարող են դիտարկել տարածաշրջանային համաձայնագրի կնքման հարցը, որն ուղղված կլինի ապօրինաբար ձեռքբերված ակտիվների առգրավման և բռնագրավման օպտիմալացմանը, ինչպես նաև այդ ակտիվների վերականգնմանը մասնակցությանը: Նման համաձայնագիրը կարող է սահմանել հատուկ չափորոշիչներ, որոնք պետք է ընդունել, ուղեցույցներ, որոնք պետք է հետևել (համաձայն ազգային օրենսդրական դաշտերի և առկա լավագույն գործելակերպերի), որոնք կվերաբերեն ակտիվների վերականգնումը դյուրացնելու համար համակարգողների նշանակմանը, ակտիվների առգրավման և բռնագրավման վերաբերյալ պատժամիջոց նախատեսող և պատժամիջոց չնախատեսող որոշումների ճանաչմանը, հնարավորության դեպքում, հեռակա կարգով կայացված վճիռների ճանաչմանը, երբ Հայցող Պետությունը կարող է ցույց տալ, որ արել է ողջամտորեն հնարավոր ամեն բան՝ ամբաստանյալին իր դեմ հարուցված քրեական վարույթի մասին տեղեկացնելու համար և ամբաստանյալին տրամադրել է դատարանում պաշտպանվելու բոլոր ողջամիտ հնարավորությունները:

Նման համաձայնագիրը կարող է նաև սահմանել տեղեկությունների փոխանակման եղանակներ, ներառյալ, օրինակ, տրանսպորտային միջոցների գրանցման, հարկային տեղեկություններ, հողային ռեգիստրի և բանկային տեղեկություններ, ինչպես նաև հայտնի հանցակիցների և առնչվող տնտեսավարող սուբյեկտների մասին տեղեկություններ՝ պայմանով, որ դրանք օգտագործվեն բացառապես հետաքննության

նպատակների համար: Համաձայնագիրը կարող է նաև ներառել պարզեցված արձանագրություններ՝ արագացնելու միջսահմանային գործակցությունը և կարող է ընդգծել գուգահեռ ֆինանսական հետաքննությունների անցկացման կարևորությունը բոլոր եկամտաստեղծ լուրջ հանցագործությունների գործերով:

Ապօրինաբար ձեռքբերված ակտիվների վերադարձի և բաշխման հստակ շրջանակի ստեղծումը կարող է խրախուսել աջակցությունը երկրների միջև՝ արագացնելով ընթացակարգերը և գործակցության լավ օրինակ ծառայելով ԱԳ տարածաշրջանից դուրս գտնվող երկրների համար: Նման տարածաշրջանային համաձայնագիրը կարող է նաև խրախուսել ողջ տարածաշրջանում քաղաքացիական բռնագրավման մեխանիզմների ընդունումն ու իրականացումը և (կամ) համաձայնություն՝ ընդունելու ԱԳ տարածաշրջանում կայացված քաղաքացիական բռնագրավման որոշումները:

2. Ապահովել, որ կազմակերպված հանցավորության հետ կապված գործերին գուգահեռ մշտապես անցկացվեն ֆինանսական հետաքննություններ

ԱԳ երկրները պետք է լրջորեն մտածեն յուրաքանչյուր եկամտաստեղծ լուրջ հանցագործության հետաքննությանը գուգահեռ ֆինանսական հետաքննությունների անցկացման գործելակերպի ընդունման մասին: ԱԳ երկրները պետք է «փողի հետևից գնալը» համարեն ստանդարտ իրավապահ և դատախազական գործելակերպ՝ եկամտաստեղծ հանցագործությունների հետ կապված գրեթե բոլոր դեպքերում:

3. Ամրապնդել ներքին և միջազգային գործակցությունը

ԱԳ երկրները պետք է դիտարկեն ազգային մակարդակում ակտիվների վերականգնման գործընթացում (հետագծում, սառեցում, առգրավում, բռնագրավում, վերականգնում, կառավարում) միջկառույցային գործակցությունն արդյունավետ դարձնելու ավելի ուժեղ մեխանիզմներ: Նման մեխանիզմները պետք է ներառեն տեղեկությունների ժամանակին փոխանակման եղանակներ: Դերերը պետք է հստակորեն սահմանվեն ֆինանսական հետաքննության և ակտիվների վերականգնման գործընթացներում: Հստակ դերերը նաև կնպաստեն տարածաշրջանային և միջազգային առավել արդյունավետ և արգասաբեր գործակցությանը:

4. Ներդրումներ կատարել տարածաշրջանային ուսուցման, ուսումնական այցերի, աշխատաժողովների և գիտելիքների փոխանակման աշխատանքների մեջ

Ի լրումն ԵՄ փորձագիտական օժանդակության ծրագրերի միջոցով տրամադրվող ուսուցման կամ դրա հետ համատեղ, ԱԳ երկրները պետք է դիտարկեն իրավապահ մարմինների և դատական համակարգի աշխատողների, ինչպես նաև ֆինանսական վերլուծաբանների համար, ովքեր պետք է աջակցեն նրանց և մաքսային պաշտոնյաներին, տարածաշրջանային բարձր մասնագիտացված և նեղ մասնագիտական ուսուցման մեջ ներդրումներ կատարելու հարցը: Դրան կարելի է հասնել ուսումնական այցերի, հանդիպումների, աշխատաժողովների և խորհրդաժողովների կազմակերպման միջոցով, որտեղ ակտիվների վերականգնման և ապօրինի ֆինանսական հոսքերի ոլորտի բարձր մակարդակի փորձագետները կարող են ներկայացնել լավագույն գործելակերպերը: Սա իրավապահ մարմիններին և

համապատասխան շահագրգիռ կողմերին հնարավորություն կտա ավելի հաճախ հանդիպել՝ ամրապնդելով անդրսահմանային աշխատանքային հարաբերությունները:

Դասընթացները և կարողությունների զարգացման այլ միջոցառումներ պետք է ուղղված լինեն իրավապահ ոլորտում ներգրավված անձնակազմին (օրինակ, ֆինանսական վերլուծաբաններին)՝ նրանց տեղեկացնելու, օրինակ, ֆինանսական հետաքննության նոր և արդյունավետ մեթոդների մասին, ինչպիսիք են վիրտուալ արժույթով և «բլոկչեյն» (blockchain) տեխնոլոգիայով կատարված գործարքների բացահայտումը:

5. Իրականացնել կազմակերպված հանցավորության սպառնալիքների տարածաշրջանային գնահատումներ

ԱԳ տարածաշրջանում կազմակերպված հանցավորության միտումներն ու գործողության եղանակները (*modi operandi*) ավելի լավ բացահայտելու և քարտեզագրելու համար ԱԳ երկրները պետք է մտածեն կազմակերպված հանցավորության սպառնալիքների իրենց տարածաշրջանային գնահատումների մշակման մասին: Սա կօգնի մշակել տարածաշրջանին հատուկ ուղեցույցներ և առաջարկություններ, ինչպես նաև կտրամադրի տեղեկություններ, որոնք կօգտագործվեն քաղաքականություններ մշակելիս: Նման գնահատումների անցկացումը նաև կդրսևորի տարածաշրջանային կամք՝ կասեցնելու կազմակերպված հանցավորության բազմաթիվ սպառնալիքներ ԱԳ երկրներում: Նման գնահատումների և տեղեկությունների փոխանակման հիման վրա մաքսային և այլ իրավապահ մարմինների պաշտոնյաները կկարողանան ընտրել առավել հասցեական ուսուցում, որն անհրաժեշտ է ընթացիկ և նորահայտ սպառնալիքներին դիմակայելու

և առգրավումների ու բռնագրավումների արժեքավորությունը հասկանալու համար:

6. Երես առ երես անդրսահմանային երկխոսություն՝ առկա գործերին անդրադառնալու և դրանք լուծելու համար

Հաջողված փորձը ցույց է տվել անդրսահմանային գործընկերների հետ դեմ առ դեմ երկխոսության արժեքավորությունը՝ միջոց, որը, ինչպես ապացուցված է, ավելի արդյունավետ է և արդյունքամետ, քան վիրտուալ հանդիպումները կամ բացառապես գրավոր փաստաթղթերի փոխանակումը: ԱԳ երկրները պետք է լրջորեն դիտարկեն տարածաշրջանում ոստիկանության և դատախազության համակարգողների և այլ իրավագործության տարածքների իրենց գործընկերների հետ երես առ երես կանոնավոր երկխոսությունները խորացնելու մասին: ԱԳ երկրները պետք է մտածեն համապատասխան միջազգային կազմակերպությունների և Եվրոպական Միության գործակալությունների ու մարմինների հետ ավելի սերտ գործակցելու մասին՝ դյուրացնելու նման արդյունքամետ երկխոսությունները (օրինակ, հնարավորության դեպքում ծածկելու ծախսերը):

7. Ամրապնդել երկխոսությունը քաղաքացիական հասարակության հետ և ապահովել վերականգնված ակտիվների թափանցիկ կառավարում

ԱԳ երկրները պետք է մտածեն քաղաքացիական հասարակության և քաղաքացիների հետ կանոնավոր երկխոսության և հետադարձ կապի մեխանիզմների ուժեղացման մասին, հատկապես այն հարցում, թե որտեղ պետք է բաշխվեն հաջողությամբ

վերականգնված ակտիվները: Թափանցիկ հետադարձ կապի համակարգ ունենալը կխորացնի կառավարության որոշումներին հասարակության մասնակցության զգացումը, ինչպես նաև կնպաստի բացահայտված կարիքներին ավելի արագ արձագանքելուն, հատկապես՝ մեկուսացված համայնքների դեպքում: Քաղաքացիական կազմակերպությունների հետ նոր գործընկերությունների ձևավորումը կարող է ապահովել ակտիվների վերականգնման նորարարական մոտեցումներ և օգնել օգտվելու ԱՖՀ-երի մշտադիտարկման և հետաքննության համակարգերից: Պետք է նաև ուշադրություն դարձնել վերականգնված ակտիվների բաշխման արդյունավետության և թափանցիկության բարելավմանը, համայնքի կողմից աջակցվող ծրագրերի մշակմանը, որոնց պետք է բաշխվեն վերականգնված և լիկվիդացված ակտիվները՝ օգտագործելով, օրինակ, Իտալիայում, Հոնդուրասում և Միացյալ Թագավորությունում ընդունված քաղաքականությունները: Ակտիվների վերականգնման շրջափուլի այս փուլին անհրաժեշտության դեպքում կարող է օժանդակել արտաքին երրորդ կողմը, ինչպիսին է ՄԱԿ-ը կամ Համաշխարհային Բանկը:

8. Անօրինական ճանապարհով ձեռքբերված գույքի քաղաքացիական բռնագրավման օգտագործումը տարածաշրջանի քրեական արդարադատության համակարգերում սահմանել որպես կանոն և ոչ թե որպես բացառություն

ԱԳ երկրները պետք է դիտարկեն ակտիվների առգրավման և բռնագրավման համար քաղաքացիական բռնագրավման և այլ՝ պատժամիջոց չնախատեսող մեխանիզմների ընդունումը կամ ամրապնդումը: Փողերի լվացման գործերը հաճախ շատ երկարաձիգ են,

և բռնագրավման վերջնական օրդեր արձակելու համար կարող են պահանջվել տարիներ: Ի թիվս այլ ասպեկտների, սա հանրության մեջ ստեղծում է հաճախ արդարացված այն ընկալումը, որ քրեական արդարադատության համակարգը չափազանց դանդաղ է գործում ակտիվների վերականգնման հարցում: Այս պատճառներով ԱԳ երկրները պետք է մտածեն ակտիվների առգրավման և բռնագրավման պատժամիջոց չնախատեսող մեխանիզմների ստեղծման և (կամ) ուժեղացման մասին՝ առանց գուգահեռ առկա քրեական հետաքննության պահանջի: Եթե իրականացվում է քաղաքացիական բռնագրավում (ըստ գործի էության՝ *in rem* վարույթ (առավելագույն դատավարություն՝ դարձյալ պատշաճ ընթացակարգով ցանկացած անձի համար, ով ցանկանում է պահանջել այդպիսի գույքի նկատմամբ սեփականության իրավունքը), դա կարող է ակտիվների բռնագրավման ժամանակը կրճատել մի քանի տարուց մինչև մի քանի ամիս, ինչն արդեն ցույց է տվել Ուկրաինան՝ քաղաքացիական բռնագրավման իր նոր սկիզբ առնող կիրառմամբ: Սա բարձրացնում է հանրային վստահությունը դատական համակարգի հանդեպ (և կարող է ֆինանսավորում բերել իրավապահ մարմիններին, որոնց առաջադրանքը կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարելն է):

9. Մեղմել այն չափը, որով ապօրինաբար ձեռքբերված ակտիվները պետք է կապված լինեն կոնկրետ հանցագործության հետ

ԱԳ երկրները, որոնք դեռ չեն որդեգրել այս մոտեցումը, պետք է մտածեն այն չափը մեղմելու, որով դատարանները պետք է որոշեն, թե ակտիվները կապված են հանցավոր գործունեության հետ, հատկապես փողերի լվացման գործերով (օրինակ, որոշել,

որ ավելի հավանական է, որ ակտիվները կապված են հանցավոր գործունեության, այլ ոչ թե կոնկրետ ամսաթվին կատարված կոնկրետ հանցագործության հետ): Առանց դրա, օրենքների ոգին և մտադրությունը, որոնք դատարաններին թույլ են տալիս նման վճիռներ կայացնել, կարող են շարունակել դառնալ սնամեջ ու անօգուտ¹⁷⁷: Սա կարող է ամրապնդվել, օրինակ, տարածաշրջանային համաձայնագրի միջոցով, որը հստակ սահմանում է չափորոշիչները, որոնք պետք է ԱԳ երկրները բավարարեն այս առումով, որպեսզի ապահովվի որոշ աստիճանի ներդաշնակություն:

10. Ապահովել, որ ողջ տարածաշրջանում քրեական արդարադատության համակարգերը բոլոր հանգամանքներում շարունակեն վարույթներն այն անձանց ակտիվների դեմ, ովքեր մեղադրվում են եկամտաստեղծ լուրջ հանցագործությունների մեջ

ԱԳ երկրներում, որոնք դեռևս չեն որդեգրել այս մոտեցումը, պետք է թույլատրվի վարույթ ապօրինաբար ձեռքբերված ակտիվների դեմ, նույնիսկ եթե ամբաստանյալի գտնվելու վայրն անհայտ է, քանի որ նա փախուստի մեջ է (պայմանով, որ Պետությունը ցույց է տալիս, որ արել է ողջամիտ ամեն բան՝ ամբաստանյալին ծանուցելու համար): Հավելումն, ապօրինաբար ձեռքբերված ակտիվների նկատմամբ վարույթը պետք է շարունակվի, նույնիսկ եթե ամբաստանյալը մահանա նախքան քրեական գործի ավարտը, կամ եթե համարվի մտավոր կերպով կամ ֆիզիկապես ոչ պիտանի՝ գործին մասնակցելու համար:

Սա համահունչ է այն սկզբունքին, որ օրինախախտները չպետք է շահույթ ստանան իրենց գործունեությունից, նույնիսկ եթե պարզվի, որ հանցավոր ծագում ունեցող ակտիվներն այլոց անունով

են կամ գտնվում են այլոց տիրապետման տակ, բացառությամբ նրանց, ովքեր այդ ակտիվները ձեռք են բերել բարեխղճորեն և առանց դրանց ապօրինի ծագման մասին իմանալու:

Տարածաշրջանային գործակցության համաձայնագրերի միջոցով տարածաշրջանային մակարդակում կատարման ենթակա հստակ նպատակների և չափորոշիչների սահմանումը, էլ ավելի կամրապանդի խթանի ԱԳ ազգային կառավարությունների՝ այս ուղղությամբ մշակվող քաղաքականությունների նախագծերը:

11. Հրապարակել հստակ և միանշանակ քաղաքական հայտարարություններ ԱՖՀ-երի / ՓԼ և ակտիվների վերականգնման վերաբերյալ

ԱԳ երկրները պետք է հրապարակեն հստակ և միանշանակ հայտարարություններ և քաղաքականություններ՝ կապված ԱՖՀ-երի/ՓԼ հետ, ինչպես նաև կազմակերպված հանցավոր գործունեության (և կոռուպցիայի) հետ կապված ակտիվների առգրավման և բռնագրավման ուղղությամբ անդրսահմանային գործակցությունն առավելագույնի հասցնելու առաջնահերթության մասին: Նման քաղաքականության մասին հայտնի դարձնելը կարող է շարժառիթ ստեղծել իրավապահների, մաքսային և հարկային մարմինների համար՝ բարելավելու արդյունքները առգրավումների և բռնագրավումների առումով:

12. Խստացնել վերահսկողությունը ֆինանսական հաստատությունների նկատմամբ

Հարկավոր է ուշադրություն դարձնել ֆինանսական հաստատությունների

նկատմամբ վերահսկողության խստացմանը, որպեսզի հաղորդեն կասկածելի գործարքների մասին և հաջողությամբ բացահայտեն բանկային հաշիվների, ընկերությունների և հավատարմագրային հիմնադրամների իրական շահառուներին: Ֆինանսական հատվածը հաճախ կարող է այնքան էլ զգոն չլինել նման հաղորդումներ տալու հարցում և պատշաճ կերպով չհայտնել կասկածելի գործունեության մասին, քանի դեռ չեն վերլուծվել նշանակալի պատժամիջոցները, ինչպիսիք են բանկային գործունեության կասեցման օրդերները կամ որոշակի կազմակերպությունների մշտական փակման օրդերները: Այլ տարածաշրջանների հաջող փորձը ցույց է տվել, որ հաշվետու կազմակերպությունները (ներառյալ բանկերը) արագորեն բարելավում են իրենց հաղորդումների որակը և ժամանակին լինելը, երբ կանգնում են կասեցման կամ փակման իրական սպառնալիքի առաջ:

13. Իրականացնել տարածաշրջանային իրազեկման երկարատև արշավներ և շահերի պաշտպանության գործողություններ՝ ընդդեմ խարդախ գործողությունների

Հաշվի առնելով, որ խարդախությունը (և ավելի ու ավելի շատ՝ առցանց խարդախությունը) տարածված հանցագործություն է ԱԳ տարածաշրջանում (ինչպես նաև այլ տարածաշրջաններում), խարդախության նշանները ճանաչելու վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության բարձրացումը խիստ շահեկան կլինի ԱԳ երկրների համար: Հասարակությունների խոցելի և մարզինալացված խմբերի հետ սերտացված շփումը կարող է բարձրացնել նրանց դիմակայունությունը կազմակերպված հանցավոր խմբերի և խարդախությամբ զբաղվող այլ խմբերի կողմից կիրառվող մեթոդների հանդեպ՝ այդպիսով սահմանափակելով հանցագործությունների

ծաղկման հնարավորությունը: Սա կարող է ամրապնդվել՝ ԱԳ երկրների միջև հանրային իրազեկման արշավների մշակման և իրականացման հաջող փորձի փոխանակման եղանակներ սահմանելու միջոցով, և տարածաշրջանային գործակցության լավ օրինակ կծառայի գլոբալ մակարդակում:

14. Խստացնել կանխիկի օգտագործման կարգավորումները

ԱԳ երկրները կարող են ենթակա լինել փողերի լվացման համեմատաբար բարձր ռիսկի՝ կանխիկ դրամի օգտագործման հետ կապված մեղմ կանոնների և գործելակերպերի պատճառով: Սա կարող է բարելավվել, օրինակ՝ վերացնելով բարձր արժողությամբ թղթադրամները, սահմանելով շեմեր կանխիկ վճարումների համար և, եթե դեռևս չեն կիրառվում, խթանել էլեկտրոնային այլընտրանքները, ներառյալ բոլոր աշխատավարձերի և ռոնդիկների էլեկտրոնային վճարումը: ԱԳ երկրներում կանխիկ դրամի օգտագործման կանոնների միջև որոշակի մակարդակի միասնականության ապահովումը կհանգեցնի ԱԳ ավելի ուժեղ տարածաշրջանի, որտեղ երկրները, որքան որ դա ողջամտորեն հնարավոր է, կլինեն ներդաշնակեցված՝ ավելի սակավ բացթողումներով, որոնք կարող են չարաշահել հանցագործները:

15. Ներդնել ընդլայնված բռնագրավման կիրառումը ողջ տարածաշրջանում

ԱԳ երկրները պետք է մտածեն ընդունելու կամ ամրապնդելու այնպիսի օրենսդրական դաշտեր (եթե այդպիսիք դեռևս գոյություն չունեն), որոնք ցույց են տալիս, որ եթե ամբաստանյալը մեղադրվում է եկամտաստեղծ լուրջ հանցագործություն մեջ, ապա դատարանը կարող է իր հայեցողությամբ ընդլայնված բռնագրավման

օրդեր արձակել, օրինակ, օրդեր այն մասին, որ ներկայումս գոյություն ունի իրավական կանխավարկած, որ ամբաստանյալի բոլոր եկամուտները և ակտիվները, որոնք ձեռք են բերել, օրինակ, վերջին հինգից տասը տարվա ընթացքում, պետք է համարվեն ապօրինի ձեռքբերված, բացառությամբ այն դեպքերի, երբ ամբաստանյալը կարող է հերքել այս կանխավարկածը: Ապացուցվել է, որ ընդլայնված բռնագրավումը շատ օգտակար գործիք է ակտիվների ապօրինի ձեռքբերման դեմ պայքարելու և դրանց վերականգնումն ապահովելու համար:

16. Անհիմն հարստացման վարույթի կիրառումն ընդունել որպես նորմ քրեական արդարադատության համակարգում

ԱԳ երկրները պետք է մտածեն ընդունելու ճկուն մեխանիզմներ (եթե այդպիսիք դեռևս ներդրված չեն) ինչպիսիք են անհիմն հարստացումը կամ չբացատրվող հարստությունը: Դրանց միջոցով Պետությունը դարձյալ պետք է ցույց տա Դատարանին, որ անհատի ակտիվները զգալիորեն գերազանցում են նրա հայտարարագրած եկամուտը, օրինակ, հղում կատարելով անհատի հարկային հայտարարագրերին կամ, հնարավոր է, հղում կատարելով պետական պաշտոնյայի ունեցվածքի տարեկան հայտարարագրին: Պետության կողմից նման բեռը կրելուց հետո ամբաստանյալը կարող է դա հերքել ապացույցներով, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են այդ ակտիվները ձեռք բերվել օրինականորեն: Բավարար ապացույցներ չտրամադրելը կհանգեցնի նման ակտիվների բռնագրավման օրդերի: Անհիմն հարստացման կամ չբացատրվող ունեցվածքի օրդերների մեխանիզմները հաջողությամբ կիրառվել են բազմաթիվ երկրներում, այդ թվում, օրինակ, Միացյալ Թագավորությունում:

17. Ավելացնել մեղքի ընդունման գործարքների և քրեական գործերի լուծման կիրառումը ԱԳ տարածաշրջանում

ԱԳ երկրները պետք է մտածեն քրեական գործերի լուծման ավելի ճկուն մեխանիզմների կիրառման մասին: Դա կարելի է անել՝ ամբաստանյալին թույլ տալով վերադարձնել ապօրինի կերպով ձեռքբերված ակտիվները՝ ավելի մեղմ պատժի դիմաց: Դատախազների և դատավորների՝ մեծաթիվ գործերով ծանրաբեռնվածության լույսի ներքո՝ մեղքի ընդունման գործարքի կիրառումը կարող է զգալիորեն արագացնել դատավարությունը, նվազեցնել ծանրաբեռնվածությունը և խորացնել արդարադատության արդյունավետ իրականացման հանրային դրական ընկալումը:

18. Իրականացնել վիրտուալ ակտիվների ռիսկերը բացահայտելու և մեղմելու քաղաքականություն

Պետք է հաշվի առնել քաղաքականությունը կանոնավոր կերպով վերանայելու հարցը և ապահովել, որ համապատասխան պաշտոնյաներին պարբերաբար տրամադրվի թարմացված ուսուցում՝ կրիպտոարժույթի չարաշահումից բխող ռիսկերը բացահայտելու և մեղմելու նպատակով: Աշխարհի ոչ մի տարածաշրջան դեռևս չի մենաշնորհել փորձագիտությունն այս ոլորտում. ներդրումները նորահայտ տեխնոլոգիաներում (ներառյալ բարելավված ալգորիթմների), որոնք օգտագործվում են կասկածելի գործարքները և կրիպտոարժույթների չարաշահումը բացահայտելու կամ հանցավոր նպատակներով օգտագործվող բլոկչեյնները (blockchains) «ապարզելափակելու» համար, օգտակար կլինի ԱԳ երկրների համար և ԱԳ տարածաշրջանին հնարավորություն կընձեռի լինել այս ոլորտի առաջատարներից:

19. Ապահովել, որ ԱԳ յուրաքանչյուր երկրում գոյություն ունենան ակտիվների վերականգնման հատուկ գրասենյակներ (կամ նույնպիսի մեխանիզմներ)՝ անդրսահմանային համագործակցությունը դյուրացնելու համար

Ապացուցված է, որ ապօրինաբար ձեռքբերված ակտիվներ հետագծման, սառեցման, առգրավման, բռնագրավման և վերականգնման համար մեկ համակարգող գրասենյակ ունենալը ակտիվների վերականգնման ամենաարդյունավետ մեխանիզմն է: Ահա թե ինչու, օրինակ, ամբողջ Եվրամիությունում գոյություն ունեն հատուկ ARO-ներ: ARO-ները, որպես կանոն, իրավապահ մարմինների խնդրանքով իրականացնում են ապօրինի եկամուտներ ստեղծելու մեջ կասկածվող անձանց ակտիվների հետագծում, և առգրավվելուց կամ բռնագրավվելուց հետո կառավարում են այդ ակտիվները: Ի հակադրություն, իրավապահ մարմինները (օրինակ՝ ոստիկանությունը և դատախազությունը) ունեն նման ակտիվների փաստացի բռնագրավման դեր: Նման ARO-ների տեղակայումը, օրինակ, գլխավոր դատախազի գրասենյակում կամ Ներքին գործերի նախարարության (ոստիկանության) ներքում ներկայացնում է շահերի բախման վտանգ. ակտիվների առգրավման համար պատասխանատու կազմակերպությունը չպետք է լինի նույն կազմակերպությունը, որը պատասխանատու է այդպիսի առգրավված ակտիվների կառավարման համար, քանի որ դա կարող է շարժառիթ տալ անհիմն առգրավումների: Այսպիսով, անհրաժեշտ են առանձին ARO-ներ: Նման ARO-ների աշխատակազմում պետք է ընդգրկվեն անհատներ, ովքեր մեկ հարկի տակ ունեն բազմաթիվ տվյալների շտեմարանների (օրինակ՝ հողային ռեգիստր, տրանսպորտային միջոցների ռեգիստր, հարկային տվյալների շտեմարան, բիզնեսների ռեգիստր և բանկային գրանցումներ)՝ աջակցելու

նստիկանությանը և դատախազությանը՝ տրամադրելով ամփոփ միջկառույցային հաշվետվություններ՝ հանցավոր գործունեություն իրականացնելու մեջ կասկածվող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների և (կամ) հայտնի հանցակիցների տնօրինության տակ գտնվող ակտիվների վերաբերյալ՝ հաշվի առնելով այն փաստը, որ ակտիվների լվացումը հիմնականում չի իրականացվում այդ ակտիվները տնօրինողների անունով: ԱԳ երկրները պետք է ապահովեն, որ նման ARO-ները համարված լինեն որակյալ և պատրաստված կադրերով՝ մրցունակ աշխատավարձերով՝ հոսունությունը կանխելու նպատակով, և պետք է ապահովեն, որ աշխատակազմը շարունակաբար տեղեկացվի ակտիվների հետագծման և կառավարման ամենաթարմ գործելակերպերի վերաբերյալ:

20. Կազմակերպված հանցավորության և բարձր մակարդակի կոռուպցիայի դեմ պայքարող մասնագիտացած դատախազների և մասնագիտացված դատարանների ստեղծում:

ԱԳ երկրները պետք է ուշադրություն դարձնեն մասնագիտացված դատախազությունների ստեղծմանը և մասնագիտացած դատավորների պատրաստմանը՝ դիտարկելու կազմակերպված հանցավոր գործունեության (կամ եկամտաստեղծ այլ լուրջ հանցագործությունների, օրինակ, կոռուպցիայի) հետ կապված գործերով վճռի կայացումը՝ առավել արդյունավետ կերպով նման հանցավորության հետ կապված ակտիվների առգրավման և բռնագրավման օրդերներ տրամադրելու լիազորություններով: Նման լիազորությունները պետք է ներառեն ակտիվների բռնագրավման օրդեր տրամադրելու հնարավորությունը, եթե ապացուցվի, որ դրանք կապված են ընդհանրապես հանցավորության հետ, և պարտադիր չէ, որ կապված լինեն կոնկրետ օրը կատարված կոնկրետ հանցագործության հետ: Պետք է բացառություններ արվեն երրորդ կողմի բարեխիղճ շահառուների համար, ովքեր ստացել կամ գնել են գույք՝ առանց ողջամիտ իմացության, որ այդ ակտիվները հանցավոր գործունեության արդյունք են:

Առնչվող հրատարակություններ

Ապօրինի ֆինանսական հոսքերը և ակտիվների վերականգնումը Թունիսում

<http://www.unicri.it/Publications/Illicit-Financial-Flows-and-Asset-Recovery-in-Tunisia>

Ապօրինի ֆինանսական հոսքերը և ակտիվների վերականգնումը Ուկրաինայում

<http://www.unicri.it/Publications/Illicit-Financial-Flows-and-Asset-Recovery-in-Ukraine>

Ապօրինի ֆինանսական հոսքերը և ակտիվների վերականգնումը Ադրբեյջանի Հանրապետությունում

<http://www.unicri.it/News/Illicit-Financial-Flow-Asset-Recovery-Republic-Azerbaijan>

Ապօրինի ֆինանսական հոսքերը և ակտիվների վերականգնումը Հայաստանի Հանրապետությունում

<http://www.unicri.it/Publication/Illicit-Financial-Flows-Asset-Recovery-Armenia>

Ապօրինի ֆինանսական հոսքերը և ակտիվների վերականգնումը Լիբիայում

<http://www.unicri.it/sites/default/files/2021-05/Libya%20EN.pdf>

Ապօրինի ֆինանսական հոսքերը և ակտիվների վերականգնումը Վրաստանում

<http://www.unicri.it/Publications/Illicit-Financial-Flows-and-Asset-Recovery-in-Georgia>

Ապօրինի ֆինանսական հոսքերը և ակտիվների վերականգնումը Մոլդովայի Հանրապետությունում

<http://www.unicri.it/Publications/Illicit-Financial-Flows-Asset-Recovery-Moldova>

UNICRI-ի ՄԱՍԻՆ

ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական իստիտուտը (UNICRI) հիմնադրվել է 1968 թ.՝ Տնտեսական և սոցիալական խորհրդի 1965 թ. ընդունված թիվ 1086 B (XXXIX) բանաձևի համաձայն, որը պահանջում էր ՄԱԿ-ի գործունեության ընդլայնում հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտում: Ինստիտուտը ինքնավար կառույց է և ղեկավարվում է իր Հոգաբարձուների խորհրդի կողմից: Աշխատելով հանցավորության կանխարգելման և վերահսկման ոլորտում բարելավված քաղաքականություններ և միջոցառումներ մշակելու և իրականացնելու իր լիազորությունների լայն շրջանակում, UNICRI-ի առաքելությունն է՝ առաջ տանել արդարադատությունը, հանցավորության կանխարգելումը, անվտանգությունը և օրենքի գերակայությունը հանուն խաղաղության, մարդու իրավունքների պաշտպանության և կայուն զարգացման: UNICRI-ի աշխատանքի հիմքում «Կայուն զարգացման օրակարգ 2030»-ի Նպատակ 16-ն է, որը կենտրոնացած է հանցավորությունից և բռնությունից գերծ խաղաղ, արդար և ներառական հասարակությունների կառուցումը խթանելու վրա: Արդարությունը, հանցավորության կանխարգելումը և օրենքի գերակայությունը հիմք են հանդիսանում աղքատության դեմ պայքարի և անհավասարության կրճատման համար՝ միաժամանակ նպաստելով տնտեսական աճին և կայունությանը և պաշտպանելով շրջակա միջավայրը: UNICRI-ն մեծապես աջակցում է կառավարություններին և միջազգային համայնքին՝ հաղթահարելու հանցավոր գործունեությունից բխող սպառնալիքները սոցիալական խաղաղության, զարգացման և քաղաքական կայունությանը համար:

UNICRI-ի նպատակներն են՝

- նպաստել հանցավորությանն առնչվող խնդիրների խորը ընկալմանը,
- խթանել քրեական արդարադատության համակարգի արդար և արդյունավետ աշխատանքը,
- աջակցել միջազգային փաստաթղթերի և այլ չափորոշիչների հարգմանը,
- օժանդակել իրավապահ մարմինների միջազգային գործակցությանը և իրավական փոխօգնության ապահովմանը:

Ինստիտուտի ներկայիս առաջնահերթություններն են՝

- Արհեստական բանականությունը և ռոբոտաշինությունը հանցագործությունների կանխարգելման և քրեական արդարադատության համատեքստում,
- Քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական (ռադիոլոգիական) և ատոմային ռիսկերի մեղմում,
- Կիրեռահանցագործություններ,
- Ապօրինի ֆինանսական հոսքեր և ակտիվների վերականգնում,
- Ազնիվ մետաղների և թանկարժեք քարերի ապօրինի շրջանառություն,
- Բնապահպանական իրավախախտումներ,
- Չքոսաշրջության և մեծ միջոցառումների անվտանգություն,
- Բռնի ծայրահեղականություն (ներառյալ բռնի ծայրահեղական հանցագործների վերականգնումը և վերաինտեգրումը),
- Խոցելի բնակչության և զոհերի պաշտպանություն,

